



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

5 (81)

ԵՐԵՎԱՆ

2018

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

5 (81), 2018

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.

Արամ Սաֆարյան

«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, ք.գ.թ.

Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն,

ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր

Հրանտիկ Հակոբյան

Իրավաբանության դոկտոր

Միհրան Դաբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Միլյուրքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Ջորջ Կոստոպուլու

Կիրենանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)

Մամվել Մանուկյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Սերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 5 (81), 2018թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
<i>Գլխավոր խմբագիր</i> Գագիկ Հարությունյան	Գագիկ Հարությունյան Նախիջևանի խնդիրը աշխարհակարգային փոփոխությունների ժամանակաշրջանում 4
<i>Գլխավոր խմբագրի տեղակալ</i> Արա Մարջանյան	Հրայր Փաշայան, Լիանա Բալայան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խոչընդոտները 11
<i>Պատասխանատու խմբագիր</i> Խոնարհիկ Քարառլյանյան	Սամվել Մանուկյան XX դարի պատմական հիշողությունը ուսանողների շրջանում 25
<i>Պատասխանատու քարտուղար</i> Լուսինե Բաղրամյան	Նանա Աղայան Կիբեռպատճառալիքները՝ ՀՀ ազգային անվտանգության նորագույն մարտահրավեր 38
Արեստակես Միմավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Սամվել Մանուկյան Վահագն Ազյան Վահրամ Հովյան	Վահրամ Հովյան Հայկական կալվածքների և պատմամշակութային ժառանգության խնդիրը Թուրքիայում 46
	Թաթուլ Մանասերյան Պատմական Հայաստանի տնտեսական դիվանագիտությունը. Սմբատ Սպարապետ 59
	Վահե Մարգարյան Հայերենին կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկումը վրացական մամուլում 68
	Լիանա Անանյան Աշխարհակարգի չինական աշխարհայացքային պատկերացման հարցի շուրջ 82
	Արամ Լ. Թավադյան Հարկային օրենսդրության առանձնահատկությունները ԵԱՏՄ-ում 93
	Իրինա Բարսեղյան-Կրպեյան Ղարաբաղյան շարժման նախապատրաստական փուլի պատմությունից. Թաթուլ Կրպեյանի և Իգոր Մուրադյանի համագործակցությունը 100

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գագիկ Հարությունյան՝

Բանալի բառեր՝ Նախիջևան, ժամանակային և տարածական տրիադաներ, հիբրիդային իրողություններ, գիտատեխնիկական-հոգևոր գերազանցություն, մարդկային ռեսուրս:

Արդի աշխարհակարգի փոփոխությունն ընթանում է տուրբուլենտ և հիբրիդային, ոչ գծային օրինաչափությունների ենթարկվող ռեժիմով, և նման գործընթացներում մեծ է «անորոշությունների» բաժինը [1-3]: Ի դեպ, դասական ֆիզիկայի օրենքներին չենթարկվող քվանտային ֆիզիկայի երևույթները բացատրելու նպատակով ֆիզիկոս Շրյոդինգերը ժամանակին ստեղծել էր իր հայտնի «անորոշությունների սկզբունքը»: Պատահական չէ, որ արդի իրողություններն ադեկվատ ըմբռնելու համար այսօր շրջանառության մեջ է մտնում «քվանտային քաղաքականություն» եզրը, քանի որ իրողությունների մի զգալի մասն արդեն չի ենթարկվում դասական քաղաքագիտության կանոններին: Աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների մասնակցությունը Նախիջևանի շուրջ ընթացող զարգացումներում վկայում է այն մասին, որ դրանք նույնպես ենթարկվում են գլոբալ հարթությունում իշխող բարդությունների տրամաբանությանը: Այստեղից հետևում է, որ Հայաստանին ուղղված մարտահրավերներին և սպառնալիքներին արդյունավետ արձագանքելը հնարավոր է միայն այն պարագայում, երբ դրանք ադեկվատ են ընկալվում, ինչը հնարավոր է միայն ժամանակային և տարածական «տրիադաների» կանոնների վրա հիմնված վերլուծաբանական համալիր մեթոդների կիրառման պարագայում, և այդ խնդրին մենք դեռ կանդրադառնանք:

Վերոնշյալի համատեքստում փորձենք դիտարկել Նախիջևանի խնդիրը: Անցյալի նախադեպերի համատեքստում հիշենք, որ 1849-1917թթ. Նախիջևանը (ինչպես և Սուրմալուն) գտնվում էր Էրիվանի մարզի, իսկ 1918-1920թթ.՝ Հայաստանի Առաջին հանրապետության կազմում: Սակայն

¹ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն:

1920թ. հուլիսին Նախիջևան մտավ 11-րդ Կարմիր բանակի Կովկասյան գունդը, ձևավորվեց հեղկում, որն էլ հայտարարեց Նախիջևանը խորհրդային հանրապետություն: Հեղկումն առաջարկեց Առաջին հանրապետության ղեկավարներին բանակցություններ սկսել, սակայն նրանք հրաժարվեցին և հարձակում ձեռնարկեցին մարզի ուղղությամբ: Վերջինս ձախողվեց, իսկ օգոստոսի 10-ին հեղկումի նախագահ Բակտաշևը զեկուցեց Ադրբեջանի Ժողկոմխորհի նախագահ Նարիմանովին, որ Նախիջևանը հանդիսանում է Ադրբեջանի անքակտելի մասը:

Ակնհայտ է, որ այս իրադարձություններում շատ բան համեմատելի է ներկայի հետ. անցյալում՝ սոցիալիստական հեղափոխություն, կայսրության փլուզում և Հայաստանի անկախացում, հայ - ադրբեջանա-թուրքական պատերազմ, Արևմուտքի ներկայության աճ տարածաշրջանում, խարիզմատիկ Քեմալ և բոլշևիկյան-թուրքական մերձեցում: Մեր ժամանակաշրջանում՝ լիբերալ հեղափոխություն, ԽՍՀՄ փլուզում և Երրորդ հանրապետության հռչակում, Արևմուտքի ազդեցության աճ տարածաշրջանում, Թուրքիայում հեռահար նպատակներ հետապնդող Էրդոհանի ի հայտ գալը, նոր «եվրասիական» Ռուսաստանի ձևավորում, որը համագործակցում է Թուրքիայի հետ:

Կան, անշուշտ, և սկզբունքային տարբերություններ: Այն տարիներին կորցրինք Նախիջևանը և Արևելահայաստանի մի մասը, այս անգամ ազատագրվեցին ԼՂՀ-ն և հարակից շրջանները:

Այս ամենի վերաբերյալ գրվել են բազմաթիվ պատմական աշխատություններ, սակայն առայսօր չկան օբյեկտիվ, հիմնավորված քաղաքական եզրակացություններ այն մասին, թե որոնք էին Հայաստանի ղեկավարների ռազմավարական բացթողումները և ադրբեջանա-թուրքական կողմի հաջողությունների պատճառները: Եթե փորձենք խիստ հպանցիկ գնահատել տեղի ունեցածը, պետք է արձանագրել, որ մեր կողմը, թերևս, թերագնահատեց փոխակերպված Ռուսական կայսրության՝ ԽՍՀՄ ներուժը, ինչն ավելի սթափ ընկալվեց ադրբեջանական քաղաքական ընտրանու կողմից:

Այսօր նույնպես ընթանում է Ռուսական կայսրության վերափոխում ԽՍՀՄ-ից՝ Ռուսաստանի Դաշնություն, որն էլ ձգտում է ԵԱՏՄ, ՀԱՊԿ ձևաչափերի միջոցով ինտեգրել եվրասիական տարածքի մի մասը և վերականգնել իր աշխարհաքաղաքական դիրքերը Ղրիմի միացումով, Դոնբասի և Լուգանսկի ինքնորոշման գործընթացներին աջակցելով և Սիրիայում ռազմական ակտիվությամբ: Այս ամենի համատեքստում տպավորություն է

ձևավորվում, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր ադրբեջանական կողմն ավելի պրագմատիկ է իր հարաբերություններում ՌԴ-ի և աշխարհաքաղաքական այլ դերակատարների հետ, քան ԵԱՏՄ և ՀԱՊԿ անդամ և ԵՄ-ի հետ համաձայնագիր կնքած Հայաստանը¹: Ի լրումն, ինչպես և նախկինում, Հայաստանն այսօր էլ զգալիորեն զիջում է Ադրբեջանին տնտեսական, ռազմական և մարդկային ռեսուրսներով: Բավական է նշել, որ Ադրբեջանի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (\$17.500 և 74-րդ տեղն աշխարհում) մոտ երկու անգամ գերազանցում է մեր ցուցանիշը (\$9.500, 110-րդ տեղն աշխարհում), իսկ ընդհանրական ադրբեջանական ՀՆԱ-ն գերազանցում է հայկականը շուրջ 3 անգամ (համապատասխանաբար \$36.2 մլրդ, 95-րդ տեղ և \$11.5 մլրդ., 129-րդ տեղ աշխարհում): Եվ այս վիճակագրության համատեքստում նկատենք, որ արդի փուլի վերաբերյալ հետազոտություններում նույնպես հիմնավորված չեն արցախյան պատերազմում մեր հաջողությունների օբյեկտիվ պատճառները, քանի որ նյութական ռեսուրսների առումով այն տարիներին մենք նույնպես զգալիորեն զիջում էինք Ադրբեջանին: Մինչդեռ ակնհայտ է, որ մեր հաղթանակն առաջին հերթին պայմանավորված էր հայկական կողմի գիտատեխնոլոգիական-հոգևոր գերազանցությամբ և այդտեղից բխող մարդկային ռեսուրսների բարձր որակով: Մակայն, ցավոք, այսօր իրավիճակն այս ոլորտում զգալիորեն փոխվել է, և Ադրբեջանի տեխնոլոգիական զարգացման ցուցիչները գրեթե հավասարվել են Հայաստանի ցուցանիշներին: Մասնավորապես, ՀՀ մարդկային կապիտալի ցուցիչը վարկանիշային աղյուսակում գրավում է 78-րդ տեղը, իսկ Ադրբեջանինը՝ 65-րդ², իսկ համաձայն *QS EECA University Rankings 2018* Վարկանիշավորման ցուցակի՝ 6 ադրբեջանական բուհեր անհամեմատ ավելի բարձր վարկանիշներ ունեն, քան ԵՊՀ-ն (ավելի մանրամասն տե՛ս [4]): Տեխնոլոգիական առումով հետ մնալու վառ օրինակ են Բաքվի ձեռքբերումները տիեզերական ոլորտում. նրանք ունեն երկու արբանյակ, և դա՛ այն դեպքում, երբ Երկրորդ հանրապետությունում ստեղծվել էին բոլոր նախապայմանները և ենթակառուցվածքներն այդ ոլորտի զարգացման համար. բավական է նշել Պարիս Հերոնու և Գրիգոր Գուրգադյանի անունները և նրանց հետ կապված աշխատանքները [4]: Այս ամենը ստեղծում է միևնույն տրամադրություններ ընդհանրապես հայ-ադրբեջանական հա-

¹ Տե՛ս, օրինակ, *Арешев А.*, Российский вектор» в мозаике внешней политики Азербайджана, <https://regnum.ru/news/polit/2494510.html>

² Human Capital Index 2018,

https://www.photius.com/rankings/human_capital_index_country_rankings_2018.html

կամարտության զարգացումների ապագայի վերաբերյալ, որի մասն է կազմում Նախիջևանյան խնդիրը:

Այսօր պետք է փաստել, որ այդ ինչ-որ չափով անկլավային տարածքը, ըստ ամենայնի, համալիր և մտածված ռազմավարություն իրականացնելու պարագայում, պետք է ստանար ռազմաքաղաքական-տնտեսական պատանդի կարգավիճակ: Սակայն իրականությունն այլ է, քանի որ ադրբեջանական կողմը կարողացավ Նախիջևանը վերածել տնտեսապես զարգացող և լավ սպառազինված մարզի, որը լրջորեն վտանգում է ՀՀ անվտանգությունը: Շնորհիվ ադրբեջանական մտածված քաղաքականության (այդ թվում նաև՝ տեղեկատվական ոլորտում), մարզի քաղաքական և տնտեսական հնարավորություններն այսօր ակտիվորեն ձգտում են օգտագործել ոչ միայն Թուրքիան և Իրանը, այլև Իսրայելը և այլն:

Նման դեպքերում առաջանում է բնական հարց՝ իսկ ի՞նչ անել: Այս համատեքստում անդրադառնանք արդեն վերը նշված նկատառումներին, որ արդի հիբրիդային իրողություններում ռազմավարություն մշակելը և որոշումներ ընդունելն առաջին հերթին ենթադրում են իրողությունների ադեկվատ ըմբռնում ժամանակային և տարածական «տրիադաների» համատեքստում: Այդպիսի մոտեցումը ենթադրում է կատարել հետևյալ քայլերը.

1. Ելնելով ներկայի իրողություններից՝ միջդիսցիպլինար վերլուծությունների միջոցով գնահատել հիմնախնդրի էությունը և կարևորությունը: Ստացված արդյունքները համադրել անցյալի նախադեպերի հետ;
2. Վերոնշյալ փուլերի վերլուծություններից բխող տեսակետները դիտարկել ապագայի վերաբերյալ հիմնավորված կանխատեսումների համատեքստում;
3. «Ժամանակային» մոտեցումներին զուգահեռ անհրաժեշտ է իրագործել «տարածական տրիադայի» կանոններին ենթարկվող պատկերացումների ձևավորում, ինչը ենթադրում է գնահատել ինչպես սեփական երկրի, այնպես էլ տարածաշրջանում և գլոբալ հարթությունում գործող դերակատարների հնարավոր գործողությունները, դրանցից բխող սցենարները քննարկվող հիմնախնդրի համատեքստում;
4. Վերը նշված վերլուծությունների հիման վրա մշակել խնդրի լուծման ռազմավարության ալգորիթմը:

Ներկայացված մոտեցումները հայտնություն չեն, և այդ ոճով են գործում մտավոր կապիտալի անհրաժեշտ ռեսուրսներ ու համապատասխան «ուղեղային կենտրոնների» (Ու Կ) համակարգ ունեցող երկրներում [5, 6]:

Նման մեթոդաբանությամբ փորձում են գործել նաև Ադրբեջանում, որտեղ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնում կատարվում են աշխատանքներ պատմական հիշողության ինստիտուցիոնալացման ուղղությամբ¹, իսկ Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը կից գործում է «Ֆուտուրոլոգների ընկերակցությունը»², որտեղ ներկայի միտումների և ապագայում սպասվող տարբեր սցենարների վերլուծության հիման վրա մշակում են դրանց նախապատրաստվելու քայլերը: Այս առումով հատկանշական է, որ անգամ հզոր տերություն դարձած Իսրայելը նախապատրաստվում է հնարավոր «վատ սցենարներին և պահեստային պլաններին»³:

Այս վերջինի առիթով պետք է հատուկ շեշտել, որ առայսօր Հայաստանում դեռևս չի ձևավորվել կանխատեսումներ կատարելու և հնարավոր սցենարների պատրաստվելու քաղաքական մշակույթը, ինչն ազգային անվտանգության տեսանկյունից լուրջ թերացում է: Նկատենք նաև, որ այս կամ այն հիմնախնդրի նկատմամբ վերը ներկայացված մոտեցումների հիման վրա համալիր ռազմավարություն մշակելը ենթադրում է ունենալ հատուկ պատրաստություն ունեցող վերլուծաբանական ռեսուրսներ: Մինչդեռ այդ ռեսուրսները ներկայում ակնհայտորեն բավարար չեն, և ստեղծված իրավիճակը թելադրում է լրացնել այդ բացը: Այդ խնդիրը լուծելու համար, բացի կրթական ոլորտում անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց, պետք է ձգտել նաև մոբիլիզացնել հայկական հանրության համապատասխան ռեսուրսները, մասնավորապես՝ լայնորեն կիրառելով առցանց ընկերակցություններ ձևավորելու առումով համացանցի ընձեռած հնարավորությունները:

Հոկտեմբեր, 2018թ.

¹ St' u, օրինակ, *Гарагезов Р.*, Коллективная память: Как создаются, сохраняются и воспроизводятся коллективные представления о прошлом, 2013г., <http://kniga.seluk.ru/k-istoriya/832190-9-rauf-garagezov-kollektivnaya-pamyat-kak-sozdayutsya-sohranyayutsya-vosproizvodiyatsya-kollektivnie-predstavleniya-proshl.php>

² Azerbaijan Future Studies Society (AFSS), www.futerstudies.az.

³ *Тьерри Мейсан*, Что ищет Израиль в далёкой Аргентине? <http://www.voltairenet.org/article198970.html>, (16.12.2017).

Աղբյուրներ և գրականություն

1. *Հարությունյան Գ.*, «Բարդությունների» աղեկվատ ընկալման ակտուալությունը, «Գլոբուս», #6(95), էջ 4, 2018:
2. *Бартош А.*, Туман гибридной войны, НВО, 33(1011), 2018.
3. *Бартош А.*, Обеспечить стратегическую стабильность на новом этапе (Гибридные вооруженные конфликты снижают эффективность традиционной дипломатии), НВО, #35(1013), 2018.
4. Կրիտիկական ենթակառուցվածքներ և ազգային անվտանգություն, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2018թ.:
5. *Арутюнян Г.*, Распад «системы» и формирование будущего, Ер., НОФ «Нораванк», 2011.
6. *Հարությունյան Գ.*, Ապագային պատրաստ լինելու խնդիրը, 21 ԴԱԸ, #4(80), էջ 5, 2018:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գազիկ Հարությունյան

Ամփոփագիր

Նախիջևանի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներին մասնակցում են աշխարհաքաղաքական խոշոր դերակատարներ, և այդպիսով այդ զարգացումները ենթարկվում են գլոբալ հարթությունում իշխող բարդությունների տրամաբանությանը: Այդ համատեքստում Հայաստանին ուղղված մարտահրավերներին արդյունավետ արձագանքելը ենթադրում է ժամանակային և տարածական «տրիադաների» կանոնների վրա հիմնված վերլուծաբանական համալիր մեթոդների կիրառում: Հոդվածում զուգահեռներ են տարվում 1918-1920թթ. գործընթացների և արդի իրողությունների միջև: Փաստվում է, որ այսօր ադրբեջանական կողմը կարողացել է Նախիջևանը վերածել տնտեսապես զարգացող և սպառազինված մարզի, որը լրջորեն վտանգում է ՀՀ անվտանգությունը: Առկա սպառնալիքներին արդյունավետ արձագանքելը, մասնավորապես, թելադրում է հիմնավորված կանխատեսումներ կատարելու մեթոդների յուրացում և հնարավոր սցենարներին պատրաստվելու քաղաքական-վերլուծաբանական մշակույթի ձևավորում:

ПРОБЛЕМА НАХИДЖЕВАНА В ЭПОХУ ИЗМЕНЕНИЙ МИРОУСТРОЙСТВА

Գագիկ Արությունյան

Резюме

В геополитических развитиях вокруг Нахиджевана участвуют крупные геополитические акторы, и таким образом эти процессы подпадают под логику сложностей глобального порядка. В этом контексте эффективная реакция на направленные против Армении вызовы предполагает применение комплексных методов, основанных на правилах временных и пространственных «триад». В статье проводятся параллели с процессами 1918-20гг. и современностью. Констатируется, что на сегодня азербайджанская сторона сумела превратить Нахиджеван в развивающуюся и оснащенную вооружениями область, представляющую серьезную угрозу безопасности РА. Эффективная реакция на имеющиеся угрозы, в частности, требует освоения методов обоснованного прогнозирования и формирование политико-аналитической культуры разработки вероятных сценариев.

THE PROBLEM OF NAKHICHEVAN IN THE ERA OF WORLD ORDER CHANGES

Gagik Harutyunyan

Resume

Major geopolitical players participate in the geopolitical developments around Nakhichevan and thus, these developments are subject to the logic of complexities that exist in the global dimension. In this context responding to challenges that Armenia faces implies application of analytical methods based on the temporal and space “triad” rules. The article draws parallels between the processes occurring in 1918-1920 and the modern realities. It is evident that Azerbaijan has managed to turn Nakhichevan into an economically developing and well-armed province that poses serious threats to the national security of Armenia. The effective response to the existing threats dictates the need to learn methods of substantiated forecasts and form a political-analytical culture of preparing for the possible scenarios.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ¹

Հրայր Փաշայան՝, Լիանա Բալայան՝

Բանալի բառեր՝ կոնֆլիկտի կողմեր, Ղարաբաղյան հակամարտություն, ձևախեղված բանակցություններ, հակամարտության կերպար, բանակցային գործընթաց, մասնագիտական պատրաստվածություն:

Խնդիրը. Վերջին շրջանում Ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող գործընթացները, մասնավորապես Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունների որդեգրած դիրքորոշումը, այն է՝ կարգավորման գործընթացի այս ձևաչափը չի կարող լուծել մի հարց, որի առանցքային մասնակիցներից մեկը ներգրավված չէ բանակցություններում, և որ Արցախի անունից կարող է խոսել Արցախի իշխանությունը², տարիներ շարունակ Արցախին որպես բանակցային կողմ անտրամաբանորեն մերժող Բաքվի իշխանություններին՝ նոր խնդրի առաջ կանգնեցրին: Կարելի է ենթադրել, որ ադրբեջանական կողմը, չունենալով որևէ հիմնավոր փաստարկ Արցախին ուղղակի բանակցություններից հեռու պահելուն ուղղված ապակառուցողական դիրքորոշումն առաջ տանելու համար, հերթական անգամ դիմել է վաղուց փորձված մեթոդին: Թերևս, այս համատեքստում են տեղավորվում նաև վերջին շրջանում ադրբեջանա-ղարաբաղյան շփման գծի տարբեր հատվածներում ադրբեջանական զինուժի տեղաշարժերն ու կուտակումները, հայ-ադրբեջանական սահմանագծում անընդհատ գրանցվող լարվածությունը և ռազմական գործողությունների վերսկսման մասին հայտարարությունները: Ի թիվս այլ խնդիրների, պաշտոնական Բաքուն դրանով փորձում է ի չիք դարձնել ՀՀ իշխանությունների որդեգրած նոր մոտեցումներն ու հանրային ռեսուրսը՝ պատերազմի վերսկսման սպառնա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

^{*} Արցախի պետական համալսարան, ք.գ.թ., դոցենտ:

^{**} Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի:

² <http://armenpress.am/arm/news/932930.html>

լիքն օգտագործելով Արցախին բանակցային գործընթացից հեռու պահելու ասանհիմն դիրքորոշումը պահպանելու համար:

Հաշվի առնելով Ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող զարգացումների արդիականությունն¹ ու այն հանգամանքը, որ հիմնախնդրի իրական կերպարը միջազգային հանրությանը, այդ թվում՝ բանակցություններում ներկայացնելը հակամարտության քաղաքական և իրավական կարգավորման առանցքային բաղադրիչն են, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել. ի՞նչ է հասկացվում *ղարաբաղյան հակամարտության կողմ հասկացության ներքո, ինչպե՞ս է ձևավորվել ներկայիս ձևախեղված բանակցային ձևաչափը, ի՞նչ պետք է անել համազգային կարևորության այս հարցում միասնական և իրավունքի տեսանկյունից հիմնավորված դիրքորոշում որդեգրելու համար:*

«Կոնֆլիկտի կողմեր» հասկացությունը մասնագիտական ուսումնասիրություններում. Անդրադառնալով «հակամարտության կողմեր» հասկացության պարզաբանմանը, պետք է ասել, որ մասնագիտական գրականության մեջ այս հարցում հստակություն և միակարծություն չկա: Ջ.Լատուն, խոսելով «կոնֆլիկտի կողմ» և «երրորդ կողմ» հասկացությունների մասին, դրանցից առաջինը սահմանում է երկրորդի համատեքստում. «Առաջին և երկրորդ կողմերն ունեն ուղղակի նպատակներ կամ ուղղակի շահեր կոնֆլիկտում կամ դրա ելքերում»: Ինչ վերաբերում է «երրորդ կողմ» հասկացության սահմանմանը, նա նշում է, որ «երրորդ» կողմը սոցիալական գիտության վերլուծության եզրույթ է, այլ ոչ թե մաթեմատիկական հասկացություն [1, էջ 254]: Այսինքն՝ Ջ.Լատուն «կոնֆլիկտի կողմ» ասելով նկատի է առնում կոնֆլիկտում ուղղակի շահեր ունեցողներին: Ի հակադրություն

¹ Հարցն արդիական է նաև ներքաղաքական դիսկուրսի տեսանկյունից: Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. մայիսի 9-ին Արցախում ունեցած մամուլի ասուլիսը, մասնավորապես Ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող հատվածը հիմնախնդրի շուրջ քննարկումների առիթ դարձան նաև հայ քաղաքական շրջանակներում: Մասնավորապես, ակտիվ բանավեճ ծավալվեց Նիկոլ Փաշինյանի արտահայտած այն մտքի առնչությամբ, որում նա Հայաստանի Հանրապետությունը համարել է հակամարտության կողմ: Պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանը Ղարաբաղյան կարգավորման շուրջ վարչապետի հայտնած դիրքորոշումները, մասնավորապես՝ Հայաստանի հակամարտության կողմ լինելու արտահայտությունը վտանգավոր համարեց (Վարչապետը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ հայտնեց մի շարք դիրքորոշումներ, որոնք, ըստ իս, կարող են նաև վտանգավոր լինել. <http://www.aravot.am/2018/05/12/956637/>): Դրան ի պատասխան ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը վերջինիս այս հարցում անգետ անվանեց (Լևոն Տեր-Պետրոսյան. Փաշինյանն այս հարցում միանգամայն ճիշտ է, իսկ Վիգեն Սարգսյանը՝ բացարձակ անգետ, <http://www.ilur.am/news/view/68122.html>): Հատկանշական է, որ բանավեճը նախևառաջ ծավալվեց նախկին բարձրաստիճան պաշտոնյաների միջև, որոնց զբաղեցրած պատասխանատու դիրքից պետք է ենթադրել, որ նրանք այն անձինք են, որոնք լավագույնս են տիրապետում հիմնախնդրի էությունը:

վերջինի, Փ.Վեյրը «կոնֆլիկտի կողմ» հասկացությունը սահմանում է լայն իմաստով, ըստ որի՝ կոնֆլիկտի կողմերը «...կոնֆլիկտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդգրկված և նրա ելքում նշանակալից շահեր ունեցող և որոշում կայացնող միավորներն են»։ Ընդ որում, հեղինակը նշում է, որ կոնֆլիկտի զարգացման ընթացքում երկրորդական կողմերը կարող են դառնալ հիմնական կողմեր և հակառակը¹։ Ի տարբերություն Ջ.Լաուի, որը «կոնֆլիկտի կողմ» ասելով հասկանում է միայն կոնֆլիկտում ուղղակի շահեր ունեցող կողմերին և ի հակադրություն Փ.Վեյրի, որը «կոնֆլիկտի կողմ» ասելով նկատի է առնում կոնֆլիկտի ոչ միայն հիմնական և երկրորդական կողմերին, այլ նաև երրորդ կողմերին, հայ ուսումնասիրողներից Է.Քերոբյանը կարծում է, որ «կոնֆլիկտի կողմ» հասկացությամբ նպատակահարմար է հասկանալ կոնֆլիկտի հիմնական և երկրորդական կողմերը, քանի որ վերջիններս կոնֆլիկտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդգրկված են և բնութագրվում են նրա ելքում համապատասխանաբար ուղղակի կամ անուղղակի շահերի առկայությամբ [2, էջ 254]:

Լ.Թուրխալյանի «Քաղաքական բառարանում» «հակամարտության կողմ է համարվում այն կողմը, որը մասնակցում է երկու կամ ավելի պետությունների միջև հայտարարված պատերազմին» [3, էջ 108]:

«Կոնֆլիկտի կողմեր» հասկացությունը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում «Կողմեր» հասկացության իրավաքաղաքական կարգավիճակը, թերևս, առաջին անգամ հստակեցվել է 1994թ. փետրվարի 18-ի «Կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին» արձանագրությունում [4], որը հետագայում հիմք է հանդիսացել հրադադարի հաստատման համար: Փաստաթղթի ներածականի առաջին նախադասությունը վերաբերում է հենց այդ հարցի ճշգրտմանը. «Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, Լեռնային Ղարաբաղի զինված կազ-

¹ Խոսելով կոնֆլիկտի կողմերի մասին՝ հեղինակն առանձնացնում է. (1) հիմնական կողմեր, «...որոնց նպատակները հանդիսանում են կամ նրանց կողմից ընկալվում են որպես անհամատեղելի, և որոնք ուղղակիորեն փոխազդում են՝ հետապնդելով այդ համապատասխան նպատակները», (2) Երկրորդական կողմեր, որոնք «...ունեն անուղղակի շահեր վեճի ելքում, սակայն նրանք չեն համարում իրենց ուղղակիորեն ներգրավված» և (3) շահագրգիռ երրորդ կողմեր, որոնք «...շահագրգրված են կոնֆլիկտի հաջող լուծման մեջ»: Hocker J., Wilmot W., *Interpersonal conflict*. USA: Brown and Benchmark Publishers, 1995, p. 161 (մեջբերումն ըստ Է.Քերոբյանի՝ Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը. տեսություն և իրականություն, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, № 4, էջ 254, Եր., 2011):

մավորումների լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ, այսուհետ՝ *Կողմերը*... Եվ արդեն փաստաթղթի առաջին կետում հստակեցվում է նրանց կարգավիճակը. «Կողմեր» եզրույթի օգտագործումը չի նշանակում որևէ այլ քաղաքական կամ իրավական կարգավիճակի ճանաչում՝ բացի սույն արձանագրության մեջ նշվածից»: Այսինքն՝ առկա ձևակերպումը վկայում է, որ փաստաթղթում Հայաստանի Հանրապետության անվան օգտագործումը չի նշանակել վերջինիս՝ որպես հակամարտության կողմի իրավական կամ քաղաքական կարգավիճակի արձանագրում: Պաշտոնական Բաքվի՝ Արցախի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու բարդույթը հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ հենց աղբյուրանական կողմի նախաձեռնությամբ է «կողմերի» կարգավիճակը հստակեցվել՝ ԼՂՀ իրավական կարգավիճակի ճանաչումը կանխելու համար¹:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ հասկանալի էն 1994թ. մայիսյան հրադադարի կնքման գործընթացում նշանակալից ավանդ ունեցած, 1992-1996թթ. Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար, Լեոնային Ղարաբաղի գծով ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Վ.Կազիմիրովի հիշատակումները [5]: Վերջինիս վկայությամբ՝ Հրադադարի համաձայնագրի առաջին տարբերակը պատրաստել է նույն հիմքով, ինչպես նախկինում՝ Բաքվի և Ստեփանակերտի միջև: «Բայց աղբյուրանցիները, ովքեր մինչ այդ ուղիղ 10 անգամ Ստեփանակերտի հետ ձևակերպել էին ռազմական գործողությունների սահմանափակման մասին փաստաթղթերը՝ առանց Երևանի մասնակցության, հիմա համաձայնում էին ստորագրել համաձայնագիրը միայն Հայաստանի ներկայացուցչի հետ, բայց առանց Լեոնային Ղարաբաղի հայերի:

...Օրվա վերջում շեյդար Ալիևը ևս մեկ անգամ խնդրեց զանգահարել Երևան և ձեռք բերել Հայաստանի ստորագրությունը: Ես զանգահարեցի, սակայն չէի մտածում, որ այնտեղ կհամաձայնեն ստորագրել: Բայց շուրջ

¹ Չնայած պետք է ասել, որ այդպիսի փաստաթղթեր արդեն կային: Այդպիսիք են՝ 1991թ. սեպտեմբերի 23-ի Ժելեզնովոդսկի հայտարարագիրը, 1992թ. սեպտեմբերի 19-ին ԱՀ-ի, ՀՀ-ի և Լեոնային Ղարաբաղի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների կողմից կնքված Սոչիի համաձայնագիրը, 1992թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված Սոչիի համաձայնագրի կիրառումն ապահովող ռազմատեսխնիկական արձանագրությունը, 1993թ. սեպտեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահի առաջարկած Հրատապ քայլերի ժամանակացույցը, 1994թ. փետրվարի 18-ի արձանագրությունը, Բիշքեկյան արձանագրությունը, Հրադադարի համաձայնագիրը, պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների հուլիսի 27-ի նամակը և այլն: Ռուսաստանի միջնորդությամբ և Բաքվի ու Ստեփանակերտի միջև ուղղակի կապերի մասին վկայող փաստաթղթերի մեծամասնությունը ներկայացրել է Վ.Կազիմիրովը: Տե՛ս Վ.Կազիմիրովի պաշտոնական կայքը՝ <http://vn.kazimirov.ru>.

մեկուկես ժամ հետո անսպասելի ստացա Երևանի համաձայնությունը, ինչը համապատասխանում էր հակամարտության կազմաձևման մեր հայեցակարգին: Ես ստիպված էի երկու տպագրված «ստորագրողների» միջև ձեռագիր ավելացնել. «Հայաստանի պաշտպանության նախարար» (դա երևում է նաև փաստաթղթի պատճենի վրա)¹: Այսինքն՝ այս վկայությունից ակնհայտ է դառնում նաև, որ պաշտոնական Երևանի կողմից դա կատարվել է առավելապես արյունահեղությունը դադարեցնելու և հակամարտության կարգավորման գործընթացը կառուցողական հուն տեղափոխելու համար: Մյուս կողմից՝ փաստ է նաև, որ ՀՀ-ն, 1994թ. մայիսին ստորագրելով հրադադարի հաստատման համաձայնագիրը, այնուհետև՝ 1995-ի փետրվարին, եռակողմ ձևաչափով ստանձնելով հրադադարի ամրապնդման և միջադեպերի հետաքննության պարտավորվածությունը² և մինչ օրս մասնակցելով հիմնախնդրի կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացին՝ ինքնըստինքյան դարձել է հակամարտության բանակցային կողմ:

Հասկացությունների դերը «հիմնախնդրի և կոնֆլիկտի» համատեքստում. Բաքվի կառուցողական դիրքորոշման պարագայում, իհարկե, կարելի է ընդհանրապես երկրորդական համարել հակամարտող կողմերի քանակի ու կարգավիճակի հետ կապված հարցերը, քանի որ նպատակը հիմնախնդրի լուծումը պետք է լինի, այլ ոչ թե դերերի ճշգրտումը: Սակայն Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության շնորհիվ հիմնական ուշադրությունը երկար տարիներ կենտրոնացված էր կոնֆլիկտի կարգավորման, ներկայում՝ առավելապես կառավարման վրա, իսկ հիմնախնդրի լուծումը դիտվում է որպես հարակից ու կարգավորումից ածանցյալ³: Դա ինչպես տրամաբանական, այնպես էլ մեթոդաբանական սխալ է, որը չի կարող բացասաբար չանդրադառնալ գործընթացների վրա [6, c. 7]⁴: Ղարա-

¹ *Կազիմիրով Վ.*, «Չկային կնիքներ, կնքամուտեր, ոչ էլ գեղեցիկ թղթապանակներ» <http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=10194>

² Հրադադարի ամրապնդման և միջադեպերի հետաքննության պարտավորվածության փաստաթուղթը տե՛ս Վ.Կազիմիրովի անձնական կայքում՝ <http://vn.kazimirov.ru/doc12.htm>.

³ Տվյալ պարագայում անհրաժեշտ է հստակորեն տարանջատել երբեմն որպես հոմանիշներ օգտագործվող «հիմնախնդիր» և «կոնֆլիկտ» հասկացությունները: Առաջինին հոմանիշ է հարց կամ խնդիր բառը - <https://ru.wikipedia.org/wiki/Проблема>, իսկ երկրորդին՝ բախումը - <https://ru.wikipedia.org/wiki/Конфликт>

⁴ Ինչպես հեղինակն է իրավացիորեն նշում՝ 1. հիմնախնդիրը և կոնֆլիկտը փոխկապակցված, բայց հարաբերականորեն անկախ և տարբեր մակարդակի հասկացություններ են, 2. հիմնախնդիրը պարտադրաբար չի ենթադրում կոնֆլիկտ, իսկ կոնֆլիկտը պարտադիր չէ, որ բխի հիմնախնդրից, 3. հիմնախնդրի և կոնֆլիկտի հարաբերական անկախությունը ենթադրում է հիմնախնդրի լուծման և կոնֆլիկտի կարգավորման մեթոդների հարաբերական անկախություն, 4. կոնֆլիկտը ծնվում է ոչ այնքան հիմնախնդիրը կազմող գործոններից, որքան առաջանում է դրանց միջև առկա հարաբերություններից:

բաղի հիմնախնդիրը գոյություն ունեւ մինչև 1988թ.: Իրավական նորմերի հիման վրա՝ երկխոսության միջոցով խնդիրը լուծելու փոխարեն միութենական և ադրբեջանական իշխանությունների գործողություններն ուղղված էին հենց ուժային մեթոդների ու ջարդերի միջոցով Լեռնային Ղարաբաղի բնակչության կամքի ճնշմանը, ինչը բերեց կոնֆլիկտային գործոնների ուժեղացմանը և բաց ռազմական դիմակայությանը: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի հարցը հակամարտության վերածվեց, երբ ի պատասխան արցախահայության խաղաղ, արդարացի պահանջի՝ Ադրբեջանը դիմեց ուժային մեթոդներով հիմնահարցի լուծմանը: Արդյունքում՝ բուն հիմնախնդիրը քողարկվում է առաջին փուլում բացակայող, սակայն նրա՝ կոնֆլիկտի վերաճելու արդյունքում ծագած գործոններով: Ընդ որում, մի կողմից՝ մոռացվում է բուն հիմնախնդիրը, մյուս կողմից՝ այն սկսում է ընկալվել բացասական հետևանքների տեսանկյունից (փախստականներ, տարածքներ, գորքերի տեղակայում և հետքաշում, տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում, հաղորդակցության ուղիների վերականգնում և այլն), թեպետ, այդ հետևանքների պատասխանատվությունը պետք է կրեն կոնֆլիկտի հրահրողները: Իհարկե, այդ հարցերն այսօր բավականաչափ հրատապ են և արագ լուծման կարիք ունեն: Սակայն Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը Արցախի ժողովրդի ինքնորոշման՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական կարգավիճակը ինքնուրույն որոշելու իրավունքի հարցն է [6, с. 7]: Դա է պատճառը, որ Բաքուն համառորեն փորձում է անտեսել դարաբաղյան կողմին ինչպես բանակցային գործընթացում, այնպես էլ միջազգային քաղաքական պրակտիկայում: Մինչդեռ, ակնհայտ է, որ 1994թ. Բուդապեշտյան գազաթաժողովում Լեռնային Ղարաբաղին բանակցային կողմի կարգավիճակի տրամադրումը բխում էր հենց այդ նպատակից¹: Երբ ադրբեջանական կողմը բուդապեշտյան գազաթաժողովից հետո, որտեղ ամեն ինչ թույլատրվել էր նախագահ Ալիևի կողմից, սկսել է արգելակել բանակցությունները, գործող համանախագահ Լասլո Կովաչը 1995թ. մարտի 31-ին Պրահայում ընթացող ԵԱՀԿ դեկլարանների խորհրդում հստակ թվարկել է Ղարաբաղյան հակամարտության կողմերին՝ երկու պետություն (Ադրբեջանը և Հայաստանը) և Լեռնային Ղարաբաղը²:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա վերջինս նույնիսկ ցանկության դեպքում բուն Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու լիազորություն չու-

¹ Այդ մասին տե՛ս Офици. сайт ОБСЕ, http://www.osce.org/documents/mcs/1994/12/4048_ru.pdf

² ОБСЕ, руководящий совет, Прага, 1-SC/Journal No. 2, 31 марта 1995 года.

նի: Նրա մասնակցությունը բանակցային գործընթացին կարող է արդարացված լինել այնքանով, որքանով որ ընդգրկված է կոնֆլիկտում, թեպետ հաճախ Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները ժխտել են դա, հավանաբար՝ նկատի ունենալով բուն հիմնախնդիրը, այլ ոչ թե կոնֆլիկտը [7, c. 96-105]: Միայն այն փաստը, որ այսօր Հայաստանը շրջափակման մեջ է և միջազգային մոնիթորինգի են ենթարկվում Հայաստանի և Ադրբեջանի սահմանները, անհրաժեշտ է դարձնում նրա մասնակցությունը կարգավորման գործընթացին: Այլ բան է, որ հարցերի հիմնական խումբը Հայաստանի իրավասությունից դուրս է [8, էջ 46]: Այդ է վկայում ոչ միայն պաշտոնական Երևանի ընտրած մտեցումը (Երևանը երբեք չի ստորագրի որևէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաև Ստեփանակերտի ստորագրությունը), այլև կարգավորման տարբերակներն Արցախին ներկայացնելու տարիների փորձը (օրինակ՝ փուլային, փաթեթային և ընդհանուր պետություն անվանումը ստացած տարբերակները):

Ինչպես է պաշտոնական Ստեփանակերտը դուրս մնացել ուղղակի բանակցություններից¹. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման եռակողմ բանակցային ձևաչափից պաշտոնական Ստեփանակերտի ուղղակի դուրս մնալը հակասական ու դեռևս լիարժեք չբացահայտված հարցերից մեկն է: Հայ իրականության մեջ այս ուղղությամբ միակարծություն չկա: Ոմանք գտնում են, որ դրա պատճառ է հանդիսացել ԼՂՀ առաջին նախագահ Ռ.Քոչարյանի ՀՀ նախագահ ընտրվելը, որը, ստանձնելով այդ պաշտոնը, միաժամանակ հանդես է եկել նրա շահերի անմիջական պաշտպանի դիրքերից²: Նմանօրինակ դիրքորոշում են հայտնել նաև ԵԱՀԿ

¹Պաշտոնական Ստեփանակերտը բանակցային գործընթացից լիովին մեկուսացված չէ, ինչի մասին վկայում են ԼՂՀ իշխանությունների հետ միջնորդների պարբերական հանդիպումներն ու կարգավորման գործընթացի մասին նրանց տեղեկացնելը: Խոսքն առավելապես Բաքվի և Ստեփանակերտի միջև պաշտոնական՝ ուղղակի բանակցությունների բացակայության կամ ձևախեղված բանակցությունների մասին է, երբ հակամարտության հիմնական կողմը չի մասնակցում սեփական ճակատագրի կարգավորմանն ուղղված տարբեր ձևաչափերով ընթացող բանակցային գործընթացին:

²«Նախկինում ներկայացվում էր, որ Ռոբերտ Քոչարյանը ղարաբաղցի է, դրա համար էլ բանակցություններում պետք է ինքը ներկայացնի Ղարաբաղը: Բայց Ռոբերտ Քոչարյանը Ղարաբաղի ժողովուրդը չէր, ժողովուրդը պետք է ներկայացված լինի բանակցություններում: Եթե Ղարաբաղը չի մասնակցում իր ինքնորոշման խնդրին, ապա անհասկանալի է՝ ինչպես ս պետք է այդ հարցը լուծվի: Եվ մենք ամեն գնով աշխատելու ենք Ղարաբաղը վերադարձնել բանակցությունների սեղան: Կարծում եմ՝ դրանից հետո Ադրբեջանի հետ կարելի է լուծումներ գտնել», - 2010թ. մարտի 22-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀԿ փոխնախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Ռազմիկ Չոհրաբյանը նշելով, որ պետք է ուղղել նախկին սխալները, <http://armarlur.com/nvaqմիկ-գոհրաբյանը-քննադատել-է-ռ-քոչար/>

ՄԽ ամերիկացի [9, էջ 58]¹ և ֆրանսիացի [10, էջ 49]² համանախագահները:

Ժամանակին այս խնդրին անդրադարձել է նաև նախագահ Ռ.Քոչարյանը: Նախկին իշխանությունների որդեգրած «Երևանը երբեք չի ստորագրի որևէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաև Ստեփանակերտի ստորագրությունը» մոտեցումն, ըստ վերջինի, ինչ-որ ժամանակ արդյունավետ էր, բայց եկավ պահ, երբ այն դարձավ անարդյունավետ: «Տպավորություն էր ստեղծվել, որ Հայաստանը պատրաստ է կարգավորման ցանկացած ձևի, բայց խնդիրը Ղարաբաղն է, ավելի ճիշտ՝ Ղարաբաղի ղեկավարությունը: Հարց էր առաջանում. մի՞թե Հայաստանն ի վիճակի չէ իրենից Ղարաբաղի ակնհայտ կախվածության պայմաններում ճնշում գործադրել և ստիպել համաձայնել այս կամ այն դիրքորոշման հետ: Ես առաջարկել եմ փոխել այդ տեսակետը և փորձել Հայաստանի ռեսուրսն օգտագործել հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ սեփական դիրքորոշումը և մոտեցումները մշակելու համար: Այսինքն՝ ոչ թե «մենք համաձայն ենք կարգավորման ցանկացած ձևի, որին կհամաձայնի Ղարաբաղը», այլ մենք ունենք սեփական դիրքորոշում և պատրաստ ենք այն պնդել: Իմ ընտրվելուց հետո ես այդպես էլ արեցի» [11]:

Ռ.Քոչարյանն այս դիրքորոշումը հետևյալ կերպ է հիմնավորել. «Բոլորը գիտեն հակամարտության էությունը և հասկանում են, որ Ադրբեջանի մերժումը՝ բանակցելու Ղարաբաղի հետ, ավելի շատ զալիս է հոգեբանական բարդույթից: Միաժամանակ, Բաքու-Երևան ուղիղ բանակցություններն ունեն երեք հիմնական առավելություն: Առաջին և կարևորը. Հայաստանը շատ ավելի մեծ արդյունավետությամբ կարող է պաշտպանել հայկական կողմի շահերը: Բանակցությունների ժամանակ կողմերի կարգավիճակը չափազանց կարևոր է, չճանաչված պետության շահերն անտեսե-

¹ Մասնավորապես, այս առթիվ ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի նախկին համանախագահ Մ.Բրայզան լրագրողի՝ «Դուք անընդհատ խոսում եք այն մասին, որ հակամարտության վերջնական լուծման համար Ղարաբաղը պետք է միանա բանակցություններին: Ձեր կարծիքով... համանախագահները չէ՞ որ մեղավոր են այն հարցում, որ Ղարաբաղը դուրս է մնացել բանակցություններից Հայաստանի պատճառով» հարցին պատասխանել է. «Ոչ մեկն էլ մեղավոր չէ: Ուղղակի մի քանի տարի առաջ հայկական կողմը որոշում է կայացրել, որպեսզի ինքը ներկայացնի Ղարաբաղի շահերը: Եվ որպեսզի այդ իրավիճակը փոխվի, պետք է ստանալ երկու կողմերի համաձայնությունը, բոլոր կողմերի համաձայնությունը: Անկասկած, դարաբաղյան կողմը պետք է ներգրավվի գործընթացին»:

² Ֆրանսիացի համանախագահ Բերնար Ֆասյեն 2009թ. Ստեփանակերտ այցելության ընթացքում մեկ անգամ ևս հիշեցրել է. «Ղարաբաղի մասնակցությունը բանակցություններին կախված չէ համանախագահներից, քանի որ Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությունը ժամանակին դադարեցվել է հայկական կողմի որոշմամբ, և այժմ Ղարաբաղի մասնակցությունը կախված է նաև ադրբեջանական կողմից»:

լը՝ շատ ավելի հեշտ: Երկրորդ. ես որպես բանակցությունների ակտիվ կողմ շատ ավելի մեծ հնարավորություն եմ ստանում հանդիպումների ժամանակ ներկայացնել Ղարաբաղյան հարցը, որպես սուբյեկտ, ով ուղղակի և անմիջական պատասխանատվություն ու բեռ է կրում բանակցությունների համար, նույնը՝ Հայաստանի արտգործնախարարը: Հայաստանի նախագահի և արտգործնախարարի շփումների մակարդակը դժվար է համեմատել ԼՂՀ նախագահի ու արտգործնախարարի շփումների մակարդակի ու հաճախակիության հետ: Երրորդ առավելությունը. Հայաստանի նախագահի ներգրավվածությունը շատ ավելի բարձր մակարդակի վրա է բարձրացնում Հայաստանի պատասխանատվությունը ԼՂՀ-ի նկատմամբ, քանի որ մենք ամբողջ Հայաստանի ներուժը՝ և՛ դիվանագիտական, և՛ տնտեսական, և՛ պաշտպանական, ծառայեցնում ենք այս հարցի կարգավորմանը» [12]: Նախկին արտգործնախարար Վ.Օսկանյանի կարծիքով՝ բանակցային գործընթացում ԼՂ չներկայացվածության միակ պատճառն Ադրբեջանի մերժողական կեցվածքն է: «Այսօր Հայաստանը հետևյալ երկրնտրանքի առջև է կանգնել. պնդել Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը և չգնալ բանակցությունների՝, թե՞ համաձայնել բանակցություններին՝ հանուն այն բանի, որ դրանք չընդհատվեն: Հայաստանի նախագահը որոշել է երկրորդը՝ հարցին մոտենալով հետևյալ կերպ. իսկապես կարևոր չէ, թե հայերի կողմից ով է բանակցում, այլ՝ թե ինչ ենք բանակցում: Հայաստանը տանում է բանակցությունները, բայց ինչ-որ պահի անխուսափելի է դառնալու Լեռնային Ղարաբաղի ներկայությունը գործընթացում» [13]:

Հ.Ալիևը 1999թ. Բաքվում հայ լրագրողների հետ հանդիպման ընթացքում պարզաբանել է, թե ինչու է Ադրբեջանը խուսափում Լեռնային Ղարաբաղի հետ ուղղակի շփումներից: Նախ, նա ընդունել է, որ Լեռնային Ղարաբաղը դե ֆակտո արդեն Հայաստանի կազմում է. «Ասածիս վկայությունները շատ են: Հայաստանի ներկայիս նախագահը Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարն է: Հայաստանի մի քանի նախարարներ դարձյալ Ղարաբաղից են: Այստեղ արդեն ամեն ինչ ասված է: Եվ այդքանից հետո դուք ասում եք, որ պետք է ուղիղ շփման մեջ մտնել: Լեռնային Ղարաբաղն ինքնուրույն միավոր չէ: Եթե Հայաստանը չմասնակցեր այս գործընթացին, և եթե նա դե ֆակտո չմիացներ Ղարաբաղը, իհարկե, այլ ելք չէր մնա, քան Ղարաբաղի հետ ուղիղ շփումները: Առաջին իսկ օրից հակամարտությունը ոչ միայն Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև էր, այլև Հայաստանի ու Ադրբեջանի: Իհարկե, եթե Հայաստանը մի կողմ քաշվի և չմիջամտի Ղարաբաղի գործերին, մեզ այլ ճանապարհ չի մնա, քան Ղարաբաղի հետ հարցի

քննարկումը: Բայց քանի որ մեզ համար գլխավոր սուբյեկտը Հայաստանն է, մենք ուզում ենք պայմանավորվել Հայաստանի հետ» [14]:

Պաշտոնական Ստեփանակերտը բանակցային գործընթացից դուրս բերելու՝ Ռ.Քոչարյանին ուղղված մեղադրանքներին վերջ տալու նպատակով 2010թ. մարտի 29-ին պաշտոնապես հանդես է եկել պաշտոնաթող նախագահի գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը: Նա մասնավորապես նշել է. «ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությամբ բանակցային գործընթացը դադարել է գոյություն ունենալ Ռոբերտ Քոչարյանի նախագահ ընտրվելուց դեռ մեկ տարի առաջ: Իսկ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումներն ու բանակցությունները պարբերաբար կազմակերպվում էին սկսած 1990 թվականից՝ Մինսկի գործընթացին զուգահեռ: Լևոն Տեր-Պետրոսյանը բանակցել է ն՝ Այազ Մութալիբովի, ն՝ Աբուլֆազ Էլչիբեյի, ն՝ Հեյդար Ալիևի հետ: Ավելին, մինևույն ժամանակ հաճախակի հանդիպումներ էին կազմակերպվում երկու նախագահների ներկայացուցիչների՝ Ժ.Լիպարիտյանի և Վ.Գուլուզադեի միջև (1995-96թթ. տեղի է ունեցել 11 այդպիսի հանդիպում): Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցությունները շարունակվել են նաև Ռոբերտ Քոչարյանի ընտրվելուց հետո, խնդրո առարկայի հարցի համատեքստում, այն կարևոր տարբերությամբ, որ ՀՀ նոր նախագահի պահանջով ԵԱՀԽ ՄԽ նախագահները պարտադիր կերպով (չհաշված եզակի բացառությունները) այցելում էին ԼՂՀ և բանակցում պաշտոնական Ստեփանակերտի ներկայացուցիչների հետ...»¹:

Բանակցային ձևաչափի խեղաթյուրումը՝ հիմնախնդրի կարգավորումն արգելակող գործոն. Բացի վերոնշյալից, մեր կարծիքով, պաշտոնական Ստեփանակերտի ուղղակի բանակցություններից դուրս մնալը նաև հետևանք էր այն իրողության, որի արդյունքում 1996թ. դեկտեմբերի 3-ին Լիսաբոնի զագաթաժողովում ընդունվեց գործող նախագահի հակահայկական հայտարարությունը, որի հետ, բացի Հայաստանից, համաձայն էին մասնակից բոլոր պետությունները: Հասկանալի է, որ մեր դիվանագիտական անհաջողության և միջազգային հանրության կողմից Ադրբեջանի նկատմամբ ցուցաբերվող աջակցության պայմաններում վերջինս ավելի կկոշտացներ իր դիրքորոշումը, ինչն էլ տեղի ունեցավ Լիսաբոնին հաջորդած ամիսների ընթացքում: Հայկական կողմերի դիվանագիտական թերացումների հետևանքով ԼՂՀ-ն բանակցությունների սուբյեկտից դարձավ

¹ <https://news.am/arm/news/17772.html>

բանակցությունների օբյեկտ, ինչը նշանակում է, որ «Ղարաբաղյան գործունը» ԱՀ-ի կողմից նվազագույնի հասցվեց: Բնականաբար, դա Ադրբեջանի կարևորագույն հաջողություններից մեկն է, որով հերթական անգամ փորձում է աշխարհին ցույց տալ, որ հակամարտությունը ՀՀ-ի և ԱՀ-ի միջև ինչ-որ տարածքի՝ Լեռնային Ղարաբաղի համար է, որը զավթվել է Հայաստանի ագրեսիայի արդյունքում: Հիմնախնդրի կերպարը խեղաթյուրելով՝ պաշտոնական Բաքուն ոչ միայն խոչընդոտում է հակամարտության խաղաղ կարգավորմանը, այլև միջազգային ասպարեզում հող նախապատրաստում ռազմական ճանապարհով խնդիրը լուծելուն ուղղված իր քայլերն օրինականացնելու համար: Դրա շոշափելի պտուղները երևացին դեռևս 2016-ի առձակատման օրերին, երբ տարբեր երկրներ իրենց անհասցե հայտարարություններով «ըմբռնելի» վերաբերմունք դրսևորեցին Արցախի դեմ ռազմական գործողություններ սանձազերծած Ադրբեջանի նկատմամբ:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Վերջին շրջանում Ղարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցող իրադարձություններն ու վտանգավոր զարգացումներն արդյունք են նաև այն բանի, որ 1988-ի շարժմանը հաջորդած 30 տարիներին մենք չմշակեցինք և չունենք միասնական մոտեցում ազգային անվտանգության գերկարևոր հարցում: Հայկական կողմերի թույլ տված սխալները պաշտոնական Բաքվին հնարավորություն են ընձեռել խոչընդոտել հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացին:
2. Հակամարտության կարգավորման գործընթացում «Կողմեր» եզրույթի օգտագործումը, ըստ 1994թ. փետրվարի 18-ի կողմերի միջև ստորագրված արձանագրության առաջին կետի, որով հստակեցվել են նրանց հարաբերությունները, չի նշանակել կողմերի որևէ այլ քաղաքական կամ իրավական կարգավիճակի ճանաչում՝ բացի սույն արձանագրությունում նշվածից: Այսինքն՝ խնդրի իրավական հիմքերի տեսանկյունից հաստատված չէ ՀՀ-ի՝ Ղարաբաղյան հակամարտության կողմ լինելու հանգամանքը:
3. Թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է պարզաբանել «հիմնախնդիր» և «կոնֆլիկտ» հասկացությունները, որի պարագայում ակնհայտ է դառնում, որ Հայաստանը փաստացիորեն ընդգրկված է կոնֆլիկտում, բայց նույնիսկ ցանկության դեպքում հիմնախնդրի առանցքային հարցերը դուրս են կարգավորման նրա իրավասությունից:

4. Ցանկացած բնագավառում հաջողության հասնելու նախապայմանը իմացությունն է: Այս առումով բնութագրական է Սուն Ցզիի բնորոշումը. «Եթե ճանաչում ես թշնամուդ և ճանաչում ես ինքդ քեզ, հարյուրավոր մարտերում քեզ վտանգ չի սպառնում, եթե ճանաչում ես ինքդ քեզ, բայց չես ճանաչում թշնամուդ, ապա մեկ ճակատամարտ կհաղթես, իսկ մյուսում կպարտվես, եթե չես ճանաչում ոչ թշնամուդ, ոչ էլ ինքդ քեզ, դու վտանգի մեջ ես յուրաքանչյուր ճակատամարտում» [15, c. 17]: Գիտակցելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է հստակ քայլեր ձեռնարկել Ղարաբաղյան հակամարտության իրավական, քաղաքական և այլ ասպեկտներին տիրապետող մասնագետների պատրաստման համար:

Հուլիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Laue J.*, The emergence and institutionalization of third party roles in conflict" // Sandole D., Sandole-Staroste I., "Conflict management and problem solving: interpersonal to international applications", New York: New York University Press, 1987, p. 17-18 (մեջբերումն ըստ *Է.Քերոբյանի*՝ Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը. տեսություն և իրականություն, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, № 4. Եր. 2011):
2. *Քերոբյան Է.*, Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը. տեսություն և իրականություն, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, № 4. Եր., 2011:
3. *Թուրխալյան Լ.*, Քաղաքական բառարան, Երևան, 2006:
4. Архив МИД НКР, папка N 16, документ 2.
5. *Казимиров В.*, Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009.
6. *Золян С.*, Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., 2001.
7. Золян С., Проблема и конфликт (опыт логико-семантического анализа), "Полис", 1996, N 4.
8. Քաղաքականություն և քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ, Պրակ Ե, Եր. 2008:
9. «Անալիտիկոն», հանդես՝ մտածող և ոչ անտարբեր մարդկանց համար, N 8, օգոստոս, Ստեփանակերտ, 2009:
10. «Անալիտիկոն», հանդես՝ մտածող և ոչ անտարբեր մարդկանց համար, N 12, դեկտեմբեր, Ստեփանակերտ, 2009:
11. Ռ.Քոչարյանի պատասխանները «Գոլոս Արմենիի»-ի ընթերցողների հարցերին, 3 ապրիլ, 2004թ.:

12. Ռ.Քոչարյանի հարցազրույցը Հ1, Հ2 և ԱՀ հեռուստաընկերություններին, 2 մարտի, 2006թ.:
13. ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի ասուլիսի գրառումներից, դեկտեմբերի 22, 2004թ.:
14. Հ.Ալիևի հարցազրույցը հայ լրագրողների հետ, «Երկիր», 6 հուլիսի 1999թ.:
15. Сунь-цзы, Искусство войны: Центрполиграф; М.; 2011.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան

Ամփոփագիր

Ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող արդի զարգացումների համատեքստում հողվածում քննարկվում են «հակամարտության կողմեր» հասկացության իրավաքաղաքական կարգավիճակի, հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացից պաշտոնական Ստեփանակերտի դուրս մնալու և հիմնախնդրի կարգավորմանը խոչընդոտող հարցերը:

Ցույց է տրվում, որ բացի Ադրբեջանի ասպակառուցողական դիրքորոշումից, հակամարտության կարգավորման խոչընդոտները վերացնելու նախապայմաններից մեկն էլ հիմնախնդրի տարբեր ասպեկտներին տիրապետող մասնագետների պատրաստումն ու նրա իրական կերպարը միջազգային հանրությանը ներկայացնելն է:

ПРЕПЯТСТВИЯ УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Грайр Пашаян, Лиана Балаян

Резюме

В статье обсуждается политико-правовой статус понятия «стороны конфликта», выбывание официального Степанакерта из переговорного процесса по урегулированию проблемы и вопросы, препятствующие урегулированию проблемы, в контексте современных развитий, происходящих по вопросу карабахского противостояния.

Показывается, что, кроме деструктивной позиции Азербайджана, одним из предусловий устранения препятствий, мешающих урегулированию противостояния, является подготовка профессионалов, владеющих разными аспектами проблемы, и представление ее реального образа международному сообществу.

OBSTACLES TO THE SETTLEMENT OF KARABAKH CONFLICT

Hrayr Pashayan, Liana Balayan

Resume

The article discusses the political and legal status of the concept of "parties of the conflict", the retirement of the official Stepanakert from the negotiation process on the settlement of the problem and the issues that impede the settlement of the conflict in the context of the current developments around the Karabakh confrontation.

It is demonstrated that in addition to the destructive position of Azerbaijan, one of the preconditions for eliminating obstacles that hamper the settlement of the conflict is training of the professionals to deal with the different aspects of the problem and the presentation of its real view to the international community.

XX դԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մամվել Մանուկյան՝

Բանալի բառեր՝ գլոբալ քաղաքացիական հասարակություն, քաղաքակրթական ինքնություն, պատմական հիշողություն, ԵՊՀ ուսանողություն:

Խնդիրը

Ներկայում գլոբալ մշակութային փոփոխությունների հիմնական ուղղություններից է գլոբալ քաղաքացիական հասարակության կազմավորումը, ինչը ենթադրում է մարդու՝ բացի անձի մակարդակից ավելի բարձր կարգի ցանկացած ինքնության կազմալուծում և վերացում, այդ թվում սեռային, ընտանեկան, համայնքային, էթնիկ, ազգային և քաղաքակրթական ինքնության: Էթնիկ և քաղաքակրթական ինքնության կարևոր բաղադրիչների շարքում է պատմական հիշողությունը, որը նույնականացնում է մարդուն՝ որպես ազգային և քաղաքակրթական հանրության անդամ: Հողվածում փորձ է կատարված վեր հանել ԵՊՀ ուսանողության աշխարհայացքում ազգային և քաղաքակրթական պատմական հիշողության մի քանի էական բաղադրիչների դիրքավորվածության և բնույթի ընդհանուր նկարագիրը, մասնավորապես՝ ա) XX դարի սկզբից մինչև XXI դարի սկիզբը Հայաստանի պատմության, որն ազգային ինքնության բաղադրիչ է, բ) ԽՍՀՄ և Ռուսաստանի XX դարի սկզբից մինչև մեր օրերը պատմության, որը քաղաքակրթական ինքնության բաղադրիչ է և գ) Երկրորդ համաշխարհային պատերազմի հիմնական մասնակիցների նկատմամբ պատմական հիշողության, որը քաղաքակրթական ինքնության բաղադրիչ է:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության հայեցակարգը. Գնահատման մեթոդաբանական հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ տարբեր տարածաշրջանների և ժամանակաշրջանների վերաբերյալ պատմական հիշողությունը խտանում,

¹ «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, սոց.գ.թ.:

կենտրոնանում և արտապատկերվում է դրանք ներկայացնող ականավոր պատմական դեմքերի կերպարներում: Այլ կերպ, այն, թե արդյո՞ք անձը հիշում է տվյալ տարածաշրջանի և ժամանակաշրջանի ականավոր պատմական դեմքերին և ի՞նչ դիրքորոշում ունի նրանց նկատմամբ, արտապատկերում է տվյալ ժամանակաշրջանի և տարածաշրջանի նկատմամբ անձի դիրքորոշման առկայությունը և այդ դիրքորոշման բնույթը: Հարկ է նշել, որ խոսքը չի վերաբերում հիշողության բովանդակությանը, որն առանձին և բարդ ուսումնասիրության օբյեկտ է:

Հետևաբար, որևէ հանրություն ուսումնասիրելով տարածաշրջաններ և ժամանակաշրջաններ ներկայացնող ականավոր պատմական դեմքերի ճանաչելիությունը և նրանց նկատմամբ դիրքորոշումների բնույթը՝ հնարավոր է հիմնավորված դատողություններ կատարել այդ հանրության պատմական հիշողության վիճակի վերաբերյալ:

Հետազոտության շրջանակներում ուսանողներին հարց է տրվել. «Ինչպե՞ս եք վերաբերվում հետևյալ պատմական ու քաղաքական գործիչներին՝ դրակա՞ն, թե՞ բացասական»: «Չեզոք» և «Չեմ ճանաչում» պատասխանները չեն հուշվել:

Տվյալները

Հետազոտությունում որպես Հայաստանի պատմության դիտարկվող ժամանակահատվածի ներկայացուցիչներ են սահմանվել յոթ պատմական դեմքեր՝ Ալեքսանդր Խատիսյանը, Միմոն Վրացյանը (1-ին Հանրապետություն), Ստեփան Շահումյանը, Ալեքսանդր Սյամնիկյանը (2-րդ Հանրապետության սկիզբ¹), Կարեն Դեմիրճյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը: Ընդ որում, Կարեն Դեմիրճյանը ներկայացնում է երկու ժամանակաշրջան՝ Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման բարձրակետը՝ 1970-ական թվականները, և հետխորհրդային ժամանակաշրջանի շատ կարճ, սակայն, մեր կարծիքով՝ չափազանց կարևոր, սիմվոլիկ և ուսանելի ժամանակահատվածը՝ 1997-1999թթ.:

Բոլշևիկյան Ռուսաստանի, ԽՍՀՄ-ի և արդի Ռուսաստանի դիտարկվող ժամանակաշրջանի պատմական փուլերի ներկայացուցիչներ են սահմանվել Վլադիմիր Լենինը, Իոսիֆ Ստալինը, Նիկիտա Խրուշչովը, Լեոնիդ Բրեժնևը, Միխայիլ Գորբաչովը, Բորիս Ելցինը և Վլադիմիր Պուտինը:

¹ Չնայած Ս.Շահումյանը գոհվել է 1918թ., այնուամենայնիվ, նա՝ որպես բոլշևիկ, շողկապված է Հայաստանի Երկրորդ հանրապետության սկզբնական ժամանակահատվածին:

Ակնհայտ է, որ այս դեմքերից յուրաքանչյուրը սահմանում է ԽՍՀՄ և Ռուսաստանի պատմության «իր իսկ» ժամանակաշրջանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հիմնական մասնակիցների առաջնորդներ են սահմանվել Ադոլֆ Հիտլերը, Բենիտո Մուսոլինին, Ուինսթոն Չերչիլը, Շարլ դը Գոլը¹ և Իոսիֆ Ստալինը²:

Ընտրանքը. Հետազոտության ընդհանուր համակցությունն էին Երևանի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցմամբ ուսանողները՝ 9219 անձ: Իրականացվել է քառաստիճան շերտավորված (ֆակուլտետ, կուրս, մասնագիտություն, ուսումնական խումբ) բազմաստիճան կլաստերային պատահական ընտրանք, ծավալը՝ 314: Վիճակագրական հավաստիության մակարդակը՝ $\pm 5.0\%$: ԵՊՀ-ն Հայաստանի բուհերի առաջատարն է: ԵՊՀ-ում է սովորում Հայաստանի ուսանողության շուրջ 21%-ը: Այդ պատճառով ԵՊՀ ուսանողության ուսումնասիրությունը բավարար հիմքեր է տալիս պատկերացում կազմելու Հայաստանի ուսանողության գիտելիքների մակարդակի, ինչպես նաև պատմական հիշողության մասին: Ընդ որում, պետք է ենթադրել, որ այստեղ այդ բնութագրերի մակարդակը հանրապետական միջինից բարձր է:

Արդյունքներ

Արդյունքները դիտարկելիս հարկ է նկատի ունենալ, որ ուսումնասիրվել են ԵՊՀ ուսանողները, այսինքն՝ յուրահատուկ կոհորտ, որը մոտ ապագայում՝ 3-5 տարի հետո և մի քանի տասնամյակ շարունակ, կազմելու է Հայաստանի մտավորականության որոշակի շերտ: Նրանց ներկայացված պատմական դեմքերը հանգուցային են տվյալ տարածքի և ժամանակաշրջանի համար: Այդ պատճառով հետազոտության արդյունքների մեկնաբանություններում «նորմալ» վիճակի չափանիշ է համարվել, երբ ուսանողը՝ ապագա մտավորականը, ճանաչում է **բոլոր ներկայացված պատմական դեմքերին**: Նույնիսկ մեկին չճանաչելը գնահատվել է որպես բացասական:

Պատմական հիշողության բնապատկերը

Գծապատկեր 1-ում ներկայացված է, թե ուսանողների որ տոկոսը չի ճանաչում դիտարկված պատմական դեմքերից յուրաքանչյուրին: Պատմա-

¹ Շարլ դը Գոլի մասին տեղեկացվածությունը և նրա նկատմամբ դիրքորոշման բնույթը հաշվարկվել են *Մանուկյան Ս.Ս.*, «ՀՀ ուսանողների կենսաճի և Բոլոնյան գործընթացի գնահատում 2015», «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի (գեկույց, ձեռագիր) հետազոտության տվյալների շտեմարանով:


² Ֆրանկլին Ռուզվելտը թյուրիմացաբար դուրս է մնացել հարցաթերթից:

կան դեմքերը խմբավորված են ըստ Հայաստան, Ռուսաստան (ԽՍՀՄ) և Երկրորդ համաշխարհային պատերազմ կատեգորիաների: Հայաստան և Ռուսաստան կատեգորիաներում պատմական դեմքերը հաջորդում են ըստ իրենց գործունեության ժամանակաշրջանի հաջորդականության:

Հայաստան. Գծապատկերը ցույց է տալիս, որ **Հայաստանի XX դարի սկզբի պատմական հիշողությունը լրջորեն խարխլված է:** Ուսանողների 20%-ը չէր ճանաչում Սիմոն Վրացյանին, 20%-ը՝ Ալեքսանդր Խատիսյանին, 15%-ը՝ Ստեփան Շահումյանին և 9%-ը՝ Ալեքսանդր Մյասնիկյանին¹: Խորհրդային ժամանակաշրջանի վերջին՝ դեմիրձյանական փուլից սկսած մինչև մեր օրերը ժամանակաշրջանը (բացի հետազոտության ընթացքում գործող նախագահի ժամանակաշրջանից) ուսանողների հիշողությունում, կիրառված մեթոդաբանության շրջանակներում, առկա է: Կ.Դեմիրձյանին, Լ.Տեր-Պետրոսյանին, Վ.Սարգսյանին, Ռ.Քոչարյանին չճանաչող ուսանողների քանակը գտնվում էր 1-2% միջակայքում:

Գծապատկեր 1

Պատմական դեմքերին չճանաչող ուսանողների քանակը



¹ Հետազոտությունում չեն ընդգրկվել Հայաստանի 1930-1970թթ. պետական և քաղաքական գործիչները, ինչը կատարվել է մեթոդաբանական պատճառով: Հետազոտությունն ուներ մեծ ծավալի հարցաթերթ, մյուս կողմից, ըստ նախնական դիտարկման, այդ ժամանակահատվածի պետական և քաղաքական գործիչներն ընդհանրապես անձանոթ են ուսանողներին: Գերադասելի է համարվել պահպանել հետազոտական մեթոդիկայի ընդհանուր պահանջը, քան հավաքագրել ի սկզբանե «հայտնի» տվյալներ:

ԽՍՀՄ-ՌԴ. ԽՍՀՄ պատմությունը Հայաստանի XX դարի պատմության իմաստի և բովանդակության աղեկվատ ընկալման կարևորագույն համատեքստն է: Գծապատկեր 1-ի տվյալները ցույց են տալիս, որ **ԽՍՀՄ-ՌԴ թեմայով պատմական հիշողության անկումները** վերաբերում են այն ժամանակաշրջաններին, որոնք արդի աշխարհի գաղափարաբանական հիմնական հոսքում (*mainstream*) դիտարկվում են որպես դրական բովանդակությամբ ժամանակաշրջաններ: Դրանք են՝ խրուշչովյան ժամանակաշրջանը ԽՍՀՄ-ում, որը դրեց ստալինյան ժամանակաշրջանի վերջակետը, և Ելցինյան ժամանակաշրջանը՝ ՌԴ-ում, որից սկսվում է հետևյալ մասնաճյուղի հիմնական դեմոկրատական Ռուսաստանի պատմությունը: Խրուշչովի անունը չէր լսել ուսանողների 9%-ը, իսկ Ելցինի անունը՝ 16%-ը: Այդ շարքում բացառություն է գործաչվյալ ժամանակաշրջանը, որի մասին պատմական հիշողությունը, դիտարկվող մեթոդաբանության շրջանակում, առկա է: Այս ֆենոմենի մեկնաբանությունը կքննարկվի հաջորդիվ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ պատմական հիշողության անկում է առկա Մուսոլինիի, Դը Գոլի և Չերչիլի դեպքում: Առաջինին չէր ճանաչում ուսանողների 27%-ը, երկրորդին՝ 32%-ը, իսկ երրորդին՝ 10%-ը: Ըստ էության, Երկրորդ համաշխարհային պատերազմը ուսանողների պատմական հիշողությունում ներկայացնում է պատերազմ ԽՍՀՄ-ի¹ և Գերմանիայի միջև: Այստեղ էական է այն, որ, եթե Երկրորդ համաշխարհային պատերազմն «անհայտ է» իր հիմնական մասնակիցներով, ապա հնարավոր չէ աղեկվատ ընկալել դրա բովանդակությունը, գլոբալ ազդեցությունն ընդհուպ մինչև մեր օրերը, ինչպես նաև պատերազմի ազդեցությունը Հայաստանի վրա:

Ուսանողների XX դարի պատմական հիշողության բնույթը


Ուսանողների XX դարի պատմական հիշողության բնույթի վերլուծության համար կազմավորվել է պատմական գործիչների նկատմամբ **վերաբերմունքի բնույթի ինդեքսը**: Այն ներկայացնում է տվյալ քաղաքական գործչի նկատմամբ դրական և բացասական դիրքորոշումների տոկոսների տարբերությունը: Տվյալ գործչի նկատմամբ չեզոք դիրքորոշումներ ունեցողները և չճանաչող ուսանողները չեն հաշվառվել: Պատմական դեմքերի նկատմամբ վերաբերմունքի բնույթի ինդեքսները տրված են Գծապատկեր 2-ում: Այստեղ, ինչպես և Գծապատկեր 1-ում, պատմական գործիչները խմբավորված

¹ Ինչպես ցույց կտրվի հաջորդիվ, ավելի շուտ՝ Ռուսաստանի:

են ըստ հայաստանյան, ԽՍՀՄ-ՌԴ և Երկրորդ համաշխարհային պատերազմ կատեգորիաների, առաջին երկու կատեգորիաներում՝ ժամանակագրական կարգով, իսկ երրորդ կատեգորիայում՝ ըստ ինդեքսի աճի:

Գծապատկեր 2

Պատմական դեմքերին վերաբերմունքի բնույթի ինդեքսը: Ինդեքսը հավասար է «Դրական վերաբերմունք ունեցողների քանակից» - «Բացասական վերաբերմունք ունեցողների քանակը»



Հայաստանի XX դարի պատմության բնույթը ուսանողության պատկերացումներում. Հայաստանի 1-ին և 2-րդ Հանրապետությունների դիտարկված ժամանակային փուլերում և համատեքստում այն **դրական է:** Խնդիրները սկսվում են Հայաստանի 3-րդ Հանրապետության փուլում: Երրորդ Հանրապետության Լևոն Տեր-Պետրոսյանի ժամանակաշրջանի ընկալման բնույթը համարյա նույնքան **բացասական է** (-33%), որքան Ստալինի նկատմամբ (-38%): Վ.Սարգսյան, Կ.Դեմիրճյան փուլի նկատմամբ **շատ բարձր դրական (86% և 76%),** իսկ Ռ.Քոչարյանի ժամանակաշրջանից ընկալման բնույթը՝ **հակասական.** վերաբերմունքի ինդեքսի արժեքը փաստացի 0% է: Ռ.Քոչարյանի նկատմամբ դրական և բացասական դիրքորոշումները միմյանց համարյա հավասար են՝ դրական դիրքորոշում նրա նկատմամբ ուներ ուսանողների 38.4%-ը, իսկ բացասական դիրքորոշում՝ 38.6%-ը:

Հայաստանի 1-ին Հանրապետության և Երկրորդ Հանրապետության նախնական փուլի նկատմամբ դրական դիրքորոշումները կարելի է բացատրել երկու գործոնով: Առաջին. այդ փուլերի նկատմամբ պատմական

հիշողությունը համեմատաբար ավելի աղոտ է և, դրա հետևանքով, աղոտ է նաև դիրքորոշումների բնույթը: Մյուս կողմից, բավականաչափ «հեռու» ժամանակաշրջանների կոնֆլիկտներն այլևս ակտուալ չեն ներկայիս երիտասարդության համար: Եթե երկրորդ ենթադրությունը ճիշտ է, ապա դա դրական երևույթ է և նշանակում է, որ ժամանակակից հայ երիտասարդության հետ կարելի է առանց կոնֆլիկտային հույզերի քննարկել Հայաստանի պատմության այդ հակասական ժամանակաշրջանը և փորձել դասեր քաղել դրանից:

ԽՍՀՄ-ՌԴ XX դարի պատմության բնույթը ուսանողության պատկերացումներում. ԽՍՀՄ և Ռուսաստանի պատմությունը հայ հասարակության համար ունի բացառիկ կարևորություն, քանի որ ռուսական մեծ տարածք՝ անկախ դրա քաղաքական կազմակերպման ձևից, հայերի համար հանդիսանում է քաղաքակրթական տեսակետից ամենամոտը¹, և, բացի դրանից, սա այն տարածքն է, որտեղ և որի շնորհիվ հայերը ներկայում ունեն պետականություն և տնօրինում են իրենց ազգային ճակատագիրն ու ազգային պատմական զարգացումը:

ԽՍՀՄ-ՌԴ պատմության ուսանողական ընկալումների բնույթը, բացի պուտինյան փուլից, կամ բացասական է, կամ հակասական:

Լենինի դեպքում ինդեքսի արժեքը՝ -17%, Ստալինի դեպքում՝ -38%, Բրեժնևի՝ -27%, իսկ Գորբաչովի՝ -48%: Խրուշչովի նկատմամբ վերաբերմունքի հակասականությունը կազմավորվել է 30% դրական և 24% բացասական դիրքորոշումներով, Ելցինի նկատմամբ, համապատասխանաբար՝ 23% և 32%: Պուտինի նկատմամբ վերաբերմունքի ինդեքսը շատ բարձր դրական է՝ 71% (դրական դիրքորոշումները՝ 81%, իսկ բացասականը՝ 10%) և համադրելի է Դեմիժյանի ինդեքսի հետ: Ինդեքսի դիտարկված բաշխումը կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ: Հաջորդիվ ներկայացված է մեկնաբանության տարբերակ:

Արդեն քառորդ դարից ավելի Հայաստանի տեղեկատվական դաշտի բովանդակային խարիսխները և դրանց երանգավորումները կազմավորվում են գլոբալ տեղեկատվական դաշտի ազդեցության տակ: Իսկ վերջինիս առաջին ռազմավարական նպատակն է՝ խարխիլել ռուսական մեծ տարածքի վերակազմավորման և ամրապնդման քաղաքակրթական հիմքերը: Երկրորդ ռազմավարական նպատակը՝ արգելափակել սոցիալիստական

¹ Տե՛ս *Manukyan S., Kyureghyan E., Armenians, Georgians and Azerbaijanis at the Civilizational Crossroads: Searching for «Caucasian Identity»* / «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № (1) 130.5, 2010թ., էջ 20-25:

գաղափարախոսության վերակենդանացման հնարավորությունը: Չի բացառվում, որ երկրորդ նշված նպատակն է՝ ավելի կարևոր է, քան առաջինը: Արդի աշխարհամակարգի համակարգային ճգնաժամը, որի արտահայտությունների շարքում են աշխարհի աննախադեպ բնեռացումը հարուստ և աղքատ երկրների, իսկ երկրներում՝ հարուստների և աղքատների միջև, ավելի ու ավելի հաճախացող գլոբալ տնտեսական ճգնաժամերը, պարարտ հող են սոցիալիստական գաղափարախոսության վերականգնման համար:

Խրուչչովյան փուլի հակասականությունը կարող է բացատրվել նրանով, որ, մի կողմից, դա խորհրդային պատմության փուլ է (բացասական երանգավորում), իսկ մյուս կողմից, Խրուչչովն է ավարտել ստալինյան փուլը և ԽՍՀՄ-ում սկսել «ժողովրդավարական ձևավորում» (դրական երանգավորում): Գորբաչովյան փուլի խիստ բացասական երանգը բացատրվում է նրանով, որ Գորբաչովին են վերագրվում ժողովրդին «խորհրդային սոցիալական դրախտից արտաքսումը», ԽՍՀՄ կազմալուծումը» և Ղարաբաղյան հիմնահարցի սրումը: Ելցինյան փուլի հակասականությունը կարելի է բացատրել նրանով, որ գլոբալ ինֆորմացիոն դաշտում նա, մի կողմից, Ռուսաստանը «ժողովրդավարացնող» քաղաքական գործիչն է, իսկ մյուս կողմից, նա, այնուամենայնիվ, մնում է «կայսերական» Ռուսաստանի նախագահ:

Դիրքորոշումների դիտարկված շարքում կարող է տարօրինակ թվալ ՌԴ նախագահ Վ.Պուտինի նկատմամբ վերաբերմունքի ինդեքսի շատ բարձր արժեքը՝ 71%, որը կազմավորվել է դրական վերաբերմունքի 81% և բացասական վերաբերմունքի 10% տարբերությամբ: Սակայն արդյունքի հավաստիության մասին է վկայում այն հետազոտական փաստը, որ «Կյանքի որակը Հայաստանում» 2015թ. համահայաստանյան հետազոտության արդյունքներով, Հայաստանում Պուտինին դրական էր վերաբերվում հարցվածների 94%-ը¹ (!), իսկ սովորողների՝ 86%-ը²: Պուտինի նկատմամբ 79.2% դրական դիրքորոշում է գրանցվել նաև Հայաստանի ուսանողության 2015թ. վերը նշված հետազոտության ընթացքում:

¹Նման շատ բարձր դրական վերաբերմունքը կարող է բացատրվել նրանով, որ երբ 2015թ. նոյեմբերին թուրքական կործանիչը խոցեց ռուսական ՄՈՒ-24 ուժակոծիչը, դրան հետևեցին Ռուսաստանի, իսկ հասարակական գիտակցությունում՝ Պուտինի, շատ կոշտ գործողությունները Թուրքիայի նկատմամբ: «Կյանքի որակը Հայաստանում 2015» հետազոտության դաշտային փուլը տեղի է ունեցել 2015թ. դեկտեմբերին: Այս սպեցիֆիկ գործոնի ազդեցությունը գումարվեց Հայաստանի հասարակությունում ռուսամետ շատ բարձր դիրքորոշումներին, որոնք 2015թ. կազմել են 80.4%: Նշենք, որ այդ հետազոտությունում եվրոպամետ դիրքորոշում ունեցող 12.4% հարցվածներից 9.7%ը դրական են վերաբերվել Վ.Պուտինին:

²Սովորողների կազմում շուրջ 80%-ը համալսարանների ուսանողներ են, իսկ շուրջ 20%-ը՝ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների:

Երկրորդ համաշխարհային պատերազմ

Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջնորդների շարքում դրական կերպարներն են Ու.Չերչիլը՝ վերաբերմունքի ինդեքսը՝ 40% և Շ. դը Գոլը՝ 37%: Բացասական կերպարներն են՝ Հիտլերը (-66%), նրա մերձավոր դաշնակից Մուսոլինին՝ -15%: Նշենք, որ Հիտլերի նկատմամբ դրական վերաբերմունք ուներ ուսանողների 11%-ը, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանի ապագա մտավորականության շրջանում առկա է ծայրահեղական ռասիստական գաղափարախոսությունների զարգացման պոտենցիալ:

Այս շարքում կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ չնայած Ստալինը հիտլերյան կոալիցիայի դեմ հաղթանակ տարած և պատերազմի բեռի հսկայական բաժինը կրած երկրի՝ ԽՍՀՄ-ի ղեկավարն էր և հակահիտլերյան կոալիցիայի գլխավոր դերակատարը, սակայն նրա կերպարն ունի վերաբերմունքի ինդեքսի խիստ բացասական արժեք՝ -38%: Ակնհայտ է, որ դա ստալինյան ժամանակաշրջանի նկատմամբ ընդհանուր դիրքորոշման հետևանք է, ինչը հիմնավորվում է նաև ներկայացված հետազոտության այլ տվյալներով: Մասնավորապես, ուսանողների 60 (53)%-ը¹ համաձայն է, որ «Ստալինը իմաստուն առաջնորդ էր, որի օրոք Խորհրդային Միությունը հզորացել և բարգավաճել է» և 68 (75)%-ը՝ «Չնայած Ստալինի բոլոր սխալներին՝ ամենակարևորն այն է, որ Խորհրդային Միությունը հաղթեց Հայրենական մեծ պատերազմում»: Սակայն ուսանողների 72 (75)%-ը համարում է, որ «Ստալինը դաժան և անմարդկային բռնակալ էր, ով պատասխանատու է միլիոնավոր անմեղ մարդկանց» կյանքի համար, և ընդամենը 26 (29)%-ն է համարում, որ «Մեր ժողովուրդը Ստալինի նման առաջնորդի կարիք ունի, ով կզա և երկրում կարգուկանոն կհաստատի»:

Ստալինի նկատմամբ վերաբերմունքի բնույթը բացատրող ռեգրեսիոն մոդելի վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողների շրջանում Ստալինի նկատմամբ վերաբերմունքը կայունացած է վերաբերմունքի բնույթի ինդեքսի բացասական գնահատականների տիրույթում: Այդ դիրքորոշումը շարժվում է դեպի դրական տիրույթ երեք դեպքում, առաջինը՝ երբ աճում է ուսանողների տեղեկացվածությունը ԽՍՀՄ բարգավաճման և հզորացման հարցում Ստալինի դերի մասին: Երկրորդը՝ այն դեպքում, երբ ուսանողների մեջ աճում է անհանդուրժողականությունը «կարգ ու կանոնի բացակայության» նկատմամբ, որը նրանք կցանկանային վերացնել նույնիսկ «ստա-

¹ Փակագծերում տրված է նույն հարցին Հայաստանում ուսանողների տված պատասխանները ՀՌԿԿ «Կովկասյան բարոմետր 2012» հետազոտությունում: Տվյալների շտեմարանը տե՛ս <http://caucasusbarometer.org/en/downloads/>


լինյան մեթոդներով»: Այդ երկու դիրքորոշումների բացակայության դեպքում Ստալինի նկատմամբ վերաբերմունքի բնույթի ինդեքսը կնվազեր մինչև -77%: Երրորդը՝ Ստալինի նկատմամբ վերաբերմունքի բնույթի ինդեքսի վրա հզոր ազդեցություն ունի նրա կերպարի ներկայացվածությունն ինֆորմացիոն դաշտում: Մասնավորապես, երբ ուսանողը «Լսել է նրա մասին, սակայն քիչ բան գիտի», «Որոշ բաներ գիտի տարբեր աղբյուրներից» և [իր կարծիքով] «լավատեղյակ է նրա մասին», այսինքն՝ տեղեկություններ է ստանում տարբեր մարդկանցից կամ ինֆորմացիոն դաշտից, ապա Ստալինի նկատմամբ վերաբերմունքի բնույթի ինդեքսը բացասական է և գտնվում է -37%-ից -45% միջակայքում: Սակայն երբ ուսանողը «կարդացել է Ստալինի որևէ աշխատանք», այսինքն, երբ տեղեկություններ է ստանում սկզբնաղբյուրից, ապա նրա դիրքորոշումը կտրուկ աճում է, անցնում է դրական գնահատականների տիրույթ և հավասար է դառնում 44%-ի, այսինքն՝ ավելի դրական, քան Չերչիլի և Դը Գոլի նկատմամբ վերաբերմունքի ինդեքսի արժեքներն են:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ ուսանողների պատմական հիշողության վիճակի մեկ այլ գնահատական է պարունակում հետևյալ հարցին նրանց տված պատասխանների բաշխումը. «Ձեր կարծիքով՝ ո՞ր երկիրն է ամենամեծ ներդրումն ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում» (Գծապատկեր 3): Հարցման ընթացքում ուսանողներին պատասխանների տարբերակներ չեն ներկայացվել: Ճիշտ պատասխանը՝ «ԽՍՀՄ», տվել է ուսանողների ընդամենը 20%-ը: Եվս 49%-ը պատասխանել է՝ Ռուսաստանը: Պատասխանը «մոտավորապես ճիշտ է», քանի որ պատերազմում հաղթել է ԽՍՀՄ-ը՝ որի կազմում էր ոչ միայն Ռուսաստանը, այլև ևս 14 հանրապետություն, այդ թվում նաև Հայաստանը: Հետևաբար, այդ ուսանողների պատմական հիշողությունում արդեն «ԽՍՀՄ» հասկացությունը բավականաչափ խարխլվել է և նույնացվում է «Ռուսաստան» հասկացության հետ: Ուսանողների հիշողությունում արդեն կամ պարզունակացված, կամ աղավաղված են ոչ միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին տեղեկությունները, այլև ԽՍՀՄ-ի և ՀԽՍՀ-ի հետ շաղկապված այլ տեղեկությունները: Հատկանշական է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ հաղթանակում ամենամեծ ներդրում ունեցած պետությունների շարքում նշվել են նաև ԱՄՆ-ը (4.7%), Ֆրանսիան (2.8%) և Մեծ Բրիտանիան (1.4%): «Այլ» պետություններ կատեգորիայում հիմնականում նշվել է Հայաստանը: Այսինքն, ուսանողի մեջ

կազմավորվել է «տարօրինակ» հիշողություն՝ նա հիշում է, որ Հայաստանն այդ պատերազմում «հաղթող է եղել»: Սակայն անտեղյակությունն այդ պատերազմի մասշտաբի, պատերազմի հիմնական դերակատարների և Հայաստանի հարաբերական և բացարձակ չափերի մասին այդ ուսանողների համար անհնար է դարձրել իր իսկ պատասխանի ռեֆլեքսիան: Նշենք նաև, որ հարցին դժվարացել է պատասխանել ուսանողների բավական նշանակալի հատված՝ 13%:

Գծապատկեր 3

Ուսանողների կարծիքով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ հաղթանակում ամենամեծ ներդրում ունեցած երկրները



Եզրակացություններ

ԵՊՀ ուսանողության շրջանում Հայաստանի XX դարի պատմական հիշողությունը նշանակալիորեն խարխլված է: Խարխլված է նաև Հայաստանի պատմության երկու կարևոր համատեքստերի՝ ԽՍՀՄ և Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ հիշողությունը:

Բացի խարխլումից, ԵՊՀ ուսանողների պատմական հիշողությունում շեղված է Հայաստանի XX դարի պատմության կարևորագույն համատեքստը՝ ԽՍՀՄ-ը որպես քաղաքակրթական և աշխարհաքաղաքական Մեծ տարածք, որի կազմում Հայաստանը հասել է իր պատմության առնվազն վերջին 1000 տարիների համար ամենամեծ տնտեսական, գիտական, կրթական և մշակութային հաջողություններին:

Եթե հաշվի առնենք այն, որ արդի աշխարհակարգը գտնվում է բովանդակային փոխակերպման ինտենսիվ բիֆուրկացիոն փուլում և արդի հասարակագիտական մտքի հանգուցային խնդիրն է՝ նոր հասարակարգի ուրվագծերի և հիմնական բնութագրերի կանխատեսումն ու գիտակցված կազմավորումը, ապա XX դարի կարևորագույն սոցիալական ձեռքբերումները պայմանավորող ԽՍՀՄ-ի և դրա կազմում՝ Հայաստանի վերաբերյալ պատմական հիշողության խարխլումն ու շեղումը նեղացնում են նոր հասարակարգի վերաբերյալ գիտական փնտրտուքի հայեցակարգային հիմքերը:

Հուլիս, 2018թ.

XX դարի ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հոդվածում անդրադարձ է կատարվել ԵՊՀ ուսանողության աշխարհայացքում պատմական հիշողության մի քանի էական բաղադրիչների բնույթի ընդհանուր նկարագրին: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ԵՊՀ ուսանողության շրջանում Հայաստանի XX դարի պատմական հիշողությունը նշանակալիորեն խարխլված է: Խարխլված է նաև Հայաստանի պատմության երկու կարևոր համատեքստերի՝ ԽՍՀՄ և Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ հիշողությունը: Շեղված է նաև Հայաստանի XX դարի պատմության կարևորագույն համատեքստը՝ ԽՍՀՄ-ը որպես քաղաքակրթական և աշխարհաքաղաքական Մեծ տարածք, որի կազմում Հայաստանը հասել է իր պատմության առնվազն վերջին 1000 տարիների համար ամենամեծ տնտեսական, գիտական, կրթական և մշակութային հաջողություններին:

ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ XX ВЕКА В СТУДЕНЧЕСКОЙ СРЕДЕ

Самвел Манукян

Резюме

В статье представляется общая характеристика восприятия нескольких ключевых компонентов исторической памяти в мировосприятии студентов ЕГУ. Исследование показало, что историческая память студентов ЕГУ относительно Армении в XX веке значительно исковеркана. Искажена также память о двух важных контекстах истории Армении – периоде СССР и Второй мировой войны. Искажен также важнейший контекст армянской истории XX века – восприятие СССР как Большой цивилизационной и геополитической территории, в составе которой Армения достигла наибольших экономических, научных и культурных успехов по меньшей мере за последнее тысячелетие своей истории.

THE MEMORIES OF THE 20TH CENTURY AMONG THE STUDENTS

Samvel Manukyan

Resume

The article presents a general overview of the nature of several significant components in the historical memory of the Yerevan State University (YSU) students' worldview. The study has demonstrated that the historical memory of the 20th century history of Armenia has been significantly undermined. The memories on the two important contexts of the Armenian history, USSR and WWII are also undermined. Another crucial context of the 20th century Armenian history is distorted, which is the USSR as a civilizational and geopolitical Major Space, in which Armenia achieved significant economic, scientific, educational and cultural successes.

ԿԻԲԵՌՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Նանա Աղայան՝

Բանալի բառեր՝ ազգային անվտանգություն, հիբրիդային պատերազմ, կիբեռնահնցագործություն, սպառնալիքներ, համացանց:

21-րդ դարում ցանկացած երկրի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության պահպանման և բնակչության բնականոն կենսագործունեության համար է՛լ ավելի կարևոր նշանակություն են ձեռք բերում ազգային անվտանգությունն ապահովելու և արտաքին սպառնալիքներին դիմագրավելու հարցերը: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, առավել ևս՝ հաշվի առնելով այն ոչ բարեկամական աշխարհագրական միջավայրը, որում գտնվում է մեր հանրապետությունը: Վիճակն ավելի է բարդացնում դարաբաղյան հիմնահարցի լուծված չլինելը:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գործընթացներն աննախադեպ արագություն են հավաքել, պետությունների միջև գծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, հետզհետե մեծանում են անգամ տարբեր մայրցամաքներում գտնվող պետությունների միջև փոխկապվածությունն ու փոխկախվածությունը: Արդյունքում՝ սրվում են աշխարհաքաղաքական հակամարտությունները՝ փոխելով քաղաքական, տնտեսական, ռազմական հարաբերությունների հավասարակշռված բնույթը: Սրվում է բնական ռեսուրսների համար պայքարը, առաջ են գալիս նորանոր մարտահրավերներ՝ ուղղված քաղաքացիների բարեկեցության, անվտանգության դեմ [1]:

Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո, այսպես կոչված Մառը պատերազմին հաջորդած նոր ժամանակահատվածում՝ հետարդիական տեղեկատվական դարաշրջանում, պետությունների միջև տեղի ունեցող հակամարտությունները հաճախ շեղվում են ավանդական ռազմական

¹ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող:

բնույթից՝ ստանալով բոլորովին նոր ձև ու բովանդակություն՝ տեղեկատվական, հոգեբանական, տնտեսական, վիրտուալ և տարատեսակ այլ պատերազմների տեսքով: Այս առումով առաջին դիրքերում դարձյալ գերտերություններն են՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, ԵՄ երկրներ և այլն: Նրանց միջև շարունակվում է ազդեցության համար պայքարը երկրագնդի տարբեր տարածաշրջաններում: Այս ամենը հղի է համաշխարհային քառսի հանգեցնելու վտանգով:

Ելնելով այս մտահոգությունից՝ ՄԱԿ սպառնալիքների, մարտահրավերների և փոփոխության բարձր մակարդակի խմբի 2005թ. «Առավել անվտանգ աշխարհ. մեր ընդհանուր պատասխանատվությունը», A/59/565 զեկույցում թվարկվել էին վեց հիմնական սպառնալիքներ, որոնց լուծմամբ առաջնահերթորեն պետք է զբաղվեր համաշխարհային հանրությունը՝ 1. պետությունների միջև պատերազմները, 2. բռնությունը երկրների ներսում, այդ թվում՝ քաղաքացիական պատերազմները, մարդու իրավունքների զանգվածային խախտումները և ցեղասպանությունը, 3. աղքատությունը, վարակիչ հիվանդությունները և բնապահպանական ավերումը, 4. միջուկային, ռադիոգիտական, քիմիական և կենսաբանական զենքը, 5. ահաբեկչությունը, 6. կազմակերպված վերագրային հանցավորությունը¹:

Այս զեկույցից ավելի քան մեկ տասնամյակ անց նշյալ սպառնալիքները որևէ չափով չեն նվազել, ավելին՝ մեծացել են: Սիրիական ճգնաժամը, որը դեռ շարունակվում է, ավելի քան ակնհայտորեն ցույց տվեց դա: Մասնավորապես, ահաբեկչության սպառնալիքը ոչ միայն ահագնացավ, այլև հանգեցրեց իրական ողբերգության: Սիրիայի և հարևան Իրաքի միլիոնավոր բնակիչներ դարձան փախստականներ, հարյուր հազարավորները զոհվեցին: Ստեղծված իրավիճակը ցույց է տալիս, թե որքան վտանգավոր ու կործանարար կարող է լինել ահաբեկչությունը որպես բարիք ներկայացնող գաղափարախոսությունը: Դրա ցայտուն վկայությունը Մերձավոր Արևելքում տարբեր ծայրահեղական կազմակերպությունների հենքի վրա առաջացած «Իսլամական պետություն» (ԻՊ) ահաբեկչական խմբավորման աննախադեպ չափերի հասնելն է [2]: Վերջին հինգ-վեց տարում ծայրահեղ իսլամիստական այս կազմակերպությունը կարողացավ լուրջ ռազմական խաղացող դառնալ՝ 2013թ. գրավելով Սիրիայի և Իրաքի տարածքների զգալի մասը, որոշ գնահատականներով՝ վերահսկելով շուրջ 90 հազար կմ²: Դրանից գատ՝ ԻՊ-ը աշխարհի տարբեր ծայրերում իրեն թշնամական

¹ <http://www.sns.am/index.php/am/nss-today/legislation/61-law-on-security-bodies>

հռչակած երկրներում ահաբեկչական գործողություններ է իրականացնում՝ փորձելով մշտական վախի ու լարվածության մեջ պահել այդ երկրների խաղաղ բնակչությանը:

Հատկանշական է, որ այս կազմակերպությունը լայնորեն և արդյունավետորեն օգտագործում է տեղեկատվական դարաշրջանի տեխնիկատեխնոլոգիական և մյուս հնարավորությունները: Իտալական «*il Messaggero*» թերթը վկայակոչում է Իտալիայի ներքին գործերի նախարար Մարկո Մինիտիի՝ Հռոմի Լուիսի համալսարանում կիրեռանվտանգությանը նվիրված համաժողովում ունեցած ելույթը, որում նա ասում է. «ԻՊ-ը առաջին ահաբեկչական կազմակերպությունն է, որը համացանցը դարձրել է իր հիմնական զենքը: Համաշխարհային ցանցը կարևորագույն դեր է խաղում արմատական իսլամի հետևորդների թիվը մեծացնելու և կրոնական մոլեռանդություն տարածելու գործընթացում: Այդ աշխատանքի 80%-ը կատարվում է համացանցի միջոցով, գլխավորապես՝ զինյալների և կողմնակիցների հավաքագրելու նպատակով»¹: Մինիտին հայտարարել է, որ ահաբեկչական նպատակներով համացանցն օգտագործելը «բարդ և լուրջ» խնդիր է, որի դեմ լուծումներ գտնելը չափազանց դժվար է:

Կիրեռահանցավորության աճն աշխարհում վկայում է, որ կիրեռահաբեկչության սպառնալիքը համացանցում ավելի ու ավելի իրական է դառնում և իրապես լուրջ վտանգներ է պարունակում պետությունների ազգային անվտանգության համար [3]: Այս սպառնալիքն ավելի քան իրական է, բնավ չափազանցված չէ, և դրա ամենավառ ապացույցներն են տարբեր ինտերնետ-ռեսուրսների, տեղային ցանցերի, տվյալների պահոցների և կառավարական կազմակերպությունների վրա հաքերային գրոհների ավելի ու ավելի աճող քանակն ու որակը: Ցանցահենները չեն բավարարվում միայն տնտեսական կամ ֆինանսական տվյալներ հափշտակելով, ժամանակ առ ժամանակ նրանք փորձեր են անում թափանցելու պետական անվտանգությունն անմիջականորեն ապահովող գերատեսչությունների, ռազմավարական օբյեկտների տվյալների բազա՝ դրանք խափանելու կամ այնտեղից գաղտնի տեղեկատվություն գողանալու համար: Այն իրողությունը, որ քաղաքացիների, երկրների և պետությունների կենսագործունեության մեծ մասը կառավարվում է ցանցերի և ծրագրերի միջոցով, էականորեն բարձրացնում է նրանց խոցելիությունը կիրեռհարձակումների նկատմամբ:

¹ «ԻՊ-ի ահաբեկիչներն իրենց կողմնակիցների 80 տոկոսին հավաքագրել են Համացանցի միջոցով», 5 հոկտեմբերի 2017թ. // <http://www.armenpress.am>

Հռոմի վերոնշյալ համաժողովում նաև նշվել է, որ աշխարհում հաքերների գրոհներից ընդհանուր վնասը տարեկան կազմում է \$445 մլրդ: 2020թ. այդ թիվը կարող է հասնել \$3 տրլն-ի:

2007թ. ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության «Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները» բաժնում ամրագրված են նաև արտաքին սպառնալիքները, որոնցից են «ահաբեկչությունն ու անդրսահմանային հանցագործությունները. Հայաստանի Հանրապետության համար անմիջական սպառնալիք է ներկայացնում միջազգային ահաբեկչությունը՝ իր բոլոր դրսևորումներով, զանգվածային ոչնչացման զենքի և թմրանյութերի տարածումն ու տարանցումը, փողերի «լվացումը», մարդկանց առևտուրը (թրաֆիքինգ)»¹: Հաշվի առնելով կիրեռհանցավորության աճի միտումները և այն, որ դեռևս ոչ մի երկիր ապահովագրված չէ նման հարձակումներից՝ անհրաժեշտություն է առաջանում, որ մեր երկիրն ավելի կարևորի այս խնդիրը և՛ օրենսդրական, և՛ գործնական առումներով:

Պետք է նշել, որ վիրտուալ տիրույթում թշնամական գործողությունների հարցն առավել սուր է դրված հակամարտություններում ներգրավված երկրների անվտանգային միջավայրն ապահովող ծառայությունների ու մարմինների առջև [4]:

1994թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախի Հանրապետություն) դարաբաղյան հակամարտության շուրջ խաղաղ կարգավորման բանակցություններին զուգահեռ՝ դարաբաղա-ադրբեջանական և հայաստանա-ադրբեջանական շփման գծում շարունակում են դիմագրավել հակառակորդի ռազմական ոտնձգությունները: Ավելին՝ վերջին մեկուկես տասնամյակում արդեն Ադրբեջանի դեմ պայքարում են վիրտուալ ճակատում: Հակառակորդը, ոչ մի կերպ չհամակերպվելով ձևավորված ստատուս քվոյի հետ, ձգտում է մեծ ռեսուրսների ներգրավմամբ գերազանցության հասնել հայկական կողմերի նկատմամբ վիրտուալ, տեղեկատվական և կիրեռպատերազմներում:

Արդեն նորություն չեն ադրբեջանական հաքերների և հաքերային խմբերի պարբերական գրոհները հայկական կազմակերպությունների, պետական կայքերի, սերվերների վրա: Հատկապես հիշարժան օրերին, տարելիցներին նրանք չափազանց ակտիվանում են, և մեկ օրում կարող են գրոհի

¹ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf

ենթարկվել հարյուրավոր կայքեր, ուստի անհրաժեշտ է լինում ձեռնարկել անհրաժեշտ անվտանգության պաշտպանողական միջոցներ:

Անկասկած, վիրտուալ ճակատում գործող խմբերի մեծ մասը գործում է Ադրբեջանի անվտանգության ու պաշտպանության մարմինների ուղղորդմամբ և ֆինանսավորմամբ, հետևաբար՝ վստահաբար կարելի է պնդել, որ այդ գործելաոճը շարունակվելու է ավելի մեծ ընդգրկումով:

Նկատենք, որ վերջին շրջանում ստեղծված միջազգային իրադրությանը համահունչ՝ հակամարտող պետություններն ավելի հաճախ են սկսել կիրառել հիբրիդային պատերազմի մարտավարությունն ու ռազմավարությունը: Ըստ Ջոն Մակքեյնի [5]՝ սա թշնամական գործողությունների տեսակ է, որի դեպքում հարձակվող կողմը չի դիմում ռազմական ներխուժման դասական եղանակին, այլ օգտագործում է հակառակորդին ճնշելու տարբեր ձևերի համադրություններ՝ քողարկված գործողություններ, դիվերսիաներ, կիբեռնհարձակումներ, տեղեկատվական ներգործություն և այլն: Հիբրիդային պատերազմը ենթադրում է բարձրտեխնոլոգիական ինտելեկտուալ համակարգերի, ռադիոէլեկտրոնային, կիբեռնետիկ, տեղեկատվական-հոգեբանական միջոցների կիրառում: Ընդ որում, պայքարի մեջ են ներգրավվում նաև ոչ զինվորական անձինք ու կազմակերպություններ, որոնք հաճախ անտեսանելի են մնում:

Հիբրիդային պատերազմի տարրերի կիրառումն ակներև էր Լիբիայի առաջնորդ Քադաֆիին գահընկեց անելիս, Սիրիայում քաղաքացիական պատերազմ սանձազերծելիս, ինչպես նաև Եմենում, Ուկրաինայում տեղի ունեցած պետական հեղաշրջումների ժամանակ:

Ներկայում Հայաստանի և Արցախի դեմ Ադրբեջանը հենց այդպիսի հիբրիդային պատերազմ է վարում, որն իրականացվում է ոչ միայն ռազմական սպառազինության, այլև քաղաքական քարոզչության, ահաբեկչության, ապատեղեկատվության և այլ միջոցներով¹:

ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը 2015թ. մարտի 26-ին «Միվիլնեթ» կայքին տված հարցազրույցում ասաց, որ Ադրբեջանը Հայաստանի դեմ վարում է հիբրիդային պատերազմ, որի հիմնական նպատակը հակառակորդին հյուծելն է: Հիբրիդային պատերազմի բաղադրիչներից է նաև սահմանային լարվածությունը շարունակաբար պահպանելը: Ժամանակ առ ժամանակ դիվերսիոն գործողություններ ձեռնարկելով և միջադեպեր հրահրելով սահմանին՝ հակառա-

¹ <https://www.civilnet.am/news/2015/03/26/interview-artsrun-hovhannisyan.../265671>

կորդը փորձում է հիբրիդային պատերազմների տարբեր բաղադրիչներ կիրառել. մասնավորապես՝ առաջացնել խուճապ, բարոյահոգեբանական ընկճվածություն, անկումային տրամադրություններ: Տեսական ժամանակ այս հնարքները գործի դնելուց հետո Ադրբեջանը փորձեց ստուգել դրանց տված արդյունքն ու իր ռազմական ուժի համադրությունը: Սակայն 2016թ. ապրիլի 2-5-ի քառօրյա պատերազմը ցույց տվեց ադրբեջանական ղեկավարությանը, որ ներկայում Արցախի տարածքի զավթումը ռազմական ճանապարհով ոչ միայն բարդագույն, այլև անիրականանալի խնդիր է ադրբեջանական բանակի համար: Հետևաբար, այդ երկիրը կրկին ակտիվացրեց վիրտուալ-քարոզչական հարթությունում առավելության ձգտելու իր մարտավարությունը:

Ասվածից պետք է եզրակացնել, որ այսօր հայկական կողմերի ազգային անվտանգության արտաքին սպառնալիքների շարքում գլխավորն Ադրբեջանի զավթողական հավակնություններն ու գործողություններն են: Դրանց դիմագրավելու համար հայկական հանրապետությունները չափազանց մեծ անելիքներ ունեն: Լինելով նաև Արցախի անվտանգության երաշխավոր՝ Հայաստանը պարտավոր է այնքան կատարելագործել իր անվտանգային համակարգը, որ կարողանա արդյունավետ հակազդել այդ հիբրիդային ազդեցություններին:

Հուլիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Какурин В.Ю., Трудов А.Э., Борьба за ресурсы в современном мире /* <https://www.scienceforum.ru/2016/1394/18048>
2. *Тарасов Станислав, Ближний Восток: диагностика будущего года // Regnum, 27.12.2014.*
3. *Աղայան Վ. Վ., Ազգային անվտանգության հիմնախնդիրներ, Եր., 2014:*
4. *Почепцов Г.Г., Информационные войны, Серия: Образовательная библиотека, Издательство: Рефл-бук, 2001.*
5. *McCuen, John J. Hybrid wars // Military Review 88.2 (2008), p. 107.*

**ԿԻԲԵՐՈՒՄԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ**

Նանա Աղայան

Ամփոփագիր

Հետարդիական տեղեկատվական դարաշրջանում պետությունների միջև տեղի ունեցող հակամարտությունները հաճախ շեղվում են ավանդական ռազմական բնույթից՝ կրելով բոլորովին նոր ձև ու բովանդակություն՝ տնտեսական, տեղեկատվական, հոգեբանական, վիրտուալ պատերազմների և մրցակցության տեսքով: Հետևաբար, փոփոխվել են նաև ազգային անվտանգության ավանդական ընկալումներն ու մոտեցումները:

Դասական ռազմական գործողություններին փոխարինող ներազդման արդի ձևերի, միջոցների, մեթոդների կիրառումը նոր սպառնալիքներ ու մարտահրավերներ է առաջացնում պետությունների անվտանգության համար:

Հետազոտության մեջ փորձ է արվում ներկայացնել Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգի առջև ծառայած արտաքին սպառնալիքները, որոնցից են ահաբեկչության տարբեր դրսևորումները, հատկապես կիբեռաահաբեկչությունը, դարաբաղյան հակամարտության համատեքստում Հայաստանի ու Արցախի դեմ Ադրբեջանի վարած հիբրիդային պատերազմի մարտավարությունը:

Նշվում է պետության կողմից դրանց դիմակայելու և հակազդելու համար հզոր անվտանգային համակարգ ստեղծելու կարևորությունը:

**КИБЕРУГРОЗЫ – НОВЕЙШИЕ ВЫЗОВЫ
НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА**

Нана Агаян

Резюме

В постмодернистскую информационную эпоху межгосударственные конфликты зачастую отклоняются от традиционного военного пути, обретая совершенно новую форму и содержание – в виде экономических, информационных, психологических, виртуальных войн и конкуренции. Как следствие, изменились и традиционные подходы и восприятие национальной безопасности.

Сменившие классические военные действия современные формы, средства и методы воздействия обусловили новые угрозы и вызовы безопасности государства.

В работе предпринята попытка представить внешние угрозы, стоящие перед системой безопасности Республики Армения, в числе которых – разные проявления терроризма, особенно кибертерроризм, тактика гибридной войны, проводимой Азербайджаном против Армении и Арцаха.

Отмечается необходимость создания государством мощной системы безопасности для противодействия этим вызовам.

CYBER THREATS AS A NEW CHALLENGE TO THE NATIONAL SECURITY OF ARMENIA

Nana Aghayan

Resume

In the postmodern information era the conflicts between the states often deviate from the traditional military format and have a completely different form and content, such as economic, information, psychological, virtual warfare and competition. Therefore, the traditional perceptions and approaches to the national security have changed, too.

The modern forms, means, and methods of influence that come to replace the traditional military interventions create new threats and challenges for the national security of the states.

The study attempts to present the external threats the Republic of Armenia faces, including various forms of terrorism, particularly cyberterrorism and the hybrid warfare tactics deployed by Azerbaijan against Armenia and Artsakh in the context Karabakh conflict.

The importance of a powerful security system to be established by the government in order to resist and counter these threats is emphasized.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Վահրամ Հովյան՝

Բանալի բառեր՝ Թուրքիա, հայություն, համայնք, կալվածքներ, պատմամշակութային ժառանգություն, զբոսաշրջություն:

Թուրքիայի հայ համայնքը ներկայում կանգնած է մի շարք լրջագույն մարտահրավերների առաջ: Տասնամյակներ շարունակ հոգևոր և ֆիզիկական անվտանգությանը սպառնացող վտանգները հանգեցրել են այդ երկրում հայության թվաքանակի աղետալի նվազմանը: Այս երևույթը, առհասարակ բնորոշ լինելով Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներին, ուղղակիորեն հանգեցնում է վերջիններիս թուլացմանն ու կազմալուծմանը: Եթե 1960-ական թթ. Թուրքիայի հայության թվաքանակը կազմում էր մոտ 200 հազար մարդ, ապա 21-րդ դարի սկզբին այն հաշվվում է մոտ 80 հազար: Համայնքի սպառնան գործընթացը, ցավոք, շարունակվում է և չկանգնելու դեպքում կհանգեցնի վերջինիս իսպառ վերացմանը:

Իսկ դա իր բացասական հետևանքները կունենա բովանդակ հայության համար՝ նվազագույնը երկու առումով: Նախ՝ ծանր հարված կհասցվի արևմտահայ քաղաքակրթությանը, քանի որ առկա բոլոր խնդիրներով հանդերձ Թուրքիայի հայությունը, մասնավորապես՝ Կ.Պոլսի հայ համայնքը, եղել և մնում է արևմտահայ մշակութաստեղծ հանրույթ:

1. Այստեղ լույս են տեսնում հայալեզու թերթեր («Ժամանակ», «Նոր Մարմարա», «Ակոս»), որոնց էջերում ոչ միայն պահպանվում, այլև զարգանում է արևմտահայերենը: Այնտեղ, բացի լուրերից, հրատարակվում են նաև հրապարակախոսական, գրական և այլ ժանրի նյութեր:
2. Կ.Պոլսում, չնայած բազմաթիվ դժվարություններին, շարունակում է ծաղկել արևմտահայ գրականությունը: Անցյալի գրողների ստեղծա-

^{*} «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

գործությունների հետ մեկտեղ հրատարակվում են նաև ժամանակակից պոլսահայ գրողների երկերը, ինչը նշանակում է, որ առկա է կենսունակ գրական հայ համայնք, որին էլ պատկանում է ներկա բարդ ժամանակներում արևմտահայ գրականության զարգացման առաքելությունը:

3. Կ.Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է նաև հայագիտական գրականություն, ինչը վկայում է այն մասին, որ այնտեղ առկա է ոչ միայն մշակութային, հրապարակախոսական, գրական, այլև գիտական հայ կյանք:
4. Թուրքիայում շարունակում է կենսունակ մնալ նաև հայկական մշակույթը: Գործում են արվեստի և մշակույթի բազմաթիվ ստեղծագործական խմբեր, որոնք ապահովում են այդ երկրի հայության մշակութային կյանքը:

Առհասարակ, Կ.Պոլիսը նախքան Ցեղասպանությունը եղել է արևմտահայ հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի կենտրոնը: Ներկայում էլ այն, թերևս՝ ինտերցիայի ուժով, շարունակում է այդ ավանդույթները: Պատահական չէ, որ քաղաքում գործում է «Արաս» հայկական տպարանը, ինչը ևս մեկ անգամ վկայում է այնտեղ հայ գրչության առկայության մասին:

Այսպիսով, չնայած թվաքանակի նվազմանը, գրական, գիտական, մշակութային կյանքը Թուրքիայի հայ համայնքում շարունակվում է և դրանով իսկ շարունակում է սնել արևմտահայ (նաև հայկական՝ առհասարակ) քաղաքակրթությունը: Մինչդեռ համայնքի սպառումը սպառնում է վերջ տալ նաև այդ կյանքին, ինչը լրջագույն հարված կլինի թե՛ Միջուրքին և թե՛ հայությանն ընդհանրապես:

Երկրորդ խնդիրը, որը կապված է Թուրքիայի հայության սպառման հետ, Կ.Պոլսի Հայոց պատրիարքության ճակատագիրն է: Նման սցենարի դեպքում Հայ Առաքելական եկեղեցու չորս նվիրապետական աթոռներից մեկը կհայտնվի «առանց հոտի մնացած հովվի» կարգավիճակում: Թուրքիան հայության վիճակի տեսակետից կնմանվի Հնդկաստանին, որտեղ կան հայկական եկեղեցիներ, կալվածքներ, սակայն չկա համայնք:

Համայնքի ծանր դրության մասին են վկայում նաև այն հակասությունները, որոնք հատկապես վերջին շրջանում առավել ակնառու են երևում համայնքային տարբեր շրջանակների միջև: Օրինակ՝ 2018թ. օգոստոսի 1-ին Կ.Պոլսի «Նոր Մարմարա» օրաթերթը տեղեկություն հրապարա-

կեց, համաձայն որի՝ Թուրքիայի կրոնական փոքրամասնությունների հոգևոր և համայնքային առաջնորդները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ նշելով, որ այդ երկրում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ որևէ ճնշում չկա, իրենք ազատ են իրենց կրոնական-պաշտամունքային և համայնքային գործունեության մեջ, իսկ առկա փոքր խնդիրները լուծելու նպատակով համագործակցում են իշխանությունների հետ [տե՛ս 1]:

Մինչդեռ պատրիարքարանի կրոնական ժողովի ատենապետ Սահակ եպս. Մաշայանը հուլիսի 6-ին նորընտիր նախագահ Ռեջեփ Էրդոդանին հղած բաց նամակում ահագանգում էր հայ համայնքի թվաքանակի՝ ահռելի չափերով նվազման մասին՝ մատնանշելով, որ դա հետևանք է ճնշումների քաղաքականության: Մաշայանը որպես հիմնախնդիրներ մատնանշում էր Մեսրոպ պատրիարք Մութաֆյանի ծանր հիվանդությունից հետո շուրջ 10 տարի նոր պատրիարք ընտրելու անհնարինությունը, եկեղեցիները կառավարող Թաղային խորհուրդների ընտրության անհնարինությունը, հոգևորականներ պատրաստելու համար քրիստոնեական ուսումնական հաստատությունների բացակայությունը: Ըստ Սահակ սրբազանի՝ այսպես շարունակվելու դեպքում հայ համայնքը մոտ ապագայում լիովին կսպառվի [տե՛ս 2]:

Կրոնական փոքրամասնությունների առաջնորդների հիշյալ հայտարարությանն անմիջապես հետևեց Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր, Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության անդամ Կարո Փայլանի առարկությունը: Վերջինս, կրկնելով Սահակ սրբազանի կողմից բարձրաձայնված խնդիրները, պատկերավոր ավելացրեց, որ հայ համայնքի ներկայացուցիչները «աղանիի վախկոտութեան մեջ են» [3]:

Համայնքում ստեղծված բարդ իրավիճակը, ինչպես նաև վերոհիշյալ հակասական հայտարարությունները որոշակի լուսաբանության անհրաժեշտություն են առաջացնում: Քանի որ մի կողմից՝ Թուրքիայի հայ համայնքին առնչվող բոլոր խնդիրներին անհնար է անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակներում, մյուս կողմից էլ՝ նոր պատրիարքի, թաղային խորհուրդների ընտրության, հոգևոր-կրթական հաստատությունների հիմնահարցերին բավական լայն անդրադարձ արդեն իսկ կա լրագրողական և վերլուծական հարթություններում, սույն վերլուծության մեջ խնդիրը կփորձենք դիտարկել երկու այլ՝ ա) եկեղեցական գույքի և բ) հայկական պատմամշակութային ժառանգության տեսանկյուններից:

Հայկական կալվածքների խնդիրը

Այս խնդիրը վերաբերում է բռնագրավված եկեղեցական գույքի վերադարձին, ինչի համար տևական ժամանակ պայքարում են Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունն ու թաղային խորհուրդները: Այն առավելապես առնչվում է Թուրքիայի հայության տնտեսական մարտահրավերներին:

Թեև Թուրքիայի հայ համայնքին ընդհանուր առմամբ բնորոշ են սփյուռքի, մասնավորապես, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների առջև ծառայած մարտահրավերները, այնուամենայնիվ, հայությունն այստեղ ունի նաև տեղական առանձնահատկություններից բխող խնդիրներ, որոնց մի մասին անդրադարձ եղավ վերը: Տեղական առանձնահատկություններից բխող խնդիրներից է նաև այն, որ հայ համայնքի դիմագրաված դժվարությունները հիմնականում ունեն նյութական (ֆինանսական) բնույթ: Այս խնդիրը բացասաբար է անդրադառնում հատկապես կրթական հաստատությունների գործունեության վրա, որոնք պարբերաբար կանգնում են բյուջեի սղության (երբ ծախսերը գերազանցում են առկա հնարավորությունները) խնդրի առջև՝ ստիպված լինելով բացը լրացնել հանգանակությունների միջոցով:

Չնայած վերջին շրջանում Թուրքիայի դիմագրաված տնտեսական դժվարություններին, հայ համայնքում նյութական սղության խնդիրը մեծ հաշվով կապված է եկեղեցական կալվածքների բռնագրավված լինելու, ինչպես նաև առկա գույքի օգտագործման սահմանափակ հնարավորությունների հետ, քանի որ դրանց օգտագործումը (հիմնականում՝ վարձակալության հանձնումը) մեծ եկամուտների աղբյուր է համայնքային կառույցների համար:

Հարկ է նշել, որ բռնագրավված կալվածքների վերադարձման հարցում կան թեկուզ փոքրիկ, բայց դրական տեղաշարժեր: 2018թ. ընթացքում նույնպես գրանցվեցին այդպիսի մի քանի փոքրիկ հաղթանակներ:

Փետրվարին երեք և կես տարի տևած դատական գործընթացից հետո Թուրքիայի Վճռաբեկ դատարանի վճռով Կ.Պոլսի «Սանասարյան տան» շենքը ճանաչվեց որպես Հայոց պատրիարքարանի սեփականություն [տե՛ս 4]: Թեև շենքի հանձնումը պատրիարքարանին կարող է ձգձգվել մինչև մեկ տարի, այնուամենայնիվ, հիշյալ դատական ակտը հայկական համայնքային շրջանակների կողմից դիտվում է որպես հաղթանակ¹:

¹ Կա նաև կարծիք, որ Թուրքիայի իշխանություններն այդ քայլին գնացին նոր պատրիարքի ընտրության գործընթացը տապալելուց հետո հայ համայնքում առաջացած դժգոհությունը մեղմելու նպատակով: Տե՛ս Ստամբուլի «Սանասարյան տան» շենքի սեփականության իրավունքը կրկին հայերինն է, <http://hayernaysor.am/archives/275429> (կայքի այցելություն՝ 26.02.2018):

Մեկ այլ հաղթանակ է վեցամյա դժվարին պայքարից հետո Օրթագյուղի Թաղային խորհրդի կողմից ընդարձակ հողատարածքի՝ դատական կարգով հետստացումը Թուրքիայի պաշտպանության նախարարությունից: Մեկ թաղամասի չափ տարածք ընդգրկող այդ հողամասը Թաղային խորհուրդը նպատակադրվել է կառուցապատել, այնուհետև՝ շենքերի վարձակալության միջոցով եկամուտներ ապահովել համայնքի համար [տե՛ս 5]:

Սույն դատական ակտերը, բացի տնտեսականից, կարևոր են նաև նախադեպի առումով: Քանի որ դրանք կարող են հող նախապատրաստել նաև բռնագրավված մյուս կալվածքների վերադարձի համար:

Չնայած հայ համայնքային կառույցներին հաջողվում է հետ վերադարձնել բռնագրավված համայնքային գույքի որոշ մասը, սակայն այս հարցում իրավիճակը հեռու է բավարար լինելուց, ինչի ախտանշաններն են հետևյալ հանգամանքները.

Հսկայական թվով կալվածքներ դեռևս շարունակում են մնալ բռնագրավված, դրանց վերադարձի հեռանկարներն անորոշ են:

Առկա են առարկայական և ենթակայական խոչընդոտներ համայնքի տրամադրության տակ եղած կալվածքների շահագործման առումով: Վերջերս նման խնդրի առջև է կանգնել Կ.Պոլսի Սամաթիայի Թաղային խորհուրդը: Վագրֆների տնօրինության կողմից այն որպես նվիրատվություն ստացել է ընդարձակ հողատարածք: Սակայն այն հայտարարված է կանաչ գոտի, որտեղ արգելվում է որևէ շինարարություն իրականացնել: Մինչդեռ այդ հողատարածքի վրա կառուցված շենքերի վարձակալության հանձնումը կարող է նշանակալի եկամուտներ բերել խորհրդին:

Ստացվում է, որ մի կողմից՝ նվիրաբերելով ընդարձակ հողատարածք Սամաթիայի Թաղային խորհրդին, պետությունը մյուս կողմից թույլ չի տալիս դրա միջոցով եկամուտներ ապահովել: Թուրքական դատական համակարգի բոլոր ատյաններով անցնելուց հետո Թաղային խորհուրդը ներկայումս խնդիրը վիճարկում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում [6]:

Ինչպես ցույց են տալիս գույքի վերադարձման սակավաթիվ օրինակները, այդ գործընթացը տևական և դժվարին, իսկ ավելի ճիշտ՝ տանջալի գործընթաց է: Դատական քաջքշուկները ձգվում են տարիներով: Պատահական չէ, որ խնդիրները լուծում են ստանում դատական համակարգի ամենավերին ատյաններում՝ վճռաբեկ դատարանում կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում¹:

¹Նախորդ հրապարակումներում մատնանշվել են թուրքական պետության կողմից եկեղեցական գույքի վերադարձման հարցում համակարգված կերպով հարուցվող խոչընդոտները, որոնցից մեկն էլ բարդ ու տևական դատական գործընթացներն են [տե՛ս 7, էջ 611-614]:

Եթե Թուրքիայի իշխանություններն անկեղծ են հայ համայնքին իրենից բռնագրավված գույքը վերադարձնելու հարցում, ապա դրա համար կան շատ ավելի դյուրին իրավական ուղիներ, օրինակ՝ նվիրատվությունը կամ խորհրդանշական գներով վաճառքը: Այս իրավական ուղիների անտեսումն ու խնդրի լուծման երկարաձգումը տևական դատական և բյուրոկրատական քաշքշուկների միջոցով վկայում են այն մասին, որ թուրքական իշխանությունների կողմից հռչակված հայկական (և ընդհանրապես՝ քրիստոնեական) եկեղեցական գույքի վերադարձման քաղաքականությունը շարունակում է կրել հիմնականում ձևական բնույթ՝ նպատակ հետապնդելով աշխարհին ցույց տալ Թուրքիայի՝ իբրև «ժողովրդավարական» և իր (կրոնական) փոքրամասնությունների մասին «հոգ տանող» պետության նկարագիրը:

Նյութական դժվարությունները լրացուցիչ պառակտման աղբյուր են հանդիսանում Թուրքիայի հայության համար: Առաջանում է սոցիալական բևեռացում Կ.Պոլսի հայկական համայնքների միջև: Հարուստ թաղամասերը կարողանում են լուծել իրենց խնդիրները և որոշ չափով օգնել նաև աղքատներին: Մինչդեռ աղքատ թաղամասերը շարունակաբար տառապում են նյութական անբավարարությունից:

Սույն խնդիրը հաղթահարելու համար պոլսահայության շրջանում առաջ է քաշվել միասնական բյուջե ունենալու գաղափարը, որն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին. բոլոր հայկական թաղային խորհուրդների եկամուտները պետք է ի մի բերվեն և տնօրինվեն պատրիարքարանի կողմից, որպեսզի վերջինս կարողանա բավարարել բոլոր համայնքային կառույցների կարիքները:

Այս գաղափարը, սակայն, շահերի բախում է առաջացնում հարուստ և աղքատ թաղային խորհուրդների միջև: Աղքատներին ձեռնտու է օգտվել ընդհանուր բյուջեի հնարավորություններից: Մինչդեռ հարուստները չեն ցանկանում բաժանել իրենց եկամուտներն աղքատ թաղամասերի հետ և զրկվել դրանք սեփական հայեցողությամբ տնօրինելու հնարավորությունից: Այս հակասությունը ցայտուն կերպով դրսևորվում է 10 տարի առաջ Կ.Պոլսում հիմնված Համայնքային կառույցները միավորող խորհրդի աշխատանքներում: Վերջինս, համակարգված աշխատանքի հարթակ լինելու փոխարեն, ավելի շատ հանդես է գալիս որպես անառողջ բանավեճերի ակումբ՝ այն աստիճան, որ կասկածի տակ է դրվում անգամ նրա գոյության անհրաժեշտությունը:

Պատմամշակութային ժառանգության խնդիրը

Այս առումով նույնպես վերջին շրջանում նկատվող դրական տեղաշարժերի կողքին առկա են նաև մտահոգիչ երևույթներ: Դրական տեղաշարժերից արժե հիշատակել երեքամյա ընդմիջումից հետո Աղթամարի Մուրբ խաչ եկեղեցում տարին մեկ անգամ պատարագ մատուցելու արտոնության վերականգնումը: Այս տարի պատարագը տեղի ունեցավ սեպտեմբերի 9-ին:

Մեկ այլ դրական երևույթ կարելի է համարել ահաբեկչական խմբավորումների և Թուրքիայի զինված ուժերի բախման հետևանքով լրջորեն վնասված Տիգրանակերտի (Դիարբեքի) 19-րդ դարի հայկական Ս. Կիրակոս եկեղեցու¹ վերանորոգման հեռանկարը: Կ.Պոլսի պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը սույն խնդրով դիմել է երկրի Կենսոլորտի և քաղաքաշինության նախկին և ներկա նախարարներ Մեհմեդ Յոզհասեթին և Մուրադ Քուրումին, ինչպես նաև Վազրֆների ընդհանուր տնօրեն Ադնան Էրթեմին [տե՛ս 8, 9]: Վերջիններս դրական են արձագանքել փոխանորդի դիմումին, թեև գործնական քայլեր այս ուղղությամբ դեռևս ձեռնարկված չեն:

Մտահոգիչ հանգամանքը հիմնականում այն է, որ թուրքական պետության կողմից հայկական պատմամշակութային հուշարձանների վերականգնումը հետապնդում է միայն զբոսաշրջությունը զարգացնելու նպատակ: Դրա ամենապերճախոս վկայությունը Վանի Աղթամար կղզու Մուրբ խաչ հայկական եկեղեցու օրինակն է, որը, թեև վերանորոգվել է պետության միջոցներով, սակայն չունի եկեղեցու կարգավիճակ: Այն հանդես է գալիս որպես թանգարանային արժեք: Սկզբում իշխանությունների թույլտվությամբ տարեկան մեկ անգամ պատարագ էր մատուցվում եկեղեցում: Հետագայում արգելվեց նաև դա, ինչը որոշակի վնաս էր երկրի զբոսաշրջությանը: Երեք տարվա ընդմիջումից հետո՝ միայն այս տարի, թուրքական իշխանությունները, հավանաբար հաշվի առնելով երկրի տնտեսական անկումը վերջին շրջանում և զբոսաշրջության դերը Թուրքիայի տնտեսության մեջ, կրկին թույլատրեցին անցկացնել պատարագ: Ակնկալվում էր, որ դրա արդյունքում Թուրքիա կայցելի մոտ 3000 զբոսաշրջիկ: Նախկինում այս առումով առավելագույն թիվը եղել է 7000:

Այն, որ Թուրքիայի համար Վանի Աղթամար կղզու Մուրբ խաչ եկեղեցին սոսկ թանգարանային նմուշ է զբոսաշրջության զարգացման համար, երևում է եկեղեցու հարակից տարածքում գտնվող հայկական գերեզմանա-

¹ Երկարատև ընդմիջումից հետո եկեղեցին վերաբացվել էր 2011թ.:

տան նկատմամբ պետության վերաբերմունքից: Վերջինս, մատնված լինելով անտարբերության ու անհոգ վերաբերմունքի պատկան մարմինների կողմից, ներկայում գտնվում է անմխիթար վիճակում: Այն նույնիսկ ծառայում է որպես զվարճության և ժամանցի վայր զբոսաշրջիկների համար [տե՛ս 10]: Ստացվում է, որ, վերականգնելով հայկական եկեղեցին, թուրքական պետությունը, այնուամենայնիվ, արհամարհական վերաբերմունք ունի նրա տարածքի մաս կազմող հայկական ժառանգության մեկ այլ հատվածի նկատմամբ և կամա թե ակամա նպաստում է վերջինիս ոչնչացմանը:

Հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ Թուրքիայի սոսկ տնտեսագիտական մոտեցումը երևում է նաև այն հանգամանքով, որ պետությունը ուշադրություն է դարձնում միայն այն եկեղեցիների վրա, որոնք ունեն թանգարանային արժեք և հետաքրքրություն կարող են ներկայացնել զբոսաշրջիկների համար: Իսկ այն հուշարձանները, որոնք այդ տեսակետից մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, արժանանում են լիովին այլ վերաբերմունքի: Դրանք.

1. Դիտավորյալ կամ պետության լռելյայն թույլտվությամբ ենթարկվում են ոչնչացման: Ամենավառ օրինակը 2017թ. Վանա լճի՝ ներկայում հանգստյան գոտի հանդիսացող ավամերձ հատվածում գտնվող հայկական գերեզմանատան վրա պետքարանների, ավտոկայանատեղիի և հանդերձարանի կառուցումն էր: Դա ոչ միայն ոտնձգություն է հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ, անհարգալից վերաբերմունք այնտեղ թաղված հանգուցյալների հիշատակի հանդեպ, այլև հանգեցրել է վերջիններիս աճյունների պղծմանը: Արդյունքում՝ գերեզմանատունը հայտնվել է նաև գանձագողերի թիրախում: Շինությունների կառուցումը դժգոհության ու բողոքի ալիք բարձրացրեց հայկական շրջանակներում: Մասնավորապես, Թուրքիայի խորհրդարանում այս հարցը բարձրացրեց հայազգի պատգամավոր Կարո Փայլանը: Այդ բողոքներին ի պատասխան թուրքական իշխանությունները՝ ի դեմս Սշակույթի և զբոսաշրջության նախարար Նուման Գուրթուվուշի, 2017թ. վերջին խոստացան քանդել կառուցված շինությունները, ինչը, սակայն, մինչ այժմ իրականացված չէ՝ տեղական իշխանությունների (Էդրեմիթի¹ քաղաքապետարան)՝ կենտրոնական իշխանությունների հրահանգը չկատարելու պատճառով [11]:

2 Օգտագործվում են այլ նպատակներով: Այս առումով վերջին ամենաթարմ օրինակներն են.

¹ Գերեզմանատունը գտնվում է աշխարհահռչակ գեղանկարիչ Արշիլ Գորկու ծննդավայր նախկին հայկական թաղամասի հարևանությամբ:

- Աքշեհիր քաղաքի հայկական եկեղեցիներից մեկը, որը կառուցվել է 19-րդ դարում, թեև վերանորոգվել է պետության կողմից, սակայն ենթարկվել է վերափոխության: Այն նախատեսվում է օգտագործել որպես երգիծաբանների մշակութային տուն [տե՛ս 12]:
- Կեսարիայի Ս. Աստվածածին եկեղեցին, որ նախկինում օգտագործվել է որպես ոստիկանական բաժին և մարզասրահ, ներկայումս նախատեսվում է վերածել գրադարանի: Այդ նպատակով քաղաքապետարանն արդեն իրականացրել է վերանորոգչական-վերականգնողական աշխատանքներ [13]:
- Էսքիշեհիրի Սիվրիհիսարի շրջանի հայկական Ս. Երրորդություն եկեղեցին, որը կառուցվել է 1650թ., վերջերս վերանորոգվել է Թուրքիայի մշակույթի նախարարության կողմից, սակայն նախատեսված է ծառայեցնել մշակութային ձեռնարկների իրականացմանը: Ուշագրավ է, որ եկեղեցին վերանորոգելիս մշակույթի նախարարությունը նրա բակում ստեղծել է արձանների պուրակ, ուր տեղադրվել են Աթաթյուրքի և Քյազիմ Քարաբեքիր փաշայի, նրանց կողքին՝ թուրք մշակութային գործիչների արձանները [տե՛ս 14]:
- Վերջերս թուրքական իշխանությունները ձեռնամուխ են եղել նաև Սվասի Կյուրյուն գավառակի հայկական եկեղեցու վերանորոգմանը՝ այդ նպատակով հատկացնելով մոտ 4 մլն լիրա: Սակայն վերականգնված եկեղեցին լինելու է գործող եկեղեցի, թե՛ ծառայեցվելու է որպես թանգարանային նմուշ կամ օգտագործվելու է այլ նպատակներով՝ այս հարցի պատասխանը պարզ չէ [տե՛ս 15]:

3. Որպես «լքյալ գույք» վաճառվում են մասնավոր անձանց: Օրինակ՝ Բուրսայի Սեթբաշը թաղամասում գտնվող 300-ամյա հնության հայկական եկեղեցու շենքը, որը նախկինում վաճառվել էր մասնավոր անձի և օգտագործվում էր զանազան այլ նպատակներով, վերջերս սեփականատիրոջ կողմից կրկին հանվել է վաճառքի՝ \$1.5 մլն արժեքով [տե՛ս 16]:

4. Պատկան մարմինների անտարբերության հետևանքով ժամանակի ընթացքում ենթարկվում են «բնական» մաշման և տարերային աղետների (երկրաշարժեր, սողանքներ և այլն) ու զանձագողերի հասցրած հարվածներին: Այս առումով որպես ամենաթարմ օրինակներ նշենք հետևյալները.

- Ուրֆայի Գերմուշ գյուղի հայկական Ս. Աստվածածին եկեղեցին, որը մինչև 2013թ. օգտագործվել է որպես անասնագոմ, «կը մարտնչի» ո՛չ միայն բնութեան տարերային աղետներու, այլ նաև զանձագողերու

յաճախակի յարձակումներու դէմ» [17]: Չնայած եկեղեցու և իր շրջակայքի՝ զբոսաշրջության գոտի հայտարարված լինելու հանգամանքին, լիակատար անտարբերության պայմաններում նրա պատերը խարխուլ վիճակում են և կարող են վերջնականապես փլվել¹:

- Գազիանթեփի Նիզիփ շրջանի հայկական եկեղեցին, որը Վազըֆների շրջանային վարչության կողմից վերանորոգվել էր 2011թ., ներկայումս կրկին հայտնվել է լքյալ ու անմխիթար վիճակում: Եկեղեցու պատերին հայտնվել են գրություններ, ապակիները կոտրվել են, տանիքին խոտ է աճել, իսկ բակը վերածվել է խաղահրապարակի սիրիացի փախստական երեխաների համար [18]:
- Տրապիզոնի Օրթոհիսար շրջանի Բոզթեփե գավառի՝ 15-րդ դարի Ս. Ամենափրկիչ վանական համալիրի եկեղեցին, որ միակ կանգուն մնացած շինությունն է համալիրում, ներկայումս անմխիթար վիճակում է: Անմխիթար վիճակում են նաև վանական համալիրի տարածքում գտնվող հայկական խաչքարերը: Վանական համալիրը հրդեհի է ենթարկվել Ցեղասպանության տարիներին, և ներկայումս եկեղեցին տեղաբնակ մասնավոր մի անձի սեփականությունն է: Նույն կարգավիճակում են գտնվում նաև նախքան Ցեղասպանությունը տարածաշրջանում գործած, ներկայումս ավերված 100-200 հայկական եկեղեցիների ու վանական համալիրների մեծ մասի տարածքները [19]:

Հայկական պատմամշակութային հուշարձանները զբոսաշրջության զարգացմանը ծառայեցնելու նպատակն անթաքույց արտահայտվել է նաև Թուրքիայի պատկան մարմինների կողմից: Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցու առնչությամբ Վանի Առևտրական պալատի Վարչական խորհրդի անդամ Սուրադ Բեյագն ասել է. «Կրնանք Վանը դարձնել Թուրքիոյ ամենէն կարեւոր զբոսաշրջական կեդրոններէն մէկը» [20]:

Այն, որ հայկական որոշ եկեղեցիների վերականգնումը չի հետապնդում կրոնական փոքրամասնությունների իրավունքների վերականգնման նպատակ, երևում է նաև այդ երևույթին թուրքական հասարակական շրջանակների որոշակի հակազդեցությամբ: Այսպես, Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցում տարեկան մեկ անգամ պատարագ մատուցելու արտոնության վերականգնումը որոշակի խանդ է առաջ բերել Թուրքիայում: Այդ առնչությամբ «Յենի Ազիթ» թերթի հրապարակած մի հոդվածում դժգոհու-

¹ Սույն խնդիրը կարելի է վերագրել նաև վերջին շրջանում Թուրքիայի տնտեսական դժվարություններին:

թյուն է արտահայտվում առ այն, որ մինչ քրիստոնյաները կարողանում են կրոնական արարողություններ իրականացնել թանգարանի կարգավիճակ ունեցող եկեղեցիներում, մուսուլմանները զրկված են նման արտոնությունից Այա Սոֆիայի մզկիթում [տե՛ս 20]:

Այսպիսով, Թուրքիայի կողմից հայկական պատմամշակութային ժառանգության վերականգնման քաղաքականությունը հետապնդում է երկու նպատակ՝ ա) Եվրոպական ինտեգրման (Եվրոպական միությանն անդամակցելու) նկրտումների համատեքստում Թուրքիայի՝ որպես «ժողովրդավարական» և փոքրամասնությունների նկատմամբ «հանդուրժողական» երկրի կերպարի ստեղծում և բ) զբոսաշրջության խրախուսում: Առաջին գործոնը, կապված Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության մշուշոտ հեռանկարի, Թուրքիա-Արևմուտք հարաբերություններում վերջին շրջանում նկատվող լարվածության և Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունների փոփոխության հետ, աստիճանաբար կորցնում է իր հրատապությունն ու ազդեցությունը: Երկրորդ գործոնը, պայմանավորված վերջին շրջանում Թուրքիայի տնտեսական աննպաստ դրության հետ, աստիճանաբար վերականգնում է նախկին ազդեցությունը:

Հոկտեմբեր, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Թուրքիոյ փոքրամասնութեան կրօնական ու համայնքային ներկայացուցիչները հասարակաց հաղորդագրութիւն հրատարակեցին, Նոր Մարմարա, օգոստոսի 1, 2018թ.:
2. Գերշ. Տ. Սահակ եպսկ. Մաշալեանի բաց նամակը՝ ուղղեալ հանրապետութեան նախագահ՝ Բէճէփ Թայյիպ Էրտողանի, Նոր Մարմարա, հուլիսի 11, 2018թ.:
3. Կարօ Փայլանի յայտարարութիւնը, Նոր Մարմարա, օգոստոսի 2, 2018թ.:
4. Արամ սրբազան շահեցավ Վագրֆներու ընդհանուր տնօրէնութեան դէմ բացուած դատը, Նոր Մարմարա, փետրվարի 16, 2018թ.:
5. Օրթագիւղի Թաղային Խորհուրդի երէկուան մամլոյ ասուլիսը, Նոր Մարմարա, սեպտեմբերի 26, 2018թ.:
6. Մամաթիա այս կիրակի կը բանա մատաղօրհնութիւններու եղանակը, Նոր Մարմարա, հոկտեմբերի 26:
7. *Հովեան Վ.*, Եկեղեցական գոյքի վերադարձման խնդիրը որպէս Հայոց պահանջատիրութեան բաղկացուցիչ, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԼԵ (35), Պէյրութ, 2015:
8. Արամ սրբազանի շփումները՝ Անգարայի մէջ, Նոր Մարմարա, մայիսի 16, 2018թ.:
9. Պատրիարքական ընդհանուր փոխանորդին շփումները մայրաքաղաքի մէջ, Նոր Մարմարա, սեպտեմբերի 6, 2018թ.:
10. Վանի հայկական եկեղեցիին կից գերեզմանատունը զուարճութեան վայրի վերածուեցաւ, Նոր Մարմարա, օգոստոսի 31, 2018թ.:

11. Թէն խոստացած էին փլցնել, բայց Վանի հայկական գերեզմանատան վրայ կառուցուած արտաքննչները դեռ հոն են, Նոր Մարմարա, հոկտեմբերի 4, 2018թ.:
12. Ազշէհիբի հայկական եկեղեցիներէն մէկը կը վերածուի «երգիծարաններու տան», Նոր Մարմարա, հուլիսի 26, 2018թ.:
13. Կեսարիոյ Ս. Սատուածածին եկեղեցին գրադարանի կը վերածուի, Նոր Մարմարա, մայիսի 21, 2018թ.:
14. «Ենի Ագիթ» թերթի արձագանգը Սիվրիհիսարի հայկական եկեղեցիի մասին, Նոր Մարմարա, մարտի 23, 2018թ.:
15. Կիւրիւնի հայկական եկեղեցին պիտի վերականգնուի, Նոր Մարմարա, սեպտեմբերի 28, 2018թ.:
16. Պուրսայի մէջ հայկական եկեղեցոյ շէնքը 1.5 միլիոն տոլարով ծախու հանուած է..., Նոր Մարմարա, օգոստոսի 28, 2018թ.:
17. Ուրֆայի Կերմուշ գիւղի հայկական եկեղեցին կործանման եզրին է, Նոր Մարմարա, օգոստոսի 16, 2018թ.:
18. Կազիանթէփի հայկական եկեղեցին լքեալ ու անմխիթար վիճակի մէջ է, Նոր Մարմարա, հոկտեմբերի 27, 2018թ.:
19. Տրապիզոնի միակ կանգուն հայկական վանքը անմխիթար վիճակի մէջ է, Նոր Մարմարա, հոկտեմբերի 9, 2018թ.:
20. Ընկերային էջի վրայ գանգատ «Մինչ մահմետականներուն արգիւում է Այա Սօֆիայի մէջ արարողութիւն կատարել, թանգարանի վերածուած եկեղեցիներու մէջ քրիստոնէաները արարողութիւն կը կատարեն», Նոր Մարմարա, օգոստոսի 20, 2018թ.:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Հայությունը Թուրքիայում կանգնած է մի շարք լուրջ մարտահրավերների առաջ, որոնցից է հայկական կալվածքների և պատմամշակութային ժառանգության խնդիրը: Թէն վերջին տարիներին որոշ արդյունքներ գրանցվել են բռնագրավված եկեղեցական գույքի վերադարձման ուղղությամբ, սակայն այս հարցում վիճակը հեռու է բարվոք լինելուց, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում համայնքային կառույցների, մասնավորապես, կրթական հաստատությունների գործունեության վրա՝ միաժամանակ պատճառ դառնալով համայնքի ներսում հակասությունների և պառակտման միտումների խորացման:

Հայկական պատմամշակութային ժառանգության հարցում Թուրքիան հիմնականում ցուցաբերում է տնտեսագիտական մոտեցում՝ վերականգնելով և զբոսաշրջության զարգացման նպատակով որպես թանգարանային նմուշ օգտագործելով հայկական եկեղեցիները: Իսկ այն հուշարձանները, որոնք զբոսաշրջության տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում, դիտավորյալ կամ պետության լռելյայն համաձայնությամբ շարունակում են ոչնչացվել, վաճառվում են մասնավոր անձանց, օգտագործվում այլ նպատակներով, պատկան մարմինների անտարբերության հետևանքով հայտնվում անմխիթար վիճակում:

ПРОБЛЕМА АРМЯНСКИХ ВЛАДЕНИЙ И КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКОГО НАСЛЕДИЯ В ТУРЦИИ

Ваграм Овян

Резюме

Армянство в Турции стоит перед очень серьезными вызовами, в числе которых проблема армянских владений и культурно-исторического наследия. Хотя в последние годы отмечались некоторые успехи в вопросе возвращения конфискованного церковного имущества, однако ситуацию в этом плане трудно назвать удовлетворительной, что в свою очередь негативно сказывается на деятельности общественных структур, в частности образовательных учреждений, одновременно становясь поводом углубления конфликтов и тенденций к разобщенности общин.

В вопросе армянского культурно-исторического наследия Турция в основном проявляет экономический подход, восстанавливая армянские церкви и используя их в качестве музейных экспонатов для развития туризма. А те памятники, которые не представляют интереса в туристическом плане, сознательно или при молчаливом попустительстве государства продолжают уничтожаться, продаются частным лицам, используются в иных целях, оказываются в неутешительном состоянии из-за равнодушия надлежащих структур.

THE PROBLEMS OF ARMENIAN ESTATES AND HISTORICAL AND CULTURAL LEGACY IN TURKEY

Vahram Hovyan

Resume

The Armenians in Turkey face a number of challenges, and the issue of Armenian estates and historical/cultural legacy is one of them. Although certain progress has been observed in return of church property, the situation is far from being good, which in turn, negatively affects the community structures, particularly the activities of educational institutions, causing conflicts and division inside the community.

Turkey approaches the Armenian historical/cultural legacy primarily from the economic perspective, restoring the Armenian churches and using them as tourist attractions. The monuments that are not interesting from the touristic viewpoint continue to be destroyed through government action or inaction, sold to private individuals or used for other purposes, turning them into state of disrepair due to the indifference of the authorities.

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ

*Թաթուլ Մանասերյան**

Բանալի բառեր՝ Սմբատ Սպարապետ, տնտեսական դիվանագիտություն, ներքին և արտաքին մարտահրավերներ, տնտեսական շահեր:

Ներքին և արտաքին մարտահրավերներին համարժեք արձագանքելու կարողությունը պետության կարևորագույն գործառնություններից է: Ակնհայտորեն, երկրի ներքին մարտահրավերները, հիմնականում, կարող են գնահատվել տնտեսական սպառնալիքների արժեչափման տիրույթում և արտահայտել պետության՝ տնտեսական անվտանգության ապահովման համապատասխան ներուժը: Ինչ վերաբերում է արտաքին մարտահրավերներին, ապա դրանք, բացի արտաքին տնտեսական սպառնալիքների վնասագերծման հրամայականից, պահանջում են նաև տնտեսական դիվանագիտության հստակ ուղղվածություն և ծրագիր:

Շատերն այն համոզման են եկել, որ տնտեսական դիվանագիտությունը ժամանակակից աշխարհի նվաճումներից է: Ավելին, կան բազմաթիվ երկրներ, որոնց համար տնտեսական դիվանագիտությունը լավագույն դեպքում տեսական կամ գիտական երևույթ է, հետևաբար, այն որևէ կերպ չի ներառվում պետական դիվանագիտության զինանոցում:

Ակնհայտ է, որ տնտեսական դիվանագիտության էությունը, ձևերը և դրսևորումները տարբեր են տնտեսության զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներում¹: Միաժամանակ, դինամիկ փոփոխվող աշխարհում գրեթե յուրաքանչյուր պետություն արտաքին տնտեսական կապերի կարգավորման գործում առանձնակի ուշադրություն է դարձնում քաղաքական գործընթացներում տնտեսական շահերի արժևորմանը, միջազգային տնտեսական կապերի զարգացման օրինաչափություններին, պե-

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիական փորձագիտական ակումբի անդամ:

¹ R.Saner, L. Yiu, *International Economic Diplomacy: Mutations in Post-modern Times*, Discussion Papers in Diplomacy, Netherlands Institute of International Relations “Clingendael”, s. 10, http://www.transcend.org/t_database/pdfarticles/318.pdf

տության նոր դերի բացահայտմանը: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ինչպես գործնական, այնպես էլ գիտական և տեսական առումներով համապատասխան մոտեցումներ և մեթոդաբանական հիմքեր ձևավորել տնտեսական դիվանագիտության և դրա զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

Հատկանշական է, որ Հայաստանն այսօր կարող է հաշվի առնել ոչ միայն զարգացած երկրների տնտեսական դիվանագիտության փորձը, այլև անդրադառնալ իր պատմության տարբեր փուլերում պետական և ազգային գործիչների, մտավորականների որոշակի ձեռքբերումներին:

Հաշվի առնելով ոչ միայն զենքով և զորքով երկրի անվտանգության ու պաշտպանունակության ամրապնդման հրամայականը՝ ժամանակի ընթացքում պետություններում ձևավորվել են արտաքին ուժերի հետ հարաբերվելու տարբեր մոտեցումներ: Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի 13-րդ դարի հայ ականավոր պետական գործիչ, դիվանագետ, զորավար և մտավորական Սմբատ Սպարապետի թողած պատմական ժառանգությունը:

Պատմական աղբյուրները վկայում են, որ Սմբատ Սպարապետը եղել է Հայոց Գերագույն ատյանի՝ Վերին կամ Մեծ դարպասի (քննում էր պետության ներքին ու արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերը) անդամ, անմիջականորեն մասնակցել պետական գործերին և երկրի կառավարմանը: Երկրում հասարակական հարաբերությունները կարգավորելու համար 1265-ին կազմել է իր նշանավոր «Դատաստանագիրքը», որը գործադրվել է մինչև Կիլիկյան պետության անկումը (1375): 1265-ին Սմբատ Սպարապետը հին ֆրանսերենից հայերեն է թարգմանել «Անտիոքի ազիսներ» դատաստանագիրքը:

Սմբատ Սպարապետի անունով պահպանվել են նաև արձանագրություններ, նամակներ (արժեքավոր է հատկապես 1247-ին Կիպրոսի թագավոր Հենրիխ Լուսինյանին գրած ֆրանսերեն նամակը), չափածո գործեր: Նշանավոր է 1269-ին Սմբատ Սպարապետի գրած «Ի ճաշոց գիրս» պոեմը՝ նվիրված 1266-ին Եգիպտոսի սուլթանության դեմ Մառի վայրում հայկական զորաբանակի մղած ճակատամարտին: Զբաղվել է նաև քերականությամբ: Սմբատ Սպարապետի պատվերով գրված Ավետարանում (Մատենադարան, ձեռ. թիվ 7644) պահպանվել են նրա ձեռքով արված քերականական շտկումները, տնտեսական դիվանագիտության համար կիրառելի ճիշտ ընթերցանությանը և հռետորական արվեստին նպաստելու համար

դրված առողջանության նշանները: Սմբատ Սպարապետը գրել է դյուրին, խոսակցականին մոտ հայերենով¹:

Սմբատ Սպարապետը խորապես գիտակցել է, որ բոլոր ժամանակներում տնտեսական դիվանագիտության կարևորագույն նպատակներից մեկը երկրի զարգացման համար կայուն և կանխատեսելի միջավայրի ապահովումն է: Ըստ որում, նա հավասարապես կարևորել է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական և քաղաքական պայմանները: Նրա գործունեության առանցքում հայոց պետականության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումն ու ամրապնդումն էին, որտեղ առանցքային դեր է հատկացված Հայոց ազգային օրենսդրությանը: Վերջինս հիմնականում զարգացել է երկու ինքնավար իրավական համակարգերի՝ կանոնական իրավունքի և աշխարհիկ օրենսդրության ձևով: Առաջինը սկսել է ձևավորվել մ.թ. 4-րդ դարից սկսած, երբ քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց որպես պետական կրոն (301թ.): Սմբատ Սպարապետը հայոց ազգային օրենսդրությունը զարգացրեց Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»² հիման վրա, սեփական հիմնարար աշխատության միջոցով³ ներկայացնելով իր ժամանակների ֆեոդալական հարաբերությունների իրավական, տնտեսական և սոցիալական խնդիրների հանգուցալուծումը՝ օրինականության հաստատումը և առավել ցցուն հակամարտությունների վերացումը⁴: Գոշի «Դատաստանագրքը» Կիլիկիայի պայմաններին համապատասխան փոփոխված և կրճատված էր և գրաբարից թարգմանված էր կիլիկյան աշխարհաբարի: Դատաստանագրքում հոդվածները, թեև ոչ խստագույն հետևողականությամբ, դասակարգվել են իրավահարաբերությունների խմբավորման կամ առարկայական կարգավորման սկզբունքով: Անհատական ջանքերով գրված նոր «Դատաստանագրքը» ստացել է օրենսդրական և իրավական ակտի կարգավիճակ: Շնորհիվ այն հանգամանքի, որ հեղինակը Կիլիկյան Հայաստանի կառավարության ազդեցիկ ղեմքերից էր⁵ և, ամենայն հավանականությամբ, հասարակական պահանջից բացի, «Դատաստանագրքը»

¹ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1882:

² Մխիթար Գոշ, «Դատաստանագրք», Երևան, 2001:

³ Սմբատ Սպարապետ, «Դատաստանագրք», Երևան, 1958:

⁴ Էմ. Պիվազյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի առնչակցությունը, Բանբեր Մատենադարանի, #5, Երևան, 1960, էջ 117-134:

⁵ Սմբատ Սպարապետը Կոստանդին պալլի ավագ որդին է, Հեթում Ա (1226-1270թթ.) արքայի ավագ եղբայրը: Լինելով Հեթումյանների հայ իշխանական և թագավորական տոհմից՝ նա պատմական ասպարեզ էր ելել դեռևս Լևոն Երկրորդ արքայի (1187-1219թթ.) կառավարման շրջանում:

գրվել էր նաև Հեթում Առաջին արքայի անմիջական հանձնարարականով¹: Բացի այդ, նոր «Դատաստանագիրքն» առանձնանում է նաև նրանով, որ այն «իսկական օրենսգիրք է, դասակարգային բովանդակությամբ՝ ֆեոդալ-ճորտատիրական կողմից»²: Այն Կիլիկյան Հայաստանում գործադրվել է մինչև պետության անկումը (1375թ.): 1265թ. Սմբատ Սպարապետը ֆրանսերենից հայերենի է թարգմանում «Անտիոքի ասիզները»³: Հատկանշական է, որ «Անտիոքի ասիզները» առաջին անգամ հայերենից ֆրանսերենի է թարգմանել Ղևոնդ Ալիշանը⁴: «Անտիոքի ասիզները» բաղկացած է երկու մասից. առաջին մասը՝ 17, երկրորդ մասը՝ 21 հոդվածից, և բովանդակում է սենյորի և վասալի իրավական հարաբերությունները, ունեցվածքային, քրեական, ինչպես նաև ընտանեկան, ժառանգական և մի շարք այլ հոդվածներ⁵:

Տնտեսական դիվանագիտության տեսանկյունից Սմբատ Սպարապետի դատաստանագրքի իրավական և քաղաքական արժեքը, պատմական, ինքնաճանաչողական նշանակությունը, փորձագետների համոզմամբ, այն է, որ հաստատում է օրինականությունն ընդդեմ կամայականության, ըստ այդմ կարևորելով ուժեղ կենտրոնացված թագավորական իշխանության պահպանումը, ինչը հնարավոր է միայն օրինականության պահպանմամբ, քանզի զավթիչների ասպատակություններով վտանգված երկրի արտաքին անվտանգությունն ու քաղաքական գոյությունը հնարավոր էր ապահովել միայն պետական իշխանության հզորությամբ⁶:

Նույն նպատակն է հետապնդում նաև Սմբատ Սպարապետի Ռուբինյան թագավորության պատմությունը՝ «Տարեգիրքը», որը ոչ միայն Մեծ Հայքի, Կիլիկյան Հայաստանի ու պատմական Հայաստանի այլ հատվածների և տարբեր երկրներում տեղ գտած իրադարձությունների ժամանակագրություն է՝ ներառելով 951–1272թթ. առանցքային խնդիրները, զինված ընդհարումները, տնտեսական ներքին և արտաքին հարաբերությունները, այլև իրապես արժեքավոր աշխատություն է, որն օգնում է ուսումնասիրել Կիլիկյան Հայաստանի քաղաքական և տնտեսական դիվանագիտական

¹ Թ. Մանուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 92:

² Ա. Մուրխասյան, Սմբատ Սպարապետը որպես պատմիչ, օրենսգետ և օրենսդիր, էջ 103:

³ Assises d'Antioche, reproduites en francais et publiees au sixieme centenaire de la mort de Sempad le connetable, leur ancien traducteur armenien, par H. Alishan, Venise, 1876.

⁴ Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:

⁵ Գալստյան Ա., Սմբատ Սպարապետ, Երևան, 1961:

⁶ Էմ. Պիվագյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի առնչակցությունը, Բանբեր Մատենադարանի, #5, Երևան, 1960, էջ 117-134:

հարաբերությունները բազմաթիվ երկրների հետ¹: Մասնավորապես, Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել Բյուզանդիայի, արաբական երկրների, Վրաստանի և սելջուկների հետ առևտրատնտեսական հարաբերությունների, վիճահարույց խնդիրների, ընդհարումների քաղաքական և տնտեսական դրդապատճառների, միջպետական խնդիրները տնտեսական դիվանագիտության ճանապարհով լուծելու հնարավորությունների և արգելքների մասին: Միաժամանակ, այն հարուստ տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայի հայկական պետության և հարևան երկրների հարաբերությունների, հայմոնղոլական զինակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Հիշարժան են հատկապես մոնղոլների հետ ռազմաքաղաքական և տնտեսական կապերի էվոյուցիայի, Հեթում Ա-ի Ղարադորում կատարած ճանապարհորդության վերաբերյալ անդրադարձները²:

Ընդհանուր առմամբ, Սմբատ Սպարապետը, «Դատաստանագրքից» և «Տարեգրքից» զատ, մեծ ավանդ ունի հայ պոեզիայի զարգացման գործում՝ հեղինակելով բազմաթիվ պոեմներ, բանաստեղծություններ, որոնցից իր պատմական նշանակությամբ հատկապես առանձնանում է 1269թ. գրված «Ի ճաշոց գիրս» պոեմը՝ նվիրված Մառի ճակատամարտին: Առանձնապես կարևոր նյութեր է պարունակում 1247թ. Մամարդանդից իր փեսա՝ Կիպրոսի արքա Հենրիխին գրած նամակը: Սմբատ Սպարապետն այդ նամակում նկարագրում է այն ավերածությունները, որոնք կատարել էին մոնղոլները կենտրոնական Ասիայի խոշոր մուսուլմանական քաղաքներում և տեղեկություններ է հաղորդում կայսրությունում քրիստոնյա տարրի նշանակալի դերի մասին³: Գրական ստեղծագործություններում և պատմագրության մեջ քիչ չեն նաև երկրի ազգային խնդիրներին վերաբերող անդրադարձները: Ինչպես այսօր, միջնադարում ևս հայությանը հուզող կարևորագույն

¹ Երկար ժամանակ այս աշխատությունը հայտնի չէր հանրությանը: 1848թ. Մ.Ֆ. Բրոսեն Էջմիածնի վանքի գրադարանում հայտնաբերեց այդ ժամանակագրության երկու ձեռագիր օրինակներ, որոնց հիման վրա 1856թ. լույս տեսավ «Տարեգրքի» առաջին հրատարակությունը Ռուկան Նովիաննիսյանցի կողմից «Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթոմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց» խորագրով, ապա 1859թ. Կարապետ վ. Շահնագարեանցի կողմից Փարիզում լույս տեսավ երկրորդ հրատարակությունը՝ «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի հայոց որդոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ» վերնագրությամբ: Քիչ ավելի ուշ (1876թ.) հայտնաբերվեց ևս մեկ ձեռագիր օրինակ, այն հրատարակվեց 1956թ. Սերովբե Ազյանի կողմից՝ անհրաժեշտ որոշ նշումներով:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909:

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա.Մաթևոսյան, Երևան, 1984: *Նովսեփյան Գ.*, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951:

խնդիրներից են եղել հասարակության բնեռացումը, սոցիալական անարդարությունը, արտագաղթը և այլ երևույթներ:

Պատմությունը վկայում է, որ արտագաղթը, որպես ժողովրդագրական, տնտեսական և ազգային անվտանգության սպառնալիք, մշտապես եղել է հայոց պետականության և հայ ժողովրդի զարգացման առանցքային խնդիրներից մեկը: Լինելով հմուտ քաղաքական գործիչ և դիվանագետ՝ Սմբատ Մպարապետը փորձել է պարզել հայերի արտագաղթի պատճառները Մեծ Հայքից դեպի օտար երկրներ և գտնել դրա կասեցման ուղիները տնտեսական դիվանագիտության տարբեր մեթոդների օգնությամբ: Նա վերլուծել և դատապարտել է խաչակիրների ձեռնարկած քայլերը, մասնավորապես հիմնավորելով, որ հաճախ նրանց նպատակները որևէ առնչություն չեն ունեցել քրիստոնեական ուսմունքի տարածման հետ, այլ վերածվել են հսկայական նյութական արժեքների թալանի, հողերի զավթման և հարստահարման անհեռատես քաղաքականության, այդ թվում նաև՝ Կիլիկյան Հայաստանի հանդեպ: Նրա աշխատության շնորհիվ կարելի է պատկերացում կազմել նաև հայ իշխանական տոհմերի և նրանց ներկայացուցիչների հողային տարածքների, դրանց հանդեպ սեփականության իրավունքների, ներքին և արտաքին խնդիրների վերաբերյալ, ինչը կարևոր է այն ժամանակների Հայկական թագավորության տնտեսական, սոցիալական և քաղաքական կապերի օբյեկտիվ գնահատականի ձևավորման տեսանկյունից¹:

Կիլիկյան հայկական թագավորության և ժամանակակից Հայաստանի տնտեսական դիվանագիտության խնդիրները դիտարկելիս, անհրաժեշտաբար առանձնանում են նաև հասարակական, պետական, քաղաքական, իրավական և հոգևոր-մշակութային միջավայրերն ու դրանց փոխառնչությունները: Այսպես, օրինակ, չպետք է մոռանալ, որ միջին դարերում հատկապես ազդեցիկ էր հայ եկեղեցու և հոգևորականության դերը: Այնուհանդերձ, Սմբատ Մպարապետի հայացքները կրում էին ընդգծված աշխարհիկ բնույթ, թեև նա ևս չէր կարող լիովին ազատ լինել կրոնաաստվածաբանական մտածողությունից²: Այսպես, պետության և թագավորական իշխանության առաջացմանը նա տալիս է աստվածաբանական մեկնաբանություն. «թագավորքն յԱստուծոյ են կարգած»³: Ավելին, հենց այս մեկնակետից է Սմբատ Մպարապետը հիմնավորում Հայոց արքունիքի իր ժամանակների՝ Գագիկ Բագրատունու, Լևոն Երկրորդի, Հեթում Առաջինի դերը

¹ Երկն առաջին անգամ հրատարակվել է 1856-ին Մոսկվայում:

² Գ. Մաֆարյան, Սմբատ Մպարապետի իրավաքաղաքական հայացքները, Երևան, 1973, էջ 35:

³ Դատաստանագիրք, էջ 81:

որպես Աստծո տեղակալ երկրի վրա ինչպես պետության ներքին հարցերում, այնպես էլ արտաքին դիվանագիտական և ռազմական ասպարեզներում: Դրա հետ մեկտեղ, Սմբատ Սպարապետի առաջադիմական հայացքները դրսևորվում են «Դատաստանագրքի» իրավական նորմերով սահմանած հոգևոր և աշխարհիկ իշխանությունների տարանջատմամբ, ընդ որում՝ առաջնություն տալով աշխարհիկ իշխանությանը: Նա հստակ սահմանում է, որ եկեղեցին չպետք է զբաղվի աշխարհիկ գործերով, առավել ևս արտաքին դիվանագիտությամբ, ինչը բնորոշ էր ոչ միայն Արևելքի, այլև Եվրոպայի բազմաթիվ երկրներին, հատկապես՝ իսլամադավանների արշավանքների շրջանում¹: Այսուամենայնիվ, եկեղեցին պահպանում է իր արտոնյալ դերն ու հատուկ կարգավիճակն ինչպես հասարակության մեջ, այնպես էլ տնտեսության կառավարման համակարգում: Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» միանգամից մի քանի հոդվածով օրենսդրորեն ամրագրված են եկեղեցու արտոնյալ կարգավիճակը, ինքնուրույնությունը և գույքային սեփականությունը, հողերն ու այլ ունեցվածքը:

Այսպիսով, Սմբատ Սպարապետը պատկառելի ավանդ ունի պատմական Հայաստանի տնտեսական դիվանագիտության ձևավորման, պետական կառավարման համակարգի և դրա ինստիտուցիոնալ հիմքերի կայացման գործում: Ավելին, մեծանուն գորավարի և մտավորականի կողմից մշակված օրենսդրական բազմաթիվ դրույթներ կիրառվել են ինչպես հարևան երկրներում, այնպես էլ Եվրոպայում՝ հետագայում հիմք հանդիսանալով ազգային օրենսդրությունների համար: Մեր համոզմամբ, Սմբատ Սպարապետի բազմաբնույթ գործունեությանը համառոտ անդրադարձն անգամ էական է հայ ինքնության անաչառ գնահատման, ինքնաճանաչման և ժամանակակից մարտահրավերներին պատմության փորձությունն անցած մոտեցումները վերարժևորելու տեսանկյունից:

Հոկտեմբեր, 2018թ.

¹Նույն տեղում, էջ 5:

**ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. ՄՄԲԱՏ ՄՊԱՐԱՊԵՏ**

Թաթուլ Մանասերյան

Ամփոփագիր

Մմբատ Սպարապետը պատկառելի ավանդ ունի պատմական Հայաստանի տնտեսական դիվանագիտության ձևավորման, պետական կառավարման համակարգի և դրա ինստիտուցիոնալ հիմքերի կայացման գործում: 13-րդ դարի ականավոր պետական գործչի, մեծանուն գորավարի և մտավորականի մշակած օրենսդրական բազմաթիվ դրույթներ կիրառվել են ինչպես հարևան երկրներում, այնպես էլ Եվրոպայում՝ հետագայում հիմք հանդիսանալով ազգային օրենսդրությունների համար: Մմբատ Սպարապետի գործունեության համառոտ անդրադարձն անգամ էական է հայ ինքնության անաչառ գնահատման, ինքնաճանաչման և ժամանակակից մարտահրավերներին պատմության փորձությունն անցած մոտեցումները վերարժևորելու տեսանկյունից:

**ЭКОНОМИЧЕСКАЯ ДИПЛОМАТИЯ ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ:
СМБАТ СПАРАТЕТ**

Татул Манасерян

Резюме

Смбат Спаратет внес значительный вклад в формирование экономической дипломатии Армении, систему государственного управления и становление ее институциональных основ. Многочисленные законодательные постулаты, разработанные видным государственным деятелем, знаменитым полководцем и мыслителем 13 века, применялись как в соседних странах, так и в Европе, в дальнейшем став основой для разработки национальных законодательств. Даже краткий обзор деятельности Смбата Спаратета имеет существенное значение для объективной оценки армянской идентичности, самопознания и переосмысления испытанных историей подходов для отражения современных вызовов.

**THE ECONOMIC DIPLOMACY OF HISTORICAL ARMENIA:
SPARAPET SMBAT**

Tatul Manaseryan

Resume

Sparapet (Supreme Commander) Smbat had a sizable contribution in shaping the economic diplomacy, governance and establishment of its institutional foundation in historical Armenia. Numerous legal provisions developed by this renowned statesman, military commander and intellectual have been borrowed by the neighboring, as well as European countries, subsequently becoming a basis for national legislations. Even a brief summary of Sparapet Smbat's activities is essential for an unbiased assessment of the Armenian identity, self-perception and reevaluation of time-tested approaches to the modern challenges.

ՀԱՅԵՐԵՆԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Վահե Սարգսյան՝

Բանալի բառեր՝ Վրաստան, Չավախք, իրավական կարգավիճակ, վրացալեզու մամուլ, վրաց հասարակական-քաղաքական միտք:

Վրաստանի հարավային Սամցխե-Չավախք նահանգում և վերջինիս հարակից Ծավկայի շրջանում հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու անհրաժեշտության մասին, որպես գերազանցապես հայաբնակ այդ տարածաշրջանի զարգացման առաջնային նախապայման, բազմիցս է խոսվել: Վրաստանի անկախացումից ի վեր հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու մասին պահանջով բազմիցս հանդես են եկել Սամցխե-Չավախք-Ծավկա (այսուհետ՝ Չավախք) տարածաշրջանի մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպություններ և ազդեցիկ գործիչներ¹: Ցավոք, Վրաստանի բոլոր ժամանակների իշխանությունները որևէ կերպ չեն արձագանքել ջավախահայության այս պահանջին: Վրաստանն անգամ չի վավերացրել «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիան» (Ստրասբուրգ, 05.11.1992), որի պարտավորությունն ստանձնել է եվրակառույցներին անդամակցելիս (1999 թվականից): Արդյունքում՝ ներկայում Վրաստանում վրացերենի (պետական լեզվի)² կողքին Վրաստանի սահմանադրությամբ ամրագրված (8-րդ հոդված) իրավական կարգավիճակ ունի միայն արխազերենը³:

¹ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պ.գ.թ.:

² Չավախքում հայերենի իրավական կարգավիճակի հարցի շուրջ, 21-րդ ԴԱԸ, թիվ 3 (49), 2013, էջ 63-74:

³ Վրացերենի պահպանման և զարգացման իրավաբանական երաշխիքներ ստեղծելու նպատակով Վրաստանի խորհրդարանը 2015թ. հուլիսի 22-ին ընդունեց օրենք «Պետական լեզվի մասին», որտեղ սահմանվեց նաև «ազգային փոքրամասնությունների լեզու» հասկացությունը, ինչպես նաև հստակեցվեցին երկրի ոչ վրացի ազգաբնակչության կողմից մայրենիի կիրառման ինչ-ինչ սկզբունքներ:

⁴ Վրաստանի սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է. «Վրաստանի պետական լեզուն հանդիսանում է վրացերենը, Աբխազիայի Բնքնավար Հանրապետությունում՝ նաև արխազերենը», տե՛ս ՏՆՎՅՐԵՎԵԼՈՍ ԿՈՆՏԻՏՅՈՒՅՑԻՍ, թիվ 24, 1995 թվական, 24 ապրիլ, 2002 թվական, 28.10.2002 թվական, 128:

**2009թ. ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի՝ հայերենը Վրաստանում
մարզային լեզու ճանաչելու անհրաժեշտության մասին
սեպտեմբերյան հայտարարությունը**

ՀՀ իշխանությունները, հետխորհրդային ողջ ժամանակահատվածում հայեցակարգային մոտեցումներ չցուցաբերելով Ջավախքի հիմնահարցի նկատմամբ, առանձնակի կերպով չէին արձագանքում նաև Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու ջավախահայության պահանջներին: Այդ իմաստով աննախադեպ էր 2009թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, ՀԱԵ Վիրահայոց թեմի իրավական գրանցման և Վրաստանում հայկական հուշարձանների պահպանության վերաբերյալ հայտարարությունը: 2009թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «Ինտեգրում առանց ձուլման» սկզբունքից: Ինտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը: Կարծում եմ, որ *հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու* (ընդգծումը մերն է՝ Վ.Ս.) Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի՝ հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»¹:

ՀՀ նախագահի վերոնշյալ աննախադեպ հայտարարությանը հայկական և վրացական շրջանակները տարբեր կերպ արձագանքեցին: Ջավախահայությունը, բնականաբար, ողջունեց նախագահ Սարգսյանի այս քայլը, վրացական մամուլը և հասարակական-քաղաքական միտքը, ընդհակառակը, հուժկու քննադատության ենթարկեցին այն: Մինչ վրացական կողմի նշված արձագանքներին անդրադառնալը՝ փաստենք, որ վրացական մամուլը հասարակական-քաղաքական տարբեր գործիչների շուրթերով մշտապես անդրադարձել է ինչպես Ջավախքում հայերենին իրավա-

¹ Հայաստանի Հանրապետություն, N 168, 2009:

կան կարգավիճակ տալու խնդրին, այնպես էլ փոխկապակցված երկու այլ՝ ջրավախահայության կողմից վրացերենի յուրացմանը և դպրոցներում վրացերենի ուսուցմանն առնչվող հարցերին:

Վրացական անդրադարձը Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակ տալու խնդրին՝ մինչ ՀՀ նախագահի 2009թ. սեպտեմբերյան հայտարարությունը

«Ռեզոնանսի» թերթը, ծավալուն անդրադարձ կատարելով Ջավախքում վրացերենի տարածման և ուսուցման խնդիրներին, խիստ մտահոգություն է հայտնում, որ Ջավախքը գրեթե կտրված է վրացական իրականությունից, այստեղ չի հասնում վրացալեզու մամուլը, չեն հեռարձակվում վրացական հեռուստատեսությունները, ոչ վրացալեզու դպրոցներում թույլ հիմքերի վրա է վրացերենի, Վրաստանի պատմության և աշխարհագրության ուսուցումը և այլն: Խնդիրը ներկայացնելիս հողվածագիրը մեղադրում է Սամցխե-Ջավախքի նահանգապետ, հայազետ Գիզլա Բարամիձեին, որին, ըստ հեղինակի, բացարձակապես չի հուզում այս ամենը: Թերթը մեծ կարևորություն է տալիս վրացերենի՝ որպես սահմանադրորեն ամրագրված պետական լեզվի տիրապետմանը Ջավախքում, ինչի համար էլ հարկավոր է իրականացնել համապատասխան կրթական և այլ ծրագրեր: «Եթե այսպես շարունակվի, ապա Ջավախքում կարող է ստեղծվել Աբխազիայից ավելի վատթար վիճակ», - եզրափակում է հողվածագիրը¹: Գրեթե նույն հարցադրումներով է հանդես գալիս նաև վրացական վրացալեզու մեկ այլ թերթ՝ «Ախալի թաոբա»-ն: Հողվածագիրը ցավով է խոսում այն մասին, որ երկրի ոչ վրացի ազգաբնակչությունը (հայեր, ռուսներ, ադրբեջանցիներ) գրեթե չի տիրապետում վրացերենին, ինչը լուրջ հիմնախնդիր է առաջացնում: Թերթը հիշեցնում է, որ ԽՍՀՄ-ն արդեն վաղուց գոյություն չունի, և Վրաստանի հայերն ու ադրբեջանցիները վրացիների հետ պետք է խոսեն ոչ թե նախկինի նման ռուսերեն, այլ վրացերեն: Վրացերենին չտիրապետելը հեղինակի կողմից համարվում է պետության հանդեպ ոչ հարգալից, արհամարհական վերաբերմունք, և վրացերեն չիմացողները չեն կարող համարվել երկրի լիարժեք քաղաքացիներ²: Դարձյալ ոչ մի խոսք երկրի ոչ վրացի ժողովուրդների լեզվական իրավունքների մասին: Անդրադառնալով Ջավախքում հայերենի կարգավիճակի խնդրին՝ «Ասավալ-դասավալի» թերթի

¹ "ՐջԹԹԵՆԵՆՈ" («Ռեզոնանսի» - «Ռեզոնանս»), N 163, 2001:

² "ՏԵՆԸՈ ՕՏԹՃՏ" («Ախալի թաոբա» - «Նոր սերունդ»), N 285, 2001:

հողվածագիրը քննարկում է Ախալքալաքում դատավարությունը հայերենով անցկացնելու հարցը: Խոսելով Ախալքալաքի շրջանի դատավոր Սուսաննա Մանուկյանի՝ դատավորի որակավորման քննությունները վրացերենով հանձնելու առթիվ արտահայտած դժգոհության մասին՝ թերթը մեղադրում է Ս.Մանուկյանին և՛ վրացերենին չտիրապետելու, և՛ այն պահանջի համար, ըստ որի՝ հայաբնակ Ջավախքում դատավարությունը պետք է իրականացվի հայերեն: Թերթը, մեջբերելով Ս.Մանուկյանի հետևյալ խոսքերը՝ «Բարի եղեք և նկատի ունեցեք, որ Ջավախքը Վրաստանի հայալեզու տարածաշրջան է», բարկությամբ նշում է, որ եթե նախկինում վրացերենի դեմ բողոքում էին շարքային դաշնակցականները, ապա այսօր դա անում են նաև պաշտոնյաները: Թերթը կրկին հիշեցնում է, որ Վրաստանի ողջ տարածքում պետական լեզուն վրացերենն է, իսկ Վրաստանի սահմանադրությամբ երկրում գոյություն չունի հայալեզու տարածաշրջան, և քանի դեռ հայազգի խորհրդարանականներին չի հաջողվել հայերենին կարգավիճակ շնորհել, Ս.Մանուկյանը պարտավոր է որակավորման քննությունները հանձնել և դատավարությունն իրականացնել վրացերեն¹: 2005թ. համարներից մեկում ծավալուն անդրադարձ կատարելով Ջավախքում տիրող իրավիճակին՝ հայերենին կարգավիճակ շնորհելու ջավախահայության պահանջներն է ներկայացնում «Ախալի թառփան»: Հողվածագիրը մանրամասն նկարագրում է «Վարդերի հեղափոխությունից» հետո Ջավախքում ստեղծված վիճակը և փաստում, որ Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններում համարյա չի գործում Վրաստանի օրենսդրությունը, տեղում չեն օգտագործում վրացերենը և դրա հետ մեկտեղ՝ հանդես են գալիս փաստաթղթերը վրացերենով կազմելու դեմ²: Թերթը նաև մեջ է բերում ՀՀ ԱԺ փոխխոսնակ Վահան Հովհաննիսյանի արտահայտած միտքը, ըստ որի՝ ջավախահայության իրավունքները պաշտպանված չեն: Հաջորդիվ հողվածագիրը վրաց հասարակական-քաղաքական մտքին բնորոշ առոգանությամբ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությանը մեղադրում է անջատողականություն հրահրելու մեջ և ավելացնում իրականում գոյություն չունեցող մի շարք երևույթներ, օրինակ՝ Ջավախքում ազգաբնակչությունը լրջորեն զինված է, այստեղ ոստիկանությունը չի վերահսկում իրավիճակը, որից ելնելով էլ Ջավախքում, իբր, անհնար է քաղաքացիների ազատ տեղաշարժը և այլն:

¹ "სხვადასხვადას" («Ասավալ-դասավալի», թարգմ.՝ «Ոչ ոք չգիտի՝ որտեղ է նա, ինչ է պատահել նրան»), N 30, 2003:

² "სხვადას" (N 353, 2005):

Մամցիւն-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի՝ համապատասխանաբար հայերով ու ադրբեջանցիներով հոծ բնակեցված նահանգներում իրականացվող պետական լեզվի (վրացերենի) ուսուցման ծրագրի մասին է ներկայացնում «Մեթոխե» թերթը: Հոդվածագիրը նշում է, որ Ջ.Գամասխուրդիայի ժամանակներից կարևորված և հետագայում բարձիթողի վիճակում գտնվող նշյալ հարցը նորովի վերանայվեց Մ.Սաակաշվիլու իշխանության կողմից, քանի որ, ինչպես նշում է թերթը, նոր իշխանությունները զայրույթով լցվեցին այլազգիներով (ոչ վրացիներով) բնակեցված շրջանների այն պաշտոնյաների նկատմամբ, ովքեր չէին տիրապետում վրացերենին, միաժամանակ խստորեն պահանջվեց ողջ գրագրությունն իրականացնել վրացերեն: Թերթը ներկայացնում է Վրաստանի կրթության և գիտության նախարարության «Ապագան սկսվում է այսօր» ծրագիրը, որի շրջանակներում մի շարք մասնագետներ են գործուղվել Ջավախքի և Քվեմո Քարթլիի շրջաններ՝ վրացերենը մասսայականացնելու նպատակով¹: Ռուս-վրացական հարաբերությունների հերթական սրման շրջանում՝ 2006թ., «Ախալի թառքա» թերթին տված ծավալուն հարցազրույցի մեջ անդրադառնալով տարածաշրջանային զարգացումներին, Վրաստանի հայկական եկեղեցիների հանդեպ հայոց պահանջատիրությանը, Ջավախքի հիմնահարցին՝ քաղաքագետ Սոսո Ցինցաձեն շոշափում է նաև Ջավախքում վրացերենի կիրարկման խնդիրը. «Մենք այսօր չպետք է թույլ տանք, որ Վրաստանում ապրող ցանկացած էթնիկական ներկայացուցիչ ավելորդ համարի իմանալ վրացերենը: Նման արդյունք արդեն ունենք Ախալքալաքում, որտեղ ոչ ոք չի տիրապետում վրացերենին, իսկ դա կոմունիստական քաղաքականության արդյունքն է: Ոչ ոք չպետք է մոռանա, որ Վրաստանում կա միայն մի պետական լեզու՝ վրացերենը», - եզրափակում է իր խոսքը Ս.Ցինցաձեն²:

***Վրացական արձագանքը ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի
2009թ. սեպտեմբերյան հայտարարությանը***

Վիրահայության (հատկապես ջավախահայության) և ՀՀ-ի վերաբերյալ քննադատական բազմաթիվ հոդվածների և հրապարակումների հերթական առիթը, ինչպես նշեցինք, ՀՀ նախագահի 2009թ. սեպտեմբերյան աննախադեպ հայտարարությունն էր, որին անմիջապես արձագանքեցին վրացա-

¹ "მეოთხე" («Մեթոխե» - «Չորրորդ»), N 5, 2006:

² "ახალთა თაობა", N 190, 2006.

կան գրեթե բոլոր տպագիր թերթերը¹: Առանց այն էլ շիկացած մթնոլորտն էլ ավելի բորբոքվեց, երբ Վրաստանի ՆԳ նախարարության ներկայացուցիչ Շոթա Խիզանիշվիլին թյուրիմացաբար հայտարարեց, որ Սամցխե-Ջավախքի Ադիգենի շրջանում՝ վրաց-հայկական պետական սահմանի մոտ, հայտնաբերվել են երեք վրացի սահմանապահների դիակներ: Իրականում Ադիգենի շրջանը սահմանակցում է ոչ թե ՀՀ-ին, այլ Թուրքիային: Չնայած Վրաստանի և ՀՀ պատկան մարմինների կողմից շուտով պաշտոնապես տեղեկացվեց տեղի ունեցած վրիպակի մասին, այդուհանդերձ, այս տեղեկատվությունն առավել խորացրեց ՀՀ նախագահի կողմից մեկ օր առաջ տարածված նշյալ հայտարարությամբ վրացական շրջանակներում առաջացած հակահայկական տրամադրությունները: Անգամ լուրեր տարածվեցին հայ-վրացական սպասվելիք պատերազմի մասին, հայկական ագրեսիայից պաշտպանվելու համար հնչեցին համընդհանուր մոբիլիզացիա սկսելու կոչեր և այլն: «Ախալի թառբա» թերթն այս աղմուկի խորացման մեղքը բարդում է աշխարհագրություն չիմացող ՆԳՆ պաշտոնյայի վրա, այդուհանդերձ, «փաստը մնում է փաստ, որ վրացիները լրջորեն անհանգստացած են հարևան Հայաստանի քաղաքականությունից՝ սկսած ՀՀ նախագահի «խորհուրդներից», ավարտած հայ գիտնականների և փորձագետների հակավրացական տրամադրություններով»²: Իր հերթին, Կովկասի հարցերով փորձագետ Մամուկա Արեշիձեն ՀՀ նախագահի նշյալ հայտարարության առիթով «Ռեզոնանսի» թերթին ասել էր հետևյալը. «Կուլիսային խաղեր են, ուրիշ ոչինչ: Հայաստանը, եթե նույն հարցը դներ Ռուսաստանի, ԱՄՆ-ի կամ այլ պետությունների առջև, որտեղ հավաք կերպով ապրում են հայերը, ապա ամեն ինչ պարզ կլիներ: Ստացվում է, որ ՀՀ նախագահն այդ հարցը բարձրացնում է այնտեղ, որտեղ ստացվում է»³: ՀՀ նախագահի՝ Ջավախքում հայերենը տարածաշրջանային լեզու հռչակելու անհրաժեշտության մասին հայտարարությունը խիստ ուշագրավ է համարում նաև «Ղվելա սիախլե» թերթը: Հայտարարությունն առիթ է ծառայում, որ թերթը համապարփակ անդրադառնա նաև տարածաշրջանային զարգացումներ-

¹ Շնորհակալ աշխատանք է կատարել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի աշխատակից Վահրամ Հովանը, որը վրացական ռուսալեզու էլեկտրոնային կայքի նյութերի հիման վրա ի մի է բերել ՀՀ նախագահի նշյալ հայտարարությանն ի պատասխան վրացական կողմի արձագանքները, տե՛ս Վրացական արձագանքը հայ-վրացական հարաբերությունների վերջին զարգացումներին, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=429: Մույն աշխատանքում մենք ներկայացնում ենք նշյալ խնդրի վերաբերյալ վրացական վրացալեզու տպագիր մամուլում տեղ գտած դիրքորոշումները, կարծիքներն ու արձագանքները:

² "Նեճճօ օճօճ", N 233, 2009.

³ "ՐջՆօճճՆօ", N 210, 2009.

րում ՀՀ աճող դերակատարմանը, հայ-թուրքական սահմանի հնարավոր բացմանը, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կարևորությանը և այլն: Թերթն այս շրջանակներում անդրադառնում է նաև տվյալ շրջանում կրկին սրված ՀՀ-Վրաստան սահմանային խնդրին: Հայտնի է, որ տվյալ շրջանում Բավրա գյուղի հատվածում վրաց սահմանապահները 3 կմ սահմանային երկարությամբ շուրջ 400 մ առաջ էին շարժվել, ինչի պատճառով Բավրայի բնակիչները զրկվել էին սեփականության մասին վկայականով իրենց պատկանող արոտավայրերը շահագործելու հնարավորությունից: Հայրենի գյուղի բնակիչների իրավունքների պաշտպանության համար տևական պայքար տարավ նաև Բավրայի գյուղապետ Կորյուն Սումբուլյանը: Այդուհանդերձ, «Ղվելա սիախլե» թերթը թերահավատորեն է վերաբերվում հայկական կողմի տարածած այս տեղեկատվությանը և քաղաքագետ Ռամազ Մաղվարեիլիձեի շուրթերով մտահոգություն հայտնում, որ Վրաստանը, փաստորեն, լուրջ սահմանային խնդիրներ ունի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ՀՀ-ի և Ադրբեջանի հետ¹:

Հաջորդիվ ներկայացնենք «Մաքարթվելուս ռեսպուբլիկա» թերթի արձագանքը: Ծավալուն հրապարակման մեջ հողվածագիրը նախապես հիշատակում է վրացական «ավանդական» տեսակետները հայերի՝ Վրաստանում հյուր լինելու, պատմության ընթացքում հայերի՝ վրացիներին մշտապես դավաճանելու, Մ.Բադրամյանի անվան արխագահայկական գումարտակի վերաբերյալ և անցնում Ս.Սարգսյանի վերոնշյալ հայտարարության քննարկմանը: Հողվածագիրը, «հիմարություն», «սադրանք» որակելով հայտարարությունը, նշում է, որ ՀՀ նախագահը ծանոթ չէ Վրաստանի սահմանադրությանը, որով ամրագրված են երկու պետական լեզուներ՝ վրացերենը և արխագերենը: Հրապարակագիրն իր խոսքում մեղադրում է Վրաստանի իշխանություններին, որոնց ապաշնորհ և անհեռատես քաղաքականության արդյունքում է նման, հեղինակի վառ բնորոշմամբ, «դաշնակցական պահանջներով» հանդես եկել Սերժ Սարգսյանը²: ՀՀ նախագահի նշյալ հայտարարությունը մեկ այլ դիտանկյունից է քննում մեկ այլ թերթ՝ «Ասավալ-դասավալին»: Հողվածագիրը, սուր քննադատության ենթարկելով երկրի նախագահ Մ.Սաակաշվիլուն և նրա վարած տարածաշրջանային քաղաքականությունը, նկարագրում է 2009թ. ամռանը Երևան կատարած նրա պաշտոնական այցը և ՀՀ-ում բարձրագույն պարզկների և

¹ "ցցված" სიხლვ" («Ղվելա սիախլե» - «Ամեն նորություն»), N 35, 2009:

² "საქართველოს რეპუბლიკა" («Մաքարթվելուս ռեսպուբլիկա» - «Վրաստանի Հանրապետություն»), N 175, 2009:

կոչումների արժանանալու հանգամանքը: Հեղինակն ի վերջո հանգում է այն եզրակացության, որ հայերն անտեղի ոչինչ չեն անում, և Մ.Սաակաշվիլու հետ գրկախառնվելու արդյունքում ՀՀ նախագահը շուտով հանդես եկավ հայերենը Վրաստանի տարածաշրջանային լեզու հռչակելու մասին պահանջով¹: Շարունակելով Մ.Սաակաշվիլուն ներկայացվող մեղադրանքների տարափը՝ թերթը Աջարիայով անցնող Ախալցխա-Բաթում ավտոմայրուղու վերակառուցման ծրագիրը ևս կապում է Մ.Սաակաշվիլու հայամետ քաղաքականության հետ և անգամ կասկածներ հայտնում, որ Աբխազիան ու Ցխինվալի տարածաշրջանը (Հարավային Օսիան՝ Վ.Ս.) Ռուսաստանին հանձնած Մ.Սաակաշվիլին տվյալ փուլում էլ աշխատել է Ջավախքը Հայաստանին հանձնելու ուղղությամբ:

Ջավախքում հայերենը տարածաշրջանային լեզու հռչակելու մասին հայտարարությանն է անդրադարձել նաև փորձագետ Գիա Խուխաշվիլին: «Ախալի թառքա» թերթին տված հարցազրույցում վերջինս, անդրադառնալով Վրաստանի շուրջ տեղի ունեցող մի շարք ոչ նպաստավոր զարգացումներին, պոտենցիալ վտանգներ է մատնանշում նաև Ջավախքում: Ըստ փորձագետի՝ քանի դեռ Վրաստանը չի դարձել կայուն երկիր, հայերենին կարգավիճակի շնորհման մասին հայտարարությունը վատ նախանշանների տեղիք կարող է տալ²: Նույն օրերին «Սաքարթվելոս ռեսպուբլիկա» թերթում ծավալուն հրապարակմամբ է հանդես գալիս նաև ոչ անհայտ Բոնդո Արվելաձեն: Համակողմանիորեն վերլուծելով խնդրո առարկա հայտարարությունը՝ Բ.Արվելաձեն հիմնագուրկ է համարում Վրաստանի՝ հայկական պատմաճարտարապետական հուշարձանների հանդեպ հայկական պահանջները, քանի որ, ըստ նրա, այդ քանակը (շուրջ 653 հուշարձան) հայ գիտնականների կողմից արհեստականորեն ուռճացված է, իսկ իրական թիվը պարզելու համար հարկավոր է ստեղծել հատուկ հանձնաժողով³: Բ.Արվելաձեն նույն կերպ դեմ է հանդես գալիս նաև ՀԱԵ Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ շնորհելուն: Վերջինս ՀԱԵ հոգևոր գործունեության համար չի տեսնում որևէ խոչընդոտ, հետևաբար, ըստ Բ.Արվելաձեի, կարիք չկա այդպիսի քայլի: Բ.Արվելաձեին զարմացրել է նաև Սերժ Սարգսյանի հայտարարության՝ հայերենին մարգային լեզվի կարգավիճակ շնորհելուն վերաբերող հատվածը, որի քննությանն է նվիրել իր հրապարակախոսական ակնարկի կեսից ավելին: «Եթե այսօր պահանջում են հայերենը տարա-

¹ "საგვლ-დასავლი", N 36, 2009.

² "სახლი თაობა", N 238, 2009.

³ "საქართველოს რესპუბლიკა", N 179, 2009.

ծաշրջանային լեզու հայտարարել, հավանական է, որ շատ շուտով էլ կպահանջեն Ջավախքի ինքնավարությունը և ապա վրացական հինավուրց այդ հողը Հայաստանին միացնելը՝ հայկական սահմանը տեղափոխելով Տաշիսկարի: Դա հայերի դարավոր երազանքն է»,¹- նշում է Բ.Արվելաձեն և բերում վիճակագրական տվյալներ աշխարհի մի շարք երկրներում ապրող հայերի թվակազմի վերաբերյալ, այն է՝ Ռուսաստանում՝ 1 մլն 13 հազ. (ոչ պաշտոնական՝ 2 մլն), ԱՄՆ-ում՝ 1 մլն, Ֆրանսիայում՝ 0,5 մլն, Իրանում՝ 150 հազ., Լիբանանում՝ 120 հազ., Սիրիայում՝ 126 հազ., Վրաստանում՝ 300 հազ.¹: Այստեղ Բ.Արվելաձեն հռետորական հարց է տալիս, թե ինչու պարոն Սերժ Սարգսյանը նույն կերպ չի դիմում իր բարեկամ Ռուսաստանին և հանդես գալիս Մոսկվայում, Կրասնոդարում և այլ վայրերում դպրոցներ բացելու, հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու հավակնություններով: Ըստ Բ.Արվելաձեի՝ ԱՄՆ Լոս Անջելես քաղաքը հաճախ անվանում են Լոս Արմենոս, քանի որ այնտեղ բազմաթիվ հայեր են ապրում, հետաքրքիր է՝ ինչո՞ւ ԱՄՆ ղեկավարությունից չեն պահանջում հայերենի կարգավիճակ: «Նրանց տրամաբանությամբ՝ Վրաստանը Բաբելոնի աշտարակ է»,²- միտքը եզրափակում է Բ.Արվելաձեն: Հեղինակն իր ծավալուն անդրադարձի ավարտին եզրակացնում է, որ Ս.Սարգսյանն իր նշյալ հայտարարությունն արել է Կրեմլի թելադրանքով, քանի որ, ըստ Բ.Արվելաձեի, Վ.Պուտինը ձգտել է Ս.Սարգսյանի միջոցով ապակայունացնել տարածաշրջանը, բախումներ հրահրել հայերի ու վրացիների միջև: Դրանով, ըստ Բ.Արվելաձեի, անկայուն երկրի համբավ ձեռք կրերի նաև Վրաստանը, ներդրողները կիրաժարվեն գալ երկիր, կվտանգվի նաև ապագայում ՆԱՏՕ մտնելու ճանապարհը:

ՀՀ նախագահի՝ ինդրո առարկա հայտարարությանը ծավալուն անդրադարձ կատարեց նաև «Ջորջիան թայմս» պարբերականը: Առիթը մի քանի օր անց՝ սեպտեմբերի 9-ին, Նյու Յորքում, ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում արխագական և օսական փախստականների վերաբերյալ Վրաստանի ներկայացրած բանաձևին ՀՀ-ի կողմ չարտահայտվելն էր: Հնդվածագիրը, իստորեն դատապարտելով հայկական կողմի այս քայլը, դարձյալ հիշատակում է «Վրաստանի օրհասական պահին հայերի դավաճանության», «Վրաստանին ներկայացվող տարածքային պահանջների» մասին հին ու չարչրկված թեզերը՝ հավելելով այն «թարմ օրինակով» և փաստելով, թե, իբր, 2008թ. օգոստոսյան պատերազմի օրերին Գյումրիի ռուսական

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

ռազմաբազայից ինքնաթիռները մի քանի անգամ ուժակոծել են վրացական խաղաղ բնակչությանը¹: Անդրադառնալով Սերժ Սարգսյանի սեպտեմբերյան հայտարարությանը՝ թերթը փաստում է, որ Ջավախքում պայթյունավտանգ իրադրության ստեղծման գործում ներգրավվել է նաև ՀՀ նախագահը, քանզի «վերջինս պահանջել է հայերենը Ջավախքում հայտարարել տարածաշրջանային լեզու»²: Շարունակելով խնդրի քննարկումը՝ «Ջորջիան թայմս»-ը ներկայացրել է վրաց որոշ քաղաքագետների տեսակետները: Մոսո Ցինցաձեն, օրինակ, ՀՀ-Վրաստան հարաբերությունները բնականոն չի համարել: Ըստ քաղաքագետի՝ ՀՀ-ն Վրաստանի հանդեպ վարում է սխալ քաղաքականություն, որն անմիջականորեն կապված է ՀՀ-ԹՀ սահմանի բացման մասին փոխպայմանավորվածությունների հետ: Խոսելով Ջավախքի հիմնահարցի մասին՝ Ս.Ցինցաձեն դարձյալ հիշեցնում է, որ դա վրացական հինավուրց տարածք է, և հայերն այստեղ են վերաբնակեցվել գեներալ Պասկևիչի օրոք: Քաղաքագետը դրանով նորից մեջտեղ է բերում ջավախահայերի՝ Վրաստանում հյուր լինելու մասին վրացական կարծրացած տեսակետը, և այս պարագայում խոսք անգամ չի կարող լինել հայերենին կարգավիճակ շնորհելու մասին: Գործընկերների տեսակետներից գրեթե չի տարբերվում նաև Վրաստանի լեյբորիստների կուսակցության առաջնորդ Շավա Նաթելաշվիլու տեսակետը: «Ջորջիան թայմս»-ի նույն համարում քաղաքական գործիչն ուղղակիորեն դիմում է Սերժ Սարգսյանին. «Տարածաշրջանային լեզու հայտարարելու հարցը նախ Բուենոս Այրեսում պետք է կարգավորել, ուր 100 հազ. հայ է ապրում, Ավստրալիայում, որտեղ կա հայերի մեծ քանակություն, ինչպես նաև Կալիֆորնիայում, որտեղ ապրում է 300 հազարից ավելի հայություն: Նման նախաձեռնությամբ դիմեք թվարկածս երկրների ղեկավարությանը և, եթե ստանաք իրավունք, նոր միայն դիմեք մեզ, և մենք կմտածենք, թե ինչպես վարվենք»³: Չգտելով առավել ընդգծել ՀՀ-ի և հայության վերաբերյալ արտահայտած նեգատիվ տրամադրությունները՝ վրացի հոդվածագիրը մեջ է բերում նաև ադրբեջանցի քաղաքագետ Արիֆ Յունուսի տեսակետը, ըստ որի՝ ներկայիս Հայաստանն ստեղծված է Վրաստանի և Ադրբեջանի հինավուրց հողերի վրա, իսկ հայ քաղաքական ընտրանին, իր թերհասությունից ելնելով, մշտապես տարածքային հավակնություններ է ունեցել հարևանների նկատմամբ⁴: Նույն օրերին «Սաքարթվելոս ռեսպուբլիկա» թերթում տեղ

¹ "ჯორჯიან თაიმსი" («Ջորջիան թայմս»), N 34, 2009:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

գտած քաղաքագետ Մոսո Յինցաձեի՝ ծավալուն հարցազրույցում հայտնած տեսակետներից մեկի համաձայն՝ Վրաստանի հանդեպ ՀՀ իբր բացահայտ թշնամական և էքսպանսիոնիստական քաղաքականությունը կապված է ՀՀ-ԹՀ սահմանի բացման մասին քննարկումների հետ: Այս համատեքստում էլ, ըստ քաղաքագետի, հետզհետե ակտուալ է դառնում Ջավախքի անեքսիայի հարցը, որի բաղադրիչներից մեկն էլ Ս.Յինցաձեն համարում է ՀՀ նախագահի՝ հայերենը տարածաշրջանային լեզու հռչակելու անհրաժեշտության մասին հայտարարությունը¹: «Ողջ աշխարհն է պահանջում, որ պահպանեն ազգային փոքրամասնությունների իրավունքները, բայց ոչ մի տեղ չի գրված, որ նրանց լեզուն պետական պետք է հայտարարվի», - նշում է Ս.Յինցաձեն և կարծիք հայտնում, որ հայ երիտասարդները հավանաբար դիտավորյալ չեն սովորում վրացերեն²: Նույն օրերին գրեթե նույն բովանդակությամբ հրապարակում ի հայտ եկավ այս անգամ ընդդիմադիր «Ասավալ-դասավալի» թերթում: Ծավալուն իր հոդվածում Գեորգի Գիգաուրին, նկարագրելով 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո ստեղծված իրավիճակը, նշում է, որ իբր սկիզբ է առել Վրաստանի քայքայման և մասնատման գործընթացը, և ՀՀ-ն ևս անմասն չէ այդ գործում. «Ջավախքի արմենիզացիայի (ընդգծումը հեղինակինն է՝ Վ.Ս.) ծրագրերի մասին բազմիցս է խոսվել և գրվել: Երևանը բացահայտ կերպով հարմար առիթ է փնտրում, որպեսզի Վրաստանից էլ առավել հեռացնի այդ հինավուրց վրացական հողը և վերջնականապես այն միացնի Հայաստանին», - ավելացնում է հոդվածագիրը և փաստում, որ իբր հենց այդ նպատակին է ծառայել ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի՝ Ջավախքում հայերենը մարզային լեզու հռչակելու անհրաժեշտության մասին հայտարարությունը³: Գ.Գիգաուրին ևս կրկնում է նախորդների այն թեզը, թե ինչու Մերժ Սարգսյանը նման կոչով չի դիմում աշխարհի մի շարք երկրների ղեկավարներին: Հեղինակի կարծիքով՝ հայերը 2009թ. ամռանը Երևանում գտնվող Մ.Սաակաշվիլուն դիտավորյալ նվիրեցին Պատվո շքանշան, որպեսզի նրանից պահանջեն և՛ տարածաշրջանային լեզվի կարգավիճակի շնորհում, և՛ Աջարիայի վրայով դեպի Սև ծով տանող ճանապարհի կառուցում և այլն:

Ամփոփենք.

- Ջավախքում հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակի տրամադրումն առանցքային նշանակություն ունի ջավախահայության կյանքի բարեփոխման համար:

¹ "საქართველოს რესპუბლიკა", N 188, 2009.

² Նույն տեղում:

³ "საგაღ-დასგაღი", N 39, 2009.

- Ջավախքում հայերենը տարածաշրջանային լեզու հռչակելու անհրաժեշտությունն ամրագրված է միջազգային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիայով» (Ստրասբուրգ, 05.11.1992): Նշյալ պահանջով մշտապես հանդես են եկել ինչպես ջավախահայ մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպություններ և ազդեցիկ գործիչներ, այնպես էլ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը, որը 2009թ. սեպտեմբերին հանդես եկավ աննախադեպ հայտարարությամբ:
- Վրաստանը, 1999թ. ընդգրկվելով ԵԽ կազմում և ստանձնելով մի շարք պարտավորություններ, այդուհանդերձ, դեռևս չի շտապում վավերացնել «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիան» և քննարկումներ ծավալել Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակի շնորհման ուղղությամբ: Արդյունքում՝ Վրաստանի սահմանադրության 8-րդ հոդվածով ներկայում ամրագրված լեզուները երկուսն են. վրացերենը՝ որպես համընդհանուր պետական և նրա կողքին աբխազերենը՝ որպես ԱԻՀ տարածաշրջանային լեզուներ:
- Վրացական վրացալեզու տպագիր մամուլի շուրջ տասնամյա ժամանակահատվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը գրեթե առանց բացառության պաշտպանում է Վրաստանի պետական քաղաքական այն գիծը, ըստ որի՝ ջավախահայության կյանքի որակի բարելավման հիմնական նախապայմանը վրացերենի յուրացումն է:
- Վրաց պետական քաղաքականությանը համահունչ կերպով վրաց հասարակական-քաղաքական միտքը ևս դեմ է հայերենը տարածաշրջանային լեզու հռչակելուն՝ համարելով այն պետականության դեմ ուղղված քայլ, անջատողականություն, «դաշնակցական» վարքագիծ, Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ ուղղված արկածախնդրություն, Ջավախքը ՀՀ-ին միացնելուն ուղղված գործընթացի առաջին փուլ և այլն:
- ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Ջավախքում հայերենին մարզային լեզվի կարգավիճակի շնորհման անհրաժեշտության մասին 2009թ. սեպտեմբերյան հայտարարությունը ևս ծայրահեղ քննադատության արժանացավ վրացական միջավայրում: Վրաց հասարակական-քաղաքական շրջանակները միանշանակորեն մերժեցին տվյալ հար-

ցի քննարկման ցանկացած ձևաչափ, իսկ թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր մամուլը և հասարակական միտքը շտապեցին ամեն կերպ սևացնել Ս.Սարգսյանի այս հայտարարությունը: ՀՀ նախագահի նշյալ հայտարարությունը վրաց որոշ շրջանակներ կապեցին ՀՀ-ԹՀ սահմանի բացման մասին փոխպայմանավորվածությունների հետ, ինչից ելնելով ՀՀ-ն, ըստ տվյալ տեսակետի, ձգտում է Վրաստանի առջև դնել կոշտ պահանջներ, ինչը մինչ այդ, ելնելով տարանցիկ կախվածությունից, տեղի չէր ունեցել: Իրենց հերթին, Մ.Սաակաշվիլուն ընդդիմադիր շրջանակները շտապեցին Ս.Սարգսյանի նշյալ հայտարարությունը կապել Կրեմլի քաղաքականության հետ, ըստ այդ տեսակետի՝ Ռուսաստանն այդպիսով փորձում է կրկին ապակայունացնել տարածաշրջանը և շարունակել 2008թ. լայնորեն սկզբնավորված Վրաստանի մասնատումը:

Հունիս, 2018թ.

**ՀԱՅԵՐԵՆԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՆԴԻՒ
ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

Վահե Սարգսյան

Ամփոփագիր

Ջավախքում հայերենը՝ որպես տեղի ազգաբնակչության մայրենի լեզու, մինչ օրս չունի իրավական կարգավիճակ: Չնայած այն հանգամանքին, որ հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակի տրամադրման անհրաժեշտությունն ամրագրված է ինչպես ջավախահայության՝ Վրաստանի իշխանություններին ներկայացվող պահանջների մեջ, այնպես էլ միջազգային (եվրոպական) իրավունքում, այդուհանդերձ, Վրաստանի ղեկավարությունն այդ հարցում ունի ժխտողական կեցվածք: Վրաստանը չի վավերացրել նաև «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիան» (Ստրասբուրգ, 05.11.1992): Վրաստանի ղեկավարության նշյալ ժխտական դիրքորոշումը լիարժեք պաշտպանում են նաև վրաց հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները, ովքեր ծայրահեղ քննադատության են արժանացրել նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու անհրաժեշտության մասին 2009թ. սեպտեմբերյան հայտարարությունը:

ОБСУЖДЕНИЕ ВОПРОСА О СТАТУСЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА В ГРУЗИНСКОЙ ПРЕССЕ

Վազ Տարգիսյան

Резюме

Армянский язык в Джавахке, как родной для местного населения, до сих пор не имеет правового статуса. Несмотря на то, что армянский язык в статусе регионального зафиксирован как в требованиях грузинских властей, так и в международном европейском праве, тем не менее по этому вопросу грузинское правительство придерживается позиции отрицания. Грузия не ратифицировала «Хартию региональных языков или языков меньшинств» (Страсбург, 05.11.1992). Представители грузинской общественно-политической мысли полностью поддерживают упомянутую негативную позицию грузинского руководства, которое еще и критически оценило заявление президента Республики Армения Сержа Саргсяна о необходимости признания армянского в качестве регионального языка в Грузии в сентябре 2009г.

THE DISCUSSION IN GEORGIAN MEDIA ABOUT AWARDED A STATUS TO THE ARMENIAN LANGUAGE

Vahe Sarkisyan

Resume

The Armenian language as the native tongue of the local ethnic population of Javakhk region in Georgia does not have any legal status. Despite the necessity of awarding the Armenian a legal status of the regional language is clearly asserted in the request presented to the Georgian authorities by the Javakhk Armenians, as well as in the international (European) rights, the Georgian authorities continue rejecting this.

Georgia has not ratified the European Charter for Regional or Minority Languages yet (Strasbourg, November 5, 1992). The above mentioned rejection is entirely supported by the Georgian social-political leaders, who sharply criticize the declaration by the president Serzh Sargsyan on the necessity of recognition of Armenian as a regional language.

ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՉԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Լիանա Անանյան՝

Բանալի բառեր՝ Չինաստան, փիլիսոփայություն, դատիզմ, կոնֆուցիականություն, լեզալիզմ, աշխարհակարգ:

«Նապոլեոն Բոնապարտը մի անգամ ասել է, որ Չինաստանը քնած առյուծ է, և երբ արթնանա, աշխարհը կցնցվի: Այսօր առյուծն արթնացել է, բայց նա խաղաղ է, բարի և քաղաքակիրթ»¹:

«Գարուն և աշուն» ժամանակից մինչև «Պայքարող պետությունների» ժամանակաշրջանի ավարտը ընդունված է համարել պետությունների մոլորության և անկայունության ժամանակահատված, բայց միննույն ժամանակ նաև փիլիսոփայական մտքի երկարատև «ոսկե դար»:

Ժամանակաշրջանի դժվարությունները չինացիների համար խորհելու և պրագմատիկ լուծումներ ստեղծելու խթան հանդիսացան, որը պատնեշ կդառնար մի հասարակության համար, որտեղ պատերազմներն ու ռազմական գործողությունները հասարակությունների ամբողջական զարգացման որևէ հնարավորություն չէին ընձեռում և որտեղ ապրելն անիրական էր: Դարաշրջանի դժվարություններին դիմագրավելու տարբեր դեղատոմսեր առաջարկվեցին, որոնց շարքում հիմնական երեք մեծ փիլիսոփայական ուղղություններն էին՝ կոնֆուցիականություն, դատիզմ և լեզալիզմ (իրավականություն): Դրանք կարևոր են չինական քաղաքական միտքը և իդեալներն ուսումնասիրելու և հասկանալու համար թե՛ հին ժամանակներում, թե՛ ներկայում:

Չինական քաղաքական մտքի հիմնական արմատները նույնն են, չինացիները հակված են այն գաղափարին, որ տիեզերքը բացառիկ և անբաժանելի միավոր է, որի համար չկա սկիզբ և չի կարող լինել վերջ: Նրանք ունեն համամարդկային պատկերացում աշխարհի մասին, հավատում են,

¹ ՀՀ ԳԱԱ ասպիրանտ:

² Չին-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 50-ամյակին նվիրված տոնակատարության ժամանակ իր ելույթում նշել է Սի Օինփինը, Փարիզ, 29.03.2014թ.:

որ աշխարհը բաղկացած է երեք հիմնական տարրերից՝ երկինք, երկիր և մարդ: Այս մեկնաբանության համաձայն՝ մարդն ու երկինքը միևնույն տիեզերքի մի մասն են, որի վրա, մի կողմից, երկինքը, Մո Ջիի խոսքերով՝ «տենչում է կյանք և ատում է մահը, տենչում է հարստություն և ատում է աղքատությունը, տենչում է կարգի հաստատում և ատում է կարգի խախտումը: Երկնայինները ցանկանում են արդարություն և ատում են անարդարությունը»¹: Մյուս կողմից՝ մարդը փորձում է վարվել լավագույնս: Կառավարչի/ղեկավարի պատասխանատվությունն է՝ հաղթահարել մյուս երկու տարրերը երկնքի և երկրի վրա: Մա իրագործելու նպատակով կառավարիչը/ղեկավարը կարող է օգնություն խնդրել նախնիների հոգիներից, որոնք հավերժ շարունակում են լինել տիեզերքի մի մասը:

Կոնֆուցիականության փիլիսոփայությունը էթիկական և քաղաքական գաղափարների համալիր փաթեթ է, որտեղ շեշտը դրվում է սոցիալական և քաղաքական հարաբերությունների վրա, որոնք, ընդհանուր առմամբ, մոդելավորվել են հայրական ընտանիքի կառուցվածքի նմանությամբ: Կոնֆուցիականությունն իր անունը ստացել է այս փիլիսոփայության հիմնադիր Կոն Ֆու-ցզիի անունից (մ.թ.ա. մոտ 551-479թթ.): Կոնֆուցիուսից հետո որոշ մեծ մտածողներ նպաստեցին կոնֆուցիականության եվոլյուցիային՝ ավելացնելով նոր բաղադրիչներ վարպետից ստացած հիմնական համոզմունքներին: Նրանցից ամենահայտնիները Մենսիուսն ու Խունցին էին, որոնք համապատասխանաբար ճանաչվում են որպես Կոնֆուցիուսի դպրոցի իդեալիստական թև և իրատեսական թև: Առաջինի հիմքում ընկած է մարդկային բնության բարության գլխավոր գաղափարը, իսկ երկրորդի հիմքում՝ բոլոր մարդկանց մեղսագործությունը:

Գիտնականները սահմանել են կոնֆուցիուսական այս գաղափարները որպես Կոնֆուցիական կոնսենսուս: Այն ամփոփվել է յոթ հիմնական կետում.

1. Տիեզերքում մարդուն կառավարում է Երկինքը (*tian* 天), ինչն անկառավարելի է և ոչ անթրոպոմորֆիկ:
2. Երկնայինը ցանկանում է, որ տղամարդիկ երջանիկ լինեն և համապատասխանեն տիեզերական ներդաշնակությանը (*dao* 道):
3. Լավագույն ներդրումը, որ տղամարդիկ կարող են անել, տիեզերական ներդաշնակություն բերելն է՝ ապրելը բարոյական և առաքինի կյանքով:

¹ *Watson, Burton*, Basic Writings of Mo Tzu, Hsün Tzu, and Han Fei Tzu, (New York: Columbia University Press, 1967), pp. 79.

4. Պատշաճ վարքն (*礼*) է առաքինության անմիջական դրսևորումը (*de* 德):
5. Կառավարիչը պետք է ծանր ընտրություն կատարի նախքան դժվար իրավիճակները. լավ առաջնորդ լինելու համար անհրաժեշտ է ճիշտ ընտրություն կատարել:
6. Լի՛ լ լույսը հասկանալու համար կարևոր է սովորել անցյալի իմաստունների ուսմունքները, անհրաժեշտ է պատմության բնագավառում խոր ուսումնասիրություն կատարել, լուրջ և անընդհատ ջանքերով դաստիարակել սեփական անհատականությունը:
7. Յուրաքանչյուր մարդու ներուժ կշռադատված է, հետևաբար՝ հասարակության ներուժը ներդաշնակ է և հաճելի բոլորի համար¹:

Կոնֆուցիուսի վարդապետության հիմնարար կետերից մեկը, որը, սակայն, բացակայում է այդ ցանկում, սա է՝ ներդաշնակության հասնելու հիմնական մասնիկը հենց մտերիմ/բարեկամական հարաբերությունների բարոյական հասկացությունն է: Հարաբերությունները բաժանված են հինգ հիմնական փոխազդեցությունների, որոնք ունեն փոխադարձ արժեք: Դրանք են՝ հայր և որդի, կրտսեր եղբայր և ավագ եղբայր, ամուսին և կին և վերջապես՝ ընկեր և ընկեր հարաբերությունները: Ինչ վերաբերում է այդ հարաբերությունների վերահսկմանը, ապա այն ամբողջությամբ վերագրվում է կոնսենսուսի 4-րդ կետին (*礼* 礼): Այլ կերպ՝ «կատարյալ տղամարդը», ըստ Կոնֆուցիուսի օրենքների, նա է, ով կարող է պահպանել բարձր բարոյական վարք, և դա այն ամենն է, ինչ դառնում է օրենք:

Այսինքն՝ ներդաշնակ հասարակությունը բարոյական առաքինության արդյունքն է՝ *礼* 礼-ի կիրառմամբ: *礼* 礼- ն այն է, ինչ յուրաքանչյուր մարդ պետք է զարգացնի իր մեջ, և սա իր հերթին կնպաստի լավ կազմակերպված հասարակության իրացմանը: Դա հնարավոր է, քանի որ ամեն անհատի հասարակության մեջ տրված են հատուկ դեր և աստիճան, որով և որոշվում են հասարակության անդամի պարտականությունները: Այս գործընթացի միջոցով յուրաքանչյուր անհատից ակնկալվում է անելու այն, ինչ իր դերը թելադրում է նրան անել, ոչ ավելի և ոչ պակաս: Եվ սա կոնֆուցիական գաղափարախոսության հիմնաքարային բանալին է: Սա է ցնցումների և անկարգությունների դեմ պայքարելու միակ իրական միջոցը: Լին դառնում է իր տեսակի մեջ «բնության օրենք», որը կարգավորում և կազմակերպում է հասարակությունը:

¹ *Hucker, Charles, O., China's Imperial Past (Stanford: Stanford University Press, 1975), pp. 83-84.*

Կոնֆուցիական այս արժեքները Չինաստանում ուսուցանվել են բոլոր ժամանակաշրջաններում, հրապարակայնորեն կամ պարզապես ընտանեկան համատեքստում: Կարելի է ասել, որ այդ արժեքները բնորոշ են չինական հասարակությանը, դրանք դեռ ունեն իրենց ուրույն տեղն ու դերը չին ժողովրդի կյանքում անգամ 21-րդ դարում: Այն գաղափարները, որոնք կարևորում են ընտանիքի դերը և հարաբերությունների կառուցվածքը, գաղափարներ, որոնք հիմնված են որդիական բարեպաշտության վրա, այսօր ևս մեծապես ազդում են չինական հասարակության վրա:

Դաոիզմը զարգացել է «Պայքարող պետությունների» ժամանակահատվածում: Այս ուսմունքի հիմնական դրույթներից մեկը համոզմունքն է, ըստ որի՝ պետք է խուսափել հասարակական կյանքի դժվարություններից: Չինական մտքի այս դպրոցը ստացել է խոշոր կրոնի կարգավիճակ: Ի տարբերություն աշխարհի շատ այլ խոշոր կրոնների, դաոիզմը քաղաքական ազդեցություն չունի Չինաստանում: Հետևաբար, թեև չինացիները ստեղծել են «համոզելու» տարբեր բարդ համակարգեր, այնուամենայնիվ, իրականում դրանցից ոչ մեկն իսկապես չի ծառայել որպես պետական կրոն: Հետևաբար, կրոնական ազդեցությունը չինական քաղաքականության վրա թույլ է, և չինական տեսակետը քաղաքական իշխանության և «աշխարհակարգի» վերաբերյալ որևէ կոնկրետ կրոնական համատեքստում չի դրվել, այլ առավելապես աշխարհիկ «երկինք-մարդ-երկիր» գաղափարն է օգտագործվել¹:

Դաոիզմը գալիս է *dao* 道 բառից և թարգմանվում է որպես ճանապարհ/ուղի: Դա ավելի շատ բնության հետ փոխհարաբերությունների անհատական և բանաստեղծական նկարագրությունների ամբողջություն է, հետևաբար՝ այն կառավարական համակարգի հասկացությանը նպաստող ոչինչ չունի, որն էլ դաոիստները հրաժարվեցին հաշվի առնել: Այնուամենայնիվ, կարևոր է ծանոթ լինել դաոիզմին, հենց այն անտարբերության համար, որ քաղաքական ուժերը ցույց են տվել դրա նկատմամբ դարեր շարունակ²:

Երրորդ փիլիսոփայական ուղղությունը **լեգալիզմն** է (օրինապաշտություն/իրավականություն): Ըստ հայտնի պատմագիր Սիմա Յիանի (մ.թ.ա. մոտ 90թ.), «Իրավաբանական դպրոցը» (*fajia* 法家 - չինարենից բառացի թարգմ.՝ օրենքի տուն) ձևավորվել է իրավաբան գիտնականների դպրոցի ուսմունքների հիման վրա: Իրավաբանական ուսմունքները կարող են համադրվել՝ շեշտը դնել հեղինակության և կարգի, վարչարարության կարևոր

¹ *Fung, Yu-lan*, A short history of Chinese Philosophy (England: Macmillan Publishing, 1948).

² Այն տեղում:

րության տեխնիկայի և թափանցիկ ուժի, մարդու օրինական իրավունքի, ուժի և մանիպուլյացիայի օգտագործման վրա: Լեգալիզմը կարելի է մեկնաբանել որպես մի շարք հրահանգների հավաքածու կառավարիչների և նախարարների համար:

Օրինապաշտների դասավանդման նպատակն էր կիրառել օրենքներ և կոշտ պատիժներ, ամրապնդել կենտրոնական կառավարումը և արդյունավետ, ուղղակի վերահսկողություն հաստատել ամբողջ տերության, նոր նվաճված հողերի և բնակչության վրա: Վերջապես, այն փոխարինելու եկավ հին արիստոկրատիային և ֆեոդալական համակարգին, որը հուսալի կերպով կազմակերպվում է բյուրոկրատների կողմից. նշանակում են կառավարիչ և հետևաբար՝ հնազանդվում նրան: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր խանգարել ցանկացած նոր գաղափարների և կյանքի այլընտրանքային ուղիների կամ ինքնուրույն հասարակական-քաղաքական կազմակերպությունների ձևավորմանը, որոնք կարող են վտանգել վերջնական նպատակների իրականացմանը: Բոլորը, հատկապես գիտնականները, պետք է մնան անտեղյակության և ահաբեկվածության վիճակում, մինչդեռ կառավարիչը պետք է ընդունի որոշակի օրենքներ, որոշում կայացնի պաշտոնյաների վերաբերյալ, դրանք շրջանառության մեջ դնի, և այս ներկայացուցիչների կողմից էլ պետք է ուսուցանվի անկիրթ բնակչությունը¹:

Օրինապաշտությունը պրագմատիզմի աղբյուրն է՝ հիմնված իշխանության քաղաքականության իրականացման վրա (մինչև անգամ Դեն Սյաոպինի կառավարման ժամանակաշրջանում (1980-1990-ականներ), երբ ճանապարհները, որոնցում կանխատեսումներն ուղղված էին այն ամենին, ինչ պետք է անել Չինաստանը միավորելուց հետո, որպեսզի պետությունը գոյատևի, զորանա և բարգավաճի: Միասնության գաղափարն արդեն գոյություն ունի Մեն Ցզիի² մտածողության մեջ, որտեղ միասնությունը համարվում էր բարոյական արժեք: Սակայն Մեն Ցզիի մտածողությունն ավելի շատ արձագանք էր ժամանակակից պայմանների անապահովությանը, այն ավելի շատ երազելի ցանկություն էր, քան իրական քաղաքական դոկտրին³: Իրավական փիլիսոփայությամբ, միասնությունը և իշխանությունը դարձան լավ ինքնիշխանության վերջնական նպատակ:

¹ *Watson, Burton*, Basic Writings of Mo Tzu, Hsün Tzu, and Han Fei Tzu (New York: Columbia University Press, 1967), pp. 9-10.

² Մեն Ցզի (մ.թ.ա. 372-289թթ.) - չին փիլիսոփա, կոնֆուցիական դպրոցի ներկայացուցիչ:

³ *Loewe, Michael*, “The Concept of Sovereignty,” in *The Cambridge History of China Vol. 1*, by Twitchett, Denis and Michael Loewe eds. (New York: Cambridge University Press, 1990).

Կառավարիչները չպետք է վստահեն որևէ մեկին և չեն կարող լինել պարզ և սովորական իրենց ենթակաների համար: Փոխարենը, օգտագործելով կոշտ օրենքներ, որոնք մարդկային են և մաքուր գործիք են իշխանությունում, իշխանը պետք է մանրի ժողովրդի շրջանում՝ իշխանության պահպանման համար¹:

Իրավական իշխանության հասկացությունը յուրահատուկ է և կիրառված օրենքներով ունի բազմաթիվ նմանություններ տոտալիտար ռեժիմի հետ, ինչպիսին էր Մաո Ցզեդունի ժամանակաշրջանի Չինաստանը (1949-1976թթ.): Օրենքը (*fa 法*) օրինապաշտների կողմից ամրագրված մի շարք կանոնների համակցությունն է, և հասարակության յուրաքանչյուր անդամ, բացառությամբ կառավարչի, պարտավոր է ենթարկվել այդ օրենքներին, հակառակ դեպքում խստագույն պատժամիջոցներ կկիրառվեն:

Կարելի է պնդել, որ Չինաստանի քաղաքական ավանդույթում կոնֆուցիուսական գաղափարախոսությունը էության աղբյուր է, մինչդեռ օրինապաշտության փիլիսոփայությունը Չինաստանի կայսերական քաղաքական բարդ համակարգ է ներկայացնում: Օրինակ, չինական հինավուրց հասարակությանն օրինապաշտները առաջին անգամ ներկայացրին հետևյալ գաղափարները. իրավունքի և ոչ թե օրենքի գերակայություն, իսկ օրենքի գերակայությունը և դատական համակարգը չինական կայսրությունում հիմնված էր իրավաբանների փիլիսոփայության վրա, որը պահանջում է, որպեսզի օրենք ստեղծվի և օգտագործվի կառավարչի կողմից և ոչ մի կերպ չկիրառվի նրա դեմ:

Բացարձակ ուժի կիրառումը կազմում է կառավարական իշխանության հիմքը, հետևաբար՝ նրա օրենքի արդյունավետությունը. կոնֆուցիականության հայտնի քաղաքական գաղափարախոսությունը ծառայում է այդ օրենքների իմպերիալիստական հիմնավորմանը: Հետևաբար, պարադոքսալ երևույթ է, որ բոլոր միապետերը՝ մինչև ներկայիս Չինաստանի ղեկավարները, օգտագործում են ներդաշնակ հասարակության կոնֆուցիական իդեալները: («Ներդաշնակ հասարակություն»-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախկին նախագահ Հու Մինթաոյի կողմից ստեղծված հիմնական փիլիսոփայությունն է՝ որպես հիմնասյուն իր կատարած գործողություններին օրինականություն հաղորդելու համար, որոնք մեծ մասամբ հիմնված էին իշխանության օգտագործման և մանիպուլյացիայի վրա): Մակայն պետք է նշել, որ որոշ տեսաբաններ կարծում են, թե իշխանության քա-

¹ *Hucker, Charles, O., China's Imperial Past (Stanford: Stanford University Press, 1975), pp. 94-95.*

ղաքականության հարցում Չինաստանի կառավարիչները (Ցինի ժամանակներից ի վեր) իրավաբանների փիլիսոփայությունը միշտ օգտագործել են հաշվենկատ, ցինիկ և երբեմն անգամ անբարո եղանակով:

Կառավարության կազմակերպումը Չինաստանի առաջին կայսրությունից ի վեր (մ.թ.ա. 221թ.) հիմնականում պահպանել է իր ձևը: Առանցքային կետը, որն անհրաժեշտ է հասկանալ, կառավարության այն բրգաձև կառուցվածքն է, որն ընդհանուր առմամբ բաժանված է կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այս համակարգը գործում է նաև այսօր): Կայսրը/կառավարիչը կենտրոնական իշխանության հիմքն է և ղեկավարը, ունի ամենաբարձր դիրքը կենտրոնական կառավարությունում: Մեկնաբանվում է, որ կայսրին/կառավարչին իշխանությունը ոչ երկրային մարմնի կողմից է տրվել, այս համոզմամբ կարծես օրինականացվում էին կայսեր/կառավարչի կողմից իրականացված բոլոր գործողությունները: Այս համոզմունքը կայսրին տալիս էր բացարձակ հնազանդության և նվիրվածության պահանջ սոցիալական հասարակության յուրաքանչյուր անհատից: Այնուամենայնիվ, կա մի բան, որ Չինաստանում բոլոր դինաստիաների հիմնադրումը եղել է արդյունք քաղաքացիական պատերազմի կամ օտարերկրյա արշավանքների, իսկ կայսրը միշտ եղել է այն միակ հաղթողը, որը ոչնչացրել է ուրիշներին, դիմադրել և պաշտպանել երկիրը:

Համաշխարհային կարգի/աշխարհակարգի վերաբերյալ չինական տեսակետը կարելի է ամփոփել *Tianxia* 天下 բառով և այս բառի բացատրությամբ: Չինական տեսանկյունից *Tianxia* 天下 (այն ամենն, ինչ կա երկնքի տակ, այսինքն՝ երկրի վրա) ներկայացնում է միայն քաղաքակիրթ բնակչությանը պատկանող ունիվերսալ արժեքների համակցություն, այսինքն՝ չինական քաղաքակրթությունը): Արևմուտքում *Tianxia* բառը թարգմանվել է պարզապես կայսրություն բառի հետ նույն համատեքստում: Այնուամենայնիվ, կայսրության գաղափարը և խոսքը գալիս են Հռոմեական կայսրությունից, ինչը չինացիները մեկնաբանում են որպես առաջին ուժ, որը գերիշխանության և ազդեցիկ վերահսկողության միջոցով է հաստատել և իրականացրել իր իշխանությունը¹: Այդ պատճառով Չինաստանում *Tianxia* տերմինի հետ կարելի է ասոցացնել մի քանի տարբեր երևույթներ՝ պատմական փաստեր, փիլիսոփայական խոհեր, քաղաքական զարգացումներ և այլն: Այլ կերպ ասած՝ *Tianxia*-ն կարելի է մեկնաբանել որպես

¹ Wang, Gongwu, “Tianxia and Empire: External Chinese Perspectives”, Inaugural Tsai Lecture, Harvard University (May), 2006.

չինական մշակույթի հիմնական էություն: Օրինակ, *Tianxia*-ն հիշեցնում է, թե երբ առաջին կայսրը միավորեց Չինաստանը: Այս իրողությունը նկարագրելու համար կիրառվել է չորս գաղափարախոսություն, Թիանսիա Յիտոնգ (天下一统), որը նշանակում է աշխարհի միավորում:

Այնուամենայնիվ, բացի նվաճման եզրույթից, դժվար է առանձնացնել *Tianxia*-ն չինական համընդհանուր՝ կայսրության գաղափարից, որը ներառում է ունիվերսալիզմ, տիեզերագիտություն, բարձրագույն բարոյական իշխանություն և օրինականություն, որը կառավարում էին կատարված գործողություններով և ղեկավարում էին իշխանությունը քաղաքակիրթ աշխարհում¹: *Tianxia*-ի պաշտոնական թարգմանությունը ժամանակակից չինարենի բառարանում հետևյալն է. «երկիր/հող երկնքի տակ» կամ թագավորություն; աշխարհ; Չինաստան; բայց Թիանսիանին տրվում է նաև հետևյալ նշանակությունը՝ իշխանություն և գերակայություն²: Հատկանշական է, որ *Tianxia*-ն Չինաստանում թարգմանվում է «աշխարհ» և «Չինաստան» միևնույն ժամանակ: Սա հնարավոր է դարձել միասնական Չինաստանի հազարամյակների յուրօրինակ սկզբունքի, աշխարհում Չինաստանի բացառիկ կենտրոնական դիրքի շնորհիվ, որպես բացառիկ քաղաքակրթության անկրկնելի ձև: Չին յուրաքանչյուր պատմաբան կամ պարզապես անհատ, ով ուսումնասիրել է պատմությունը, կրթվել է *Tianxia*-ի այս բարդ համակարգով:

Հասարակության կողմից առանց *Tianxia*-ի նկատմամբ այսպիսի գնահատանքի և խոր հարգանքի, ստորինից մինչև վերին խավ, հավանաբար, այն չէր դառնա Չինաստանի կառավարման նման հզոր մոդել: Այլ կերպ ասած՝ *Tianxia*-ն խորհրդանշում էր, այսօր էլ խորհրդանշում է յուրաքանչյուր չինական ընտանիքի ղեկավարի՝ ավտորիտար իշխանությունից բխող գնահատականների շարք, լեզվափոխություն, որ հայեցակարգը փոխանցվում է դինաստիական հաջորդականությամբ, օրենքների կառավարում, որով հասարակության կազմակերպում ու յուրօրինակ Միջին թագավորության յուրաքանչյուր անդամի մտածելակերպ է ձևավորում:

Անհնար է հասկանալ նման կառուցվածք և մտածողություն ունեցող ժողովրդի աշխարհընկալումն առանց անդրադառնալու միջազգային տերմինների կամ եզրույթների նրանց մեկնաբանմանը: Դասական չինարենը գեղեցիկ, խառնիճաղանջ, բազմաթիվ ու բազմիմաստ արտահայտությունների հսկա «օվկիանոս» է:

¹ Նույն տեղում:

² *Yuan Ling, XiandaiHanyuCidian, The Contemporary Chinese Dictionary, ChineseEnglish Edition (Beijing: Foreign Language Teaching and Research Press, 2002), p. 1894.*

Աշխարհը նրանց երկիրը կոչում է Չինաստան (*China*), իսկ ահա իրենք իրենց երկիրը կոչում են *Zhongguo* 中国: Սակայն, մասնավորապես, «中国» տերմինի դեպքում պարզապես անհրաժեշտ է իմանալ, որ այն ունեցել է տարբեր նշանակություններ պատմության տարբեր ժամանակաշրջաններում:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ են չինացիներն իրենց երկիրը կոչում *Zhongguo* 中国 կամ «կենտրոնական ազգ/երկիր»: 中国 բառն առաջին անգամ հայտնվել է «Ցզունի» բրոնզե ամանների վրա Արևմտյան Չժոու դինաստիայի ժամանակ (մ.թ.ա. 11-րդ դար): Այս բառը նշանակում է «միջին թագավորություն» կամ կենտրոնական թագավորություն: Բայց վերոգրյալը չի վերաբերում ամբողջ Ասիային, խոսքն այստեղ Լոյանի ավագանի տարածքի մասին է: Այսպիսով, ուսումնասիրելով հայտնի «տարածաշրջանը», երբ այս արտահայտությունն առաջին անգամ ի հայտ եկավ, նրանք (չինացիները) ինչ-որ իրադարձությունների կենտրոնում էին գտնվում:

Սակայն, կարելի է ենթադրել, որ «կենտրոնական արքայության» գաղափարը շատ ավելի մեծ նշանակություն ունի միջնադարյան վարդապետության մեջ, քան այն, որ Չինաստանը «աշխարհագրորեն ճանաչված աշխարհի» կենտրոնն է: Ավանդական չինական փիլիսոփայությունը համարում է, որ կենտրոնը լավագույնն է: 中(միջին/կենտրոն) բառը նաև նշանակում է ուղղափառ, լեզվիտիվություն, հավասարակշռություն և արդարություն: Կենտրոնում մարդիկ են՝ նրանք, ովքեր կրում են երկնքի կողմից տրված իշխանություն: Այլ կերպ ասած՝ 中国 նշանակում է նաև արդարության և իշխանության կիրառում «արտաքին շրջանակում» գտնվող երկրների նկատմամբ, որոնց սկզբնական շրջանում անվանում էին 4 բարբարոսներ (四夷): Այնուամենայնիվ, *Tianxia* 天下 բառի ռուսերեն թարգմանությունը՝ «Поднебесная», առավելապես նկարագրում է թե՛ չինացիների, թե՛ աշխարհի ընկալումը Չինաստանի նկատմամբ: Այն ամենը, ինչ գտնվում է երկնքի տակ:

«Չինաստանը չի զբաղվում այլ պետություններին իր հավատքը ներարկելով: Չինաստանն առհասարակ չի հավատում, որ իր համակարգը կարող է ուժ ունենալ իր սահմաններից դուրս: Բայց նա հանդիսանում է «Միջին պետության» ավանդույթների իրավահաջորդը՝ կազմելով այլ երկրների մասին իր սեփական կարծիքը, որը կապված է նաև Չինաստանի նկատմամբ այդ երկրների վասալային կախվածության մակարդակից»¹:

Հուլիս, 2018թ.

¹ Генри Киссинджер, О Китае, Москва, 2014г., с. 12.

**ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՉԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑԱՑՔԱՅԻՆ
ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Լիանա Անանյան

Ամփոփագիր

Հետազոտությունը նվիրված է աշխարհակարգի չինական աշխարհայացքային պատկերացման հարցին: Ներկայացվում են չինական փիլիսոփայական հիմնական ուղղությունները, որոնք չինական աշխարհընկալման համար դարձել են հիմք քաղաքական մտքի և իդեալների ձևավորման հարցում: Ուսումնասիրության առարկա են հանդիսացել հատկապես փիլիսոփայական երեք հիմնական ուղղություններ, որոնք չինական քաղաքական մտքի ձևավորման գործում կարևորագույն տեղն ունեն: Լուսաբանվել են դաոիզմի, կոնֆուցիականության և լեգալիզմի յուրահատկությունները: Անդրադարձ է կատարվել նաև չինարեն մի շարք եզրույթների բացատրությանը՝ առավել ակներև դարձնելու համար չինական աշխարհակարգի ընկալման առանձնահատկությունները:

О КИТАЙСКОМ ПОНИМАНИИ МИРОПОРЯДКА

Лиана Ананиян

Резюме

Исследование посвящено китайскому мировоззрению относительно мирового порядка. Представлены китайские философские ориентиры, которые стали основой китайского мировоззрения при формулировании политической мысли и идеалов. Предметом исследования была, в частности, философия трех основных направлений, которые имеют важнейшее значение для формирования политической мысли Китая. Раскрыты особенности даосизма, конфуцианства и легализма. В статье также представлено объяснение ряда китайских терминов, в частности для представления особенностей китайского восприятия миропорядка.

**ON THE ISSUE OF THE CHINESE
UNDERSTANDING OF THE WORLD ORDER**

Liana Ananyan

Resume

The research addresses the Chinese worldview of the world order. The main Chinese philosophical movements are presented in this article, which have become a basis for the Chinese worldview in formulating political thought and ideals. The subject of the study particularly involves the three main directions of philosophy that are crucial in shaping the Chinese political thought. Peculiarities of Daoism, Confucianism and Legalism are covered. The article explains a number of Chinese terms, in order to make evident the perception specifics of the Chinese world order.

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՍՏՄ-ՈՒՄ

Արամ Լ. Թավադյան՝

Բանալի բառեր՝ ԵՍՏՄ, հարկային օրենսդրություն, եկամտահարկ, շահութահարկ, ԱԱՀ:

Հարկային քաղաքականությունն այն ոլորտներից է, որն անմիջապես ազդում է ինչպես ներքին շուկայի, այնպես էլ ինտեգրացիոն գործընթացների վրա: ԵՍՏՄ երկրների տնտեսության կառուցվածքի տարբերությունը հարկային օրենսդրության և վարչարարության տարբերության պատճառներից մեկն է: Որպեսզի այդ տարբերությունները չբերեն էական ոչ հավասար պայմանների ապրանքների հարկման ժամանակ, ԵՍՏՄ պայմանագրում ձևավորվել է հետևյալ հիմնական սկզբունքը. այն երկրում, որտեղ իրականացվում է ԵՍՏՄ անդամ այլ երկրների ապրանքների հարկումը, այն պետք է հավասարազոր լինի նմանատիպ ապրանքների հարկմանը, որոնք արտադրվել են տվյալ տարածքում [1]: Դա կարգավորվում է նաև մաքսատուրքերի չկիրառմամբ: Ձևավորվում է հավաքագրված մաքսատուրքերի ընդհանուր բյուջե, որից Հայաստանի Հանրապետության մասնաբաժինը կազմում է 1.13%: Ստացված գումարը, ի դեպ, գերազանցում է մինչև ԵՍՏՄ անդամակցությունը ստացված մաքսատուրքը:

Հարկերի, մասնավորապես ուղղակի հարկերի դրույքաչափերը ձևավորվել են՝ ելնելով երկրների տնտեսության կառուցվածքից, զարգացման հնարավորություններից և փաստացի տարբերությունն են ստեղծում տվյալ երկրում այլ երկրների ձեռներեցության համեմատ: *Գծագիր 1*-ում ներկայացված են ԵՍՏՄ երկրների եկամտահարկի և սոցիալական վճարների դրույքաչափերը:


Հայաստանում ԵՍՏՄ երկրների համեմատությամբ եկամտահարկը ամենամեծն է, սակայն նրա մեջ 2017 թվականից նաև ներառված են սոցիալական վճարները, որոնք կազմում էին 20%: Հայաստանում կիրառվում է եկամտահարկի 3 դրույքաչափ՝ 23% (մինչև 150 հազար դրամ), 28% (150

¹ Մտորենացու անվան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող:

հազար դրամից մինչև 2 մլն դրամ), 36% (2 մլն դրամից ավելի): Այստեղ նախատեսվում է հարկային վարչարարության էլ ավելի պարզեցում՝ եկամտահարկի միասնական դրույքաչափի ձևավորում 23%-ի չափով:


Գծագիր 1

ԵԱՏՄ երկրների եկամտահարկի և սոցիալական վճարների հիմնական դրույքաչափերը



Գծագիր 2

Շահութահարկի հիմնական դրույքաչափերը ԵԱՏՄ երկրներում



Ռուսաստանում և Բելառուսում եկամտահարկի հիմնական դրույքաչափը կազմում է 13%, իսկ սոցիալական ապահովագրության վճարները, համապատասխանաբար՝ 30% և 35%: Ամենաբարենպաստ պայմանները Ղազախստանում են, որտեղ եկամտահարկը կազմում է 10%, իսկ սոցիալական ապահովագրության վճարները՝ 11% [2-6]:

Շահութահարկը ԵԱՏՄ բոլոր տնտեսություններում գրեթե համազոր է՝ կազմելով Ռուսաստանի, Հայաստանի, Ղազախստանի և Ղրղզստանի համար 20%, իսկ Բելառուսի՝ 18%: Որոշակի առավելություն տնտեսվարողներն այս հարցում ունեն Բելառուսում: Այս ցուցանիշի հավասարությունը բիզնեսի համահարթեցման տեսանկյունից դյուրին է: Փաստացի Ռուսաստանում և Բելառուսում ուղղակի հարկային վճարներն ավելի մեծ են, քան Հայաստանում: Ուղղակի հարկման տեսանկյունից բիզնեսի համար նպաստավոր են Ղազախստանի պայմանները:

Միջազգային տնտեսական ինտեգրացիոն զարգացումների ժամանակ ինտեգրացիոն միավորումների ձևավորման գործընթացն, առաջին հերթին, կարևորում է անուղղակի հարկերի մասին օրենսդրության համապատասխանեցման և ընդհանրացման գործընթացը, քանի որ անուղղակի հարկերն ունեն մեծ ազդեցություն ապրանքների գների ձևավորման վրա, ինչպես նաև ապահովում են բյուջեի հարկային եկամուտների հիմնական մուտքերը:

ԵԱՏՄ երկրներում առկա են տարբերություններ ինչպես ավելացված արժեքի հարկի, այնպես էլ ակցիզային հարկի առումով: Անուղղակի հարկերն առանցքային ազդեցություն ունեն ինտեգրացիոն գործընթացների վրա ԵԱՏՄ բոլոր տնտեսվարողների համար հավասար պայմաններ ստեղծելու տեսանկյունից: Անուղղակի հարկերի հարկման խնդիրը հստակ լուծված է ԵԱՏՄ պայմանագրում:


ԵԱՏՄ պայմանագրի 71 և 72-րդ հոդվածներով սահմանվում են, համապատասխանաբար՝ հարկման ոլորտում անդամ պետությունների փոխգործակցության և անդամ պետությունների անուղղակի հարկերի գանձման սկզբունքները, որոնց հիման վրա կազմված է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 18-րդ արձանագրությունը:

Ներկայացնենք անուղղակի հարկերի դրույքաչափերը (տե՛ս *Գծազիր 3*) և գանձման կարգն ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ ԵԱՏՄ անդամ երկրների համար: Մի անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք ապրանքներ արտահանելու դեպքում հարկատուի կողմից, որի տարածքից դուրս են բերվել ապրանքները, կի-

րառվում են ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գրոյական դրույքաչափի և ակցիզների վճարից ազատում՝ նախատեսված փաստաթղթերը հարկային մարմին ներկայացնելու դեպքում: Անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք ապրանքների արտահանման դեպքում հարկ վճարողն իրավունք ունի հարկի նվազեցում (հաշվանցում) իրականացնելու անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգին համանման ձևով, որը կիրառվում է անդամ պետության տարածքից միության սահմաններից դուրս արտահանված ապրանքների առնչությամբ: Մի անդամ պետության հարկ վճարողի կողմից մեկ այլ անդամ պետության հարկ վճարողին ապրանքներ իրացնելու դեպքում, եթե ապրանքի փոխադրումն սկսվել է միության սահմաններից դուրս և ավարտվել այլ անդամ պետությունում, ապրանքի իրացման վայր է ճանաչվում այն անդամ պետության տարածքը, որի տարածքում ապրանքը ձևակերպվել է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Գծագիր 3

Անուղղակի հարկերի հիմնական դրույքաչափերը ԵԱՏՄ երկրներում



Հաշվի առնելով ԵԱՏՄ պայմանագիրը և դրա շրջանակներում փոխհարաբերություններն անդամ երկրների միջև, Հայաստանում կատարվել են մի շարք հարկային օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես՝ «Ավելացված արժեքի մասին» օրենքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ ապրանքների արտահանման, ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստա-

նի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված անձանց կողմից ԵԱՏՄ տարածքում այլ՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված անձանց ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով, 2014թ. մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» թիվ 18 հավելվածով ներկայացված արձանագրությամբ:

Անուղղակի հարկերի վճարման և հաշվարկման կարգի պարզեցման մեջ առկա ձեռքբերումներից կարելի է նշել.

- ըստ նշանակման երկրի սկզբունքով ԱԱՀ գանձման իրականացումը, ինչը ենթադրում է արտահանման ԱԱՀ գրոյական դրույք և ներմուծող երկրի կողմի ԱԱՀ գանձում,
- ներմուծվող ապրանքների անուղղակի հարկերի չգերազանցումը ներքին արտադրության համանման ապրանքների անուղղակի հարկերին,
- սկզբիզմերի նվազագույն դրույքաչափերի ձևավորումը,
- անուղղակի հարկերի բնագավառում հարկային վարչարարության սկզբունքների կարգավորումը:

Հարկային և մաքսային խոչընդոտների վերջնական վերացման և չեզոքացման համար նպաստավոր են հարկային դրույքների մոտեցումը, հարկային բազայի կարգավորումը և փաստաթղթային համակարգի նույնականացումը: Մակայն ԵԱՏՄ երկրների եկամուտների կառուցվածքի տարբերությունն այդ գործընթացը որոշակիորեն սահմանափակում է: Օրինակ, ԵԱՏՄ երկրներում ԱԱՀ-ն ամենամեծ տեսակարար կշիռն ունի Հայաստանում՝ այլ հարկերի համեմատ (տե՛ս *Աղյուսակ 1*):

Ավելացված արժեքի հարկի դրույքաչափը ԵԱՏՄ երկրներում ամենաբարձրն է Հայաստանում և Ղրղզստանում (Բելառուսում կիրառվում է նաև 10% դրույքաչափը): Մակայն արտահանման տեսանկյունից դա խոչընդոտ չի հանդիսանում, քանզի ԵԱՏՄ-ում արտահանողները ԱԱՀ-ն վճարում են ներմուծող երկրում: Փաստացի ավելի ցածր դրույքաչափ վճարելն այս դեպքում չափազանց կարևոր է փոքր տնտեսություն ունեցող երկրի

համար, քանզի արտահանումն առանցքային դեր ունի այդ կարգի տնտեսությունների համար:

Աղյուսակ 1

ԵԱՏՄ երկրների եկամուտների կառուցվածքը¹

	ՌԴ	ՀՀ	ԲՀ	ՂՀ
Եկամուտներ	100.0	100.0	100.0	100.0
շահութահարկ	9.0	9.1	8.4	15.3
եկամտահարկ	10.2	26.9	17.7	7.3
ավելացված արժեքի հարկ	14.9	38.7	37.3	19.6
ակցիզային հարկ	3.6	4.4	11.9	0.7
մաքսատուրք	20.7	4.3	10.1	12.0
այլ եկամուտներ	41.6	16.7	14.6	45.2

Եթե արտահանողների համար 20% ԱԱՀ-ն էական դեր չունի իրենց գործունեությունում, ապա ներքին շուկայում սպառվող ապրանքների համար դա իր ազդեցությունն ունի: Պետք է նշել, որ այդ դրույքաչափը Հայաստանում առայժմ նվազեցնելու հնարավորություն առկա չէ, քանզի այն կազմում է մեր եկամուտների գերակշիռ մասը՝ 38%, բացի դրանից, ունի որոշակի զսպող դեր առևտրային հաշվեկշռի վատթարացման տեսանկյունից: Նախատեսվում են նաև եկամտահարկի պարզեցում և փաստացի դրույքաչափի կրճատում, ինչը նույնպես սահմանափակում է ԱԱՀ նվազեցումը:

Նոյեմբեր, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Договор о Евразийском экономическом союзе.
2. Закон об основах налоговой системы в Российской Федерации.
3. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք:
4. Налоговый кодекс Республики Беларусь.
5. Кодекс Республики Казахстан о налогах и других обязательных платежах в бюджет.
6. Налоговый кодекс Кыргызской Республики.

¹ Աղյուսակը կազմվել է ԵԱՏՄ երկրների վիճակագրական տվյալների հիման վրա:

**ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՍՏՄ-ՈՒՄ**

Արամ Լ. Թավադյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված են հարկային օրենսդրության ուղղակի և անուղղակի հարկերը ԵԱՏՄ երկրներում: Վերլուծված են միության պետությունների անուղղակի հարկերի հարկման և համաձայնեցման սկզբունքները: Նշված են հարկային համակարգի բարելավման որոշակի հնարավորությունները Հայաստանում:

ОСОБЕННОСТИ НАЛОГОВОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА ЕАЭС

Арам Тавадян

Резюме

В статье представлены прямые и косвенные налоги налогового законодательства стран ЕАЭС. Проанализированы косвенные налоги и принципы их согласования в странах Союза. Отмечен ряд возможностей совершенствования налогового законодательства в Армении.

FEATURES OF THE TAX LEGISLATION OF THE EAEU

Aram L. Tavadyan

Resume

The article presents direct and indirect taxes of the tax legislation of the EAEU countries. The indirect taxes and the principles of their coordination in the countries of the Union are analyzed. The article presents a number of various opportunities for improving tax legislation in Armenia.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԵՎ ԻԳՈՐ ՍՈՒՐԱՂՅԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իրինա Բարսեղյան-Կրպեյան՝

Բանալի բառեր՝ ազգային-ազատագրական պայքար, Ղարաբաղյան շարժում, ցուցարար, Գետաշեն, գորբաչովյան վերակառուցում:

Գորբաչովյան «վերակառուցման» ընթացքում սկսվեց հայ ազգային-ազատագրական պայքարի նորագույն փուլը՝ Ղարաբաղյան շարժումը: Խորհրդային տարիներին մի քանի անգամ բարձրացված, սակայն լուծում չստացած արցախյան հիմնահարցը, որի առանցքը Մայր Հայաստանին վերամիավորվելու արցախահայության արդար պահանջն էր, ոտքի հանեց հայ մտավորականության ստվար հատվածին, ապա ողջ ժողովրդին: Սկզբում գաղտնի, այնուհետև՝ բացահայտ ժողովրդական պայքարն ուղղված էր 70-ամյա վաղեմության ազգամիջյան հարաբերությունների ոլորտում խորհրդային իշխանության բացթողումներն ու կատարած սխալները շտկելուն, ոտնահարված ազգային արժանապատվությունը վերականգնելուն, հայրենի հողն ու հայրենակիցների պատիվը պաշտպանելուն:

1985 թվականից ՀԽՍՀ-ում, ԼՂԻՄ-ում և Ադրբեջանի հայաբնակ շրջաններում ընդհատակում գործող փոքր խմբերի միջոցով ծավալվում էր Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու նախապատրաստական գաղափարական-քարոզչական շարժումը՝ ճշմարտացիորեն լուսաբանելով արցախյան հիմնահարցի խեղաթյուրված պատմությունը, ըստ այդմ՝ բարձրացնելով հասարակության իրազեկվածության մակարդակը, գտնելով համախոհներ, հայթայթելով դրամական միջոցներ՝ պայքարին նոր թափ հաղորդելու, հայրենակիցների ֆիզիկական անվտանգությունը պաշտպանելու համար զենք-զինամթերք ձեռք բերելու նպատակով: Առաջադեմ գաղափարներով և Հայ դատի խնդիրներով մտահոգ երիտասարդությունը և ուսանողությունը նույնպես ներգրավվում էին ընդհատակյա պայքարում: Ազատագրական շարժման համաժողովրդական ալիքը հետզ-

¹ Պատմ. գ. թ.:

հետե ընդգրկում էր Ադրբեջանական ԽՍՀ-ում անօրինականորեն հայտնված հայաբնակ շրջանների, ներառյալ՝ Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի բնակչությանը:

Ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնած, Ղարաբաղյան պատերազմի մասնակից, Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության կազմակերպիչ և ընդհանուր հրամանատար, հետմահու Հայաստանի ազգային հերոս, «Հայրենիք» շքանշանի ասպետ (20. 02. 1996թ.), Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող Թաթուլ Կրպեյանը «Միացում» հասարակական կազմակերպության անդամ էր, զբաղվում էր զանգվածային երթերի, հանրահավաքների, նստացույցերի, դասադուլների կազմակերպմամբ, Հայ դատի քարոզչությամբ: Կազմակերպության ղեկավարը Ղարաբաղյան շարժման և «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր Իգոր Մուրադյանն էր, որն ահռելի դերակատարություն ունեցավ Ղարաբաղյան շարժման ընդհատակյա փուլի նախապատրաստման, ապա Ղարաբաղյան շարժման առաջին ամիսների հանրահավաքների, ցույցերի, գործադուլների կազմակերպման և «Ղարաբաղ» կոմիտեի կազմավորման գործում: Որպես ՀԽՍՀ պետպլանին կից էկոնոմիկայի և պլանավորման ինստիտուտի հատուկ տնտեսագիտական հետազոտությունների բաժնի ավագ գիտաշխատող՝ 1985 թվականից նա համակարգում էր Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթներ կազմելու և ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ներկայացնելու աշխատանքները:

Հայ ազգային-ազատագրական գաղափարներով տոգորված նվիրյալ երիտասարդները համախմբվում էին Իգոր Մուրադյանի շուրջ:

Թաթուլ Կրպեյանը և Իգոր Մուրադյանը ծանոթացան 1986թ.: ԵՊՀ պատմության ֆակուլտետի 22-ամյա ուսանող Թաթուլն անմիջապես գրավեց Իգոր Մուրադյանի ուշադրությունը, արժանացավ նրա վստահությանը՝ դառնալով նրա ամենամտերիմ անձանցից մեկը: Իգոր Մուրադյանն իր անձնական անվտանգությունը նույնպես վստահեց մարտարվեստների տիրապետող, բռնցքամարտում մրցանակների արժանացած երիտասարդին:

Իգոր Մուրադյանի խմբի անդամներ Աշոտ Եղիազարյանը և Արա Ալեքսանյանը, ինչպես նաև Թաթուլն ու տողերիս հեղինակը բնակվում էինք Նոր Նորքի երկրորդ զանգվածի ուսանողական հանրակացարանում. Աշոտն ու Արան՝ 6-րդ մասնաշենքում, մենք՝ 4-րդ:

15 հոգանոց խումբը գործում էր խիստ կանոնակարգված՝ աշխատանքի և գործառույթների հստակ բաժանումով: Իգոր Մուրադյանն իր թիմա-

կիցներին ընտրում էր ըստ գաղափարական կայունության, պայքարելու վճռականության, սկզբունքայնության, ամեն տեսակի դժվարություն հաղթահարելու, այդ թվում՝ բանտարկության, հալածանքների, հետապնդումների, նույնիսկ մահվան պատրաստակամությունը հաշվի առնելով:

Գիտական գործունեության ներքո քողարկված հանդիպումները և կազմակերպչական աշխատանքները, որոնք հիմնականում տեղի էին ունենում Իգորի աշխատավայրում կամ նրա տանը, ապահովեցին Ղարաբաղյան շարժման նախապատրաստական փուլի հաջող ընթացքը: Կազմակերպության անդամներն ստանում էին ցուցումներ և առաջադրանքներ, որոշում էին անհատական և համատեղ գործողությունների մարտավարությունը: Իգորի հետ է քննարկվել նաև առաջին արտատպված կամ արտագրված թռուցիկների, ինչպես նաև առաջին ցույցերն առաջնորդող պատահանների բովանդակությունը՝ սկզբում բնապահպանական, ապա քաղաքական Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու կոչերով: Տղաները հաճախ անքուն գիշերներ էին անցկացնում՝ թռուցիկներով պատելով քաղաքի տարբեր վայրերը, տարածելով ազգային, հեղափոխական բնույթի արգելված գրականություն:

Ի.Մուրադյանի ցուցումներով, նախանշված թիրախային խմբերի և վայրերի ընդգրկմամբ, կազմակերպվում են նաև առաջին ընդհատակյա ստորագրահավաքները: 1987թ. ապրիլից Մարտակերտի շրջկենտրոնում և գյուղերում Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով ստորագրություններ են հավաքվում¹: Իսկ 1987թ. օգոստոս-հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով անցկացված ոչ պաշտոնական հանրաքվեի ընթացքում հավաքված 80 հազար ստորագրությունները դարաբաղցիների պատվիրակության մոսկովյան առաջին այցի ժամանակ՝ 1987թ. նոյեմբերի 28-ին, ներկայացվեցին ԽՍՀՄ ղեկավարությանը²:

Թաթուլ Կրպեյանն ուսանողության շրջանում քարոզչություն իրականացնող Ղարաբաղյան շարժման երիտասարդական թևի սիրված առաջնորդներից էր: Ղարաբաղյան շարժման նախապատրաստական փուլին, որը բնորոշվում էր բնապահպանական՝ էկոլոգիական ուղղվածությամբ, մենք գործուն մասնակցություն ենք ունեցել: Այդտեղ բարձրացվում էին «Նաիրիտը», քիմիական այլ գործարաններ և ԱԷԿ-ը փակելու, օդի աղտոտվածությունը կանխարգելելու, հիվանդությունների ծավալը կրճատելու և այլ բնապահպանական, սոցիալական-առողջապահական բնույթի պահանջներ:

¹ «ԼՂ Հանրապետություն», 31.03.1998:

² Նույն տեղում, 22.01.1998:

Առաջին հանրահավաքները, որոնցում, բացի բնապահպանական կոչերից, առաջ քաշվեցին նաև քաղաքական պահանջներ, տեղի ունեցան 1987թ. աշնանը: Ղարաբաղի՝ Հայաստանին վերամիավորվելու քաղաքական պահանջն առաջին անգամ հնչեց հոկտեմբերի 18-ին՝ Իգոր Մուրադյանի գլխավորությամբ Երևանում կազմակերպված հանրահավաք-ցույցի ժամանակ: Ղարաբաղյան առաջին ցույցի կազմակերպիչներից էին նաև Թաթուլ Կրպեյանը, Աշոտ Եղիազարյանը, Արա Ալեքսանյանը, Արտակ Ստեփանյանը և ուրիշներ:

Ցուցարարների արդար բողոքը պայմանավորված էր Չարդախլու գյուղում աղբրեջանական իշխանությունների՝ ամիսներ տևած հակահայկական բռնություններով, որոնց զագաթնակետը հոկտեմբերի կեսին աղբրեջանական միլիցիայի 200 զինյալների հարձակումն էր հայկական գյուղի վրա:

Երևանյան առաջին ցույցերի պաստառները մեծ մասամբ գրվել են հանրակացարանային սենյակներում: Աշոտ Եղիազարյանը վերհիշում է. «Իգոր Մուրադյանի հետ նախապես ամեն ինչ մտածել էինք: Հանրակացարանում պատրաստեցինք պաստառները՝ ազատագրության, անկախության, էկոլոգիական անվտանգության կոչերով, ու Բաղրամյան պողոտայի ներքևից սկսեցինք բարձրանալ՝ ցուցադրելով նաև մինչ այդ թաքուն պահած Գորբաչովի նկարները, որոնց վրա ռուսերեն գրել էինք՝ «Ленин, Партия, Горбачев», որպեսզի դրանով ցույց տանք, որ վերակառուցման գաղափարները թույլ են տալիս հանդես գալ արդարության պահանջով, իսկ «Բարեկամություն» կայարանից իջնողները՝ Չարդախլուի դեպքերի մեղավորներին պատժելու կոչերով, միացան մեզ: Ստացվեց իսկական ցույց՝ մոտ 200 հոգի կլինեինք: Սկսեց անձրև տեղալ: Անվտանգության աշխատակիցները ցրեցին ցույցը՝ իլելով և պատռելով պաստառներն ու նկարները»¹:

Ցույցից հետո ՊԱԿ աշխատակիցները հսկողության տակ առան նաև Թ.Կրպեյանին: Մի քանի անգամ նկատելով իրեն հետևող անձանց և նրանցից դժվարությամբ խույս տալով՝ Թաթուլն ինձ նախագուշացրեց ավելի զգույշ և ուշադիր լինել հանրահավաքների ժամանակ: Մենք խորհրդակցում էինք միմյանց հետ, և ես նույնպես որոշ առաջադրանքներ էի ստանում՝ իմ կուրսեցիների և մտերիմների շրջանում քարոզչություն իրականացնել, տարատեսակ հայտարարություններ, արգելված գրականություն տարածել, ստորագրություններ հավաքել և այլն: Ընկերուհիներով մասնակցում էինք հանրահավաքներին, երթերին և նստացույցերին՝ մեր հա-

¹Նույն տեղում, էջ 87:

մեստ ներդրումն ունենալով համազգային հզոր շարժմանը: Թաթուլը հիմնականում հարթակի վրա էր՝ Բանախոսների կողքին, ես՝ ներքևում բազմության մեջ, սկզբում մի քանի հարյուրի, հետո՝ հազարների, ապա՝ մի քանի հարյուր հազարի հասնող ժողովրդական լայն զանգվածների հետ, որտեղ կարևոր էր յուրաքանչյուրի ներկայությունը, որովհետև անհրաժեշտ էր օրուգիշեր ապահովել համահայկական շարժման շարունակականությունը, անընդհատությունը, զանգվածայնությունը, ազգային պահանջատիրության կամքը և վճռականությունը:

Ղարաբաղյան շարժումը մեզ համար վերածնունդ և զարթոնք էր նշանակում: Հայությունն այդ օրերին մեկ դեմք ունեցող, համազգային միակամ մարմին էր, որը կարող էր ժամերով սոված կամ ծարավ քայլել, երգել կամ վանկարկել, կանգնել իրար սեղմված՝ անգամ ի վիճակի չլինելով որևէ շարժում կատարելու, բայց երբ անհրաժեշտ էր շտապօգնության մեքենայի մոտ հասցնել վատ ինքնազգացողությամբ որևէ ցուցարարի, անմիջապես, հրապարակի մի ծայրից մյուսը կես մետրանոց միջանցք բացել, միաժամանակ նստել ասֆալտին, միաժամանակ կանգնել, 10-20 հոգով միմյանց միջև կիսել մեկ հացը, նույն շրջից խմել մեկ կում այնպես, որ յուրաքանչյուրին հասնի, ինչով հնարավոր է օգտակար լինել՝ տնից հրապարակ տանելով անհրաժեշտ ամեն ինչ, քնել սառցապատ, թաց, ձյունոտ ասֆալտին՝ գլուխ գլխի անձանոթ մարդկանց հետ, հոգ տանել նրանց մասին, հուզվել և ուրախանալ նրանց համար՝ անգամ նրանց անունները չիմանալով: Շատերն այդպես էլ մնացին անձանոթներ, քանի որ կարևորը համազգային գաղափարներն ու նպատակներն էին, որոնք փարոս էին դարձել բոլորիս համար: Մենք լսում էինք հարթակին կանգնածներին, բայց կուրորեն չէինք կատարում նրանց հրահանգները, հավանություն էինք տալիս կամ մերժում ասվածը՝ դրական կամ բացասական բացականչություններով, հուզվում էինք միասին, ուրախանում միասին, աղբբեջանական հերթական հարձակման կամ բռնության մասին լսելով՝ ընդվզում միասին: Գիշերային նստացույցերի ժամանակ օրերով հերթապահում էինք օպերայի հրապարակում և Բաղրամյան պողոտայում, մասնակցում քայլարշավների՝ կոչ անելով միանալ շարժմանը և տարածում հայտարարություններ՝ իրազեկելով բնակչությանը:

Ազգային ինքնագիտակցության վերարթնացումը մղում էր որոշումներ ընդունելու ազգային շահի գերակայության ըմբռնումով: Հայ ժողովուրդն իր կամքն էր թելադրում կոմունիստական իշխանություններին:

Ղարաբաղյան շարժումը բացահայտում էր ճշմարիտ իրողություններ, որոնց մասին մենք, նաև ժողովրդի ստվար հատվածը, տեղյակ չէինք: Ավելի քան յոթ տասնամյակ խեղաթյուրված կեղծ իրականությունից շարժումը մեզ տեղափոխել էր նոր իրականություն, որի անունն անկախություն էր, իսկ խորհրդանիշը՝ Ազատության հրապարակը: Համենայն դեպս, իմ և Թաթուլի, ինչպես և անշահախնդրորեն շարժմանը միացած շատ-շատերի զգացողությունն այդպիսին էր, և մենք հավատում էինք դրան:

1987թ. դեկտեմբերի 20-ին Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքը նույնպես կազմակերպել էր «Միացում» հասարակական կազմակերպությունը: Օրակարգի գլխավոր թեման Ղարաբաղի խնդիրն էր: Հանրահավաքին մասնակցում էր ավելի քան հազար մարդ:

1988թ. Ղարաբաղյան շարժումն արդեն անշրջելի իրողություն էր և թափ էր հավաքում՝ ներառելով նոր ուժեր և հասարակական լայն շերտեր:

Իգոր Մուրադյանը Ղարաբաղյան շարժման ոգին էր, անփոխարինելի և անվերապահ առաջնորդը: Չնայած, հիմնականում, ելույթ էր ունենում ռուսերեն, փոքր-ինչ կակազելով, բայց մարդիկ կլանված էին նրանով, տպավորված նրա հոետորական և կազմակերպչական տաղանդով, սուր մտքի թռիչքով:

«Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր համագումարում, որը կայացավ մարտի 2-ին Հայաստանի գրողների միությունում, ձևավորվեց նորաստեղծ կոմիտեի կազմը՝ Իգոր Մուրադյան, Գագիկ Սաֆարյան, Մանվել Սարգսյան, ևս 6 գործիչ Ղարաբաղից, որոնց անունները չհրապարակվեցին: Թաթուլ Կրպեյանը նույնպես մասնակցում էր համագումարին: Իսկ մենք՝ հանրահավաքի մասնակիցներով, շունչներս պահած սպասում էինք որոշումների հրապարակմանը:

Մայիսի 19-ին Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքը վճռորոշ նշանակություն ունեցավ Ղարաբաղյան շարժման հետագա ընթացքի վրա: Իգոր Մուրադյանը լքեց «Ղարաբաղ» կոմիտեն՝ մյուս անդամների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով: Հիշում եմ, առաջին մեծ հիասթափությունն էր, որ շարժման մասնակիցներս ապրեցինք այդ օրերին: Նա՝ որպես առաջնորդ, կարողացել էր դառնալ ժողովրդական լայն զանգվածների սիրելի կերպարը, անհատ, որին հաջողվել էր սկզբնավորել, ուղղորդել և կառավարել ազգային-ազատագրական հզոր շարժումը: Նրան հարթակին չտեսնելով՝ մարդիկ հոգեբանորեն ճնշված էին, մի տեսակ կոտրված, և դա ակնհայտ էր: Թաթուլը նույնպես մտահոգ ու հիասթափված էր, սակայն լի էր գործելու աննկուն վճռականությամբ:

Քարոզչական գործունեությանը զուգահեռ երկու մարտական ընկերներն զբաղվում էին ինքնապաշտպանության կազմակերպչական հարցերով, որոնք նրանց գործունեության հիմնական ուղղություններն էին:

1988-89թթ. հայ բնակչության նկատմամբ տարատեսակ բռնի գործողություններ են կատարվում Ադրբեջանի հայաբնակ շրջաններում: Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի գյուղերը նույնպես անմասն չեն մնում՝ հայտնվելով տեղահանության վտանգի առջև:

1989թ. հոկտեմբեր-դեկտեմբերին Գետաշենի ենթաշրջանի գյուղերում չարտոնված հանրահավաքներ կազմակերպելու, «ազգային թշնամանք սերմանելու, բնակչության շրջանում ապատեղեկատվություն տարածելու, ազգային ու ռասայական իրավահավասարությունը՝ խաթարելու փորձերի և գործունեության համար դեկտեմբերի 14-ին ԽՍՀՄ ՆԳՆ աշխատակիցները ձերբակալեցին Իգոր Մուրադյանի օգնականին՝ «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստ Լ.Գ. Միրզոյանին¹, իսկ դեկտեմբերի 24-ին Երևանի իրենց բնակարաններում ձերբակալվեցին Իգոր Մուրադյանը, Բենիամին Միսյանը, Գուրգեն Ղուլղազարյանը: Նրանց վերաբերյալ կազմված քրեական գործերն ուղարկվեցին ԽՍՀՄ ՆԳՆ և ԽՍՀՄ դատախազության հատուկ քննչական խմբին՝ Ադր. ԽՍՀ Քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով: ԽՍՀՄ ՆԳՆ քրեական հետախուզության աշխատակից Վլադիմիր Բիբիշևի ուղեկցությամբ նրանց, որպես քրեական հանցագործների, տեղափոխեցին Կիրովաբադի բանտ՝ «առանց այդ մասին տեղեկացնելու Երևանի իրավապահ մարմիններին»², - գրում է Բ.Միսյանի կինը՝ Ռիտա Չիլինգարյանը: Բ.Միսյանին բաց թողեցին 1989թ. փետրվարի 2-ին, իսկ Ի.Մուրադյանին սկզբում տարան Բաքու, ապա Մոսկվա և 6 ամիս անց ազատ արձակեցին³:

Իգոր Մուրադյանին տեսակցելու, նրա հետ անմիջական կապ հաստատելու և օգնելու նպատակով 1989թ. մայիսին անձնական նախաձեռնությամբ Թաթուլ Կրպեյանը, Աշոտ Եղիազարյանը և Արա Ալեքսանյանը մեկնեցին Մոսկվա: «Ուզում էինք Իգորին տեսնել: Ռեֆերատներ գրեցինք, հավաքվեց 400 ռուբլի, նաև պրոֆմիությունից օգնեցին 80 ռուբլու չափով և մեկնեցինք», - պատմում են տղաները: Մեկ շաբաթ «Իզմայլովսկի» հյուրանոցում իջևանելով⁴ փորձում էին Թաթուլին ծանոթ, Աֆղանստանում ծառայած ռուս գնդա-

¹ Правда, 20.12.1988.

² Նույն տեղում, էջ 312-314:

³ Գարդմանք, հունիս, 1999, թ. 10, էջ 7:

⁴ Ի.Վ. Բարսեղյան-Կրպեյան, Թաթուլ Կրպեյան. Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությունը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., Երևան, 2016, էջ 29:

պետի միջոցով էլք գտնել Ի.Մուրադյանին հանդիպելու: Մի անգամ «Մատրոսակայա տիշինա» բանտի մոտ հերթական հերթապահության ժամանակ հանդիպեցին Իգորի մորը՝ Լյուբային, սակայն Իգորի հետ տեսակցելու ջանքերն ապարդյուն էին, և տղաները վերադարձան:

Թաթուլ Կրպեյանի նկատմամբ ՊԱԿ հսկողությունը հետզհետե ուժեղանում էր:

1989թ. հունվարի 20-ին Հայկ. ԽՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս.Հարությունյանը Հայկ. ԽՍՀ կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Օ.Լոբովին, տեղակալներ Գ.Գալոյանին, Տ.Դիլանյանին և Մ.Սերոբյանին հասցեագրված գաղտնի գրությամբ պահանջում է «...մտածել և առաջարկություններ կատարել «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստների գործունեության չեզոքացման ուղղությամբ»¹: Ի պատասխան, փետրվարի 9-ին Օ.Լոբովի անունից Կենտկոմ է ուղարկվում «Ղարաբաղ» կոմիտեի անդամների և Ղարաբաղյան շարժման ակտիվիստների ցուցակը, որտեղ «ԵՊՀ ուսանողներից և դասախոսներից «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ և ակտիվիստներ» ենթացուցակի 19-րդ կետում նշված էր Թաթուլ Կրպեյանի անունը²:

1989 թվականից ընդհատակում գործունեություն էր ծավալել նաև ՀՅԴ կուսակցությունը, որին անդամակցելը բազում երիտասարդների երազանքն էր: Կուսակցության գերիսնդիրն այդ ժամանակահատվածում Լեոնային Ղարաբաղի հայության ֆիզիկական անվտանգությունն ապահովելն էր, տեղում ինքնապաշտպանության կազմակերպումը: Թաթուլ Կրպեյանն օրեցօր ավելի էր հիասթափվում հանրահավաքներից՝ դրանք համարելով ժամանակի անիմաստ կորուստ, փողոցային խաղաղ պայքարը՝ անարդյունավետ միջոց, որովհետև Արցախում և Ադրբեջանի հայաբնակ շրջաններում հայությունը ենթարկվում էր ցեղասպանական գործողությունների, որոնց դիմագրավել հնարավոր էր միմիայն զինված պայքարով:

Նա սկսում է լրջորեն նախապատրաստվել Գետաշեն մեկնելու՝ ֆիզիկական և մարտական լրացուցիչ պատրաստություն տեսնելով, ձեռնարկելով քայլեր զենք-զինամթերք հայթայթելու, կամավորական ջոկատ հավաքագրելու ուղղությամբ:

1990թ. օգոստոսին Թաթուլ Կրպեյանը զինված ջոկատով մեկնեց Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղ, որտեղից էլ սեպտեմբերին անցավ Գետաշեն՝ որպես Գետաշենի ենթաշրջանի ինքնա-

¹Նույն տեղում, էջ 88:

²Նույն տեղում:

պաշտպանության կազմակերպիչ և ընդհանուր հրամանատար:

Երբ 1991թ. ապրիլի 30-ին խորհրդային բանակի և ադրբեջանական *օւժոնի* համատեղ իրականացրած «Օղակ» պետական ահաբեկչական գործողության ժամանակ Կրպեյանը զոհվեց՝ գործելով աննախադեպ հերոսություն՝ սպանդից փրկելով ավելի քան 3500 մարդու, Իգոր Մուրադյանն առաջիններից էր, որ լսելով Թաթուլի և մարտական ընկերների՝ Սիմոն Աչիբգոյանի, Արթուր Կարապետյանի, Հրաչ Դանիելյանի, Վալերի Նազարյանի զոհվելու լուրը, ուղղաթիռով անմիջապես հասավ Շահումյան, ապա ոտքով, անտառներով՝ Գետաշեն: Մայիսի 1-ին նա արդեն բանակցություններ էր վարում խորհրդային բանակի հրամանատարության հետ՝ պատանդների փոխանակման, զոհվածների և վիրավորների տեղափոխությունը կազմակերպելու և այլ հարցերով:

Մեր ընտանեկան արխիվի լուսանկարներից առանձնահատուկ նշանակություն ունի Թաթուլի՝ Գետաշենից բերած փաստաթղթերի ծալքերում գտնված Իգոր Մուրադյանի սև-սպիտակ լուսանկարը, որի անկյունում փոքրիկ մետաղյա խաչ է փակցված: Թաթուլը դրանից չէր բաժանվում, որովհետև թանկագին մասունք էր համարում: Այն այդպիսին էլ կմնա և կպահպանվի մեր արխիվում՝ որպես առհավատյա ազգային երկու մեծ գործիչների՝ Հայաստանի ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի և Ղարաբաղյան շարժման ու «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր Իգոր Մուրադյանի անքակտելի, անշահախնդիր ընկերության և համագործակցության:

Ամփոփելով, նշեմ, որ հողվածում ներկայացված հուշերը հրապարակվում են առաջին անգամ:

Մեպտեմբեր, 2018թ.

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐՇՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ
ԵՎ ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Իրինա Բարսեղյան-Կրպեյան

Ամփոփագիր

Ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնած, Ղարաբաղյան պատերազմի մասնակից, Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության կազմակերպիչ և ընդհանուր հրամանատար, հետմահու Հայաստանի ազգային հերոս, «Հայրենիք» շքանշանի ասպետ (20. 02. 1996թ.) Թաթուլ Կրպեյանը «Միացում»

հասարակական կազմակերպության անդամ էր, որի հիմնադիրն էր Ղարաբաղյան շարժման և «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր Իգոր Մուրադյանը: Գաղափարական, քաղաքական, ռազմական սերտ համագործակցությունից բացի նրանց միջև ձևավորվել էին ջերմ բարեկամական հարաբերություններ, որոնց մասին հիշողությունները հրապարակվում են առաջին անգամ:

ИЗ ИСТОРИИ ПОДГОТОВИТЕЛЬНОГО ЭТАПА КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ: СОТРУДНИЧЕСТВО ТАТУЛА КРПЕЯНА И ИГОРЯ МУРАДЯНА

Ирина Барсегян-Крпегян

Резюме

Татул Крпегян – стоящий у истоков Карабахского движения участник Карабахской войны, организатор и главнокомандующий самообороны Геташенского подрайона, Национальный герой Армении (посмертно, 20.09.1996), награжденный высшим орденом «Отечество», член общественной организации «Миатсум» («Объединение»), руководителем которого являлся основатель Карабахского движения и Карабахского комитета Игорь Мурадян.

Кроме тесного идеологического, политического, военного сотрудничества, между ними сформировались теплые дружеские отношения, воспоминания о которых публикуются впервые.

FROM THE KARABAKH MOVEMENT'S PREPARATORY STAGE HISTORY: THE COOPERATION OF TATUL KRPEYAN AND IGOR MURADYAN

Irina Barsegyan-Krpeyan

Resume

Tatul Krpeyan, participant of Karabakh movement and Karabakh war, the organizer and commander-in-chief of Getashen sub-region self-defense, National Hero of Armenia (awarded posthumously) and the bearer of the highest Order of Fatherland (20.09.1996), was a member of “Miatsum” public organization, led by Igor Muradyan, the founder of Karabakh movement and Karabakh Committee.

In addition to the close ideological, political and military cooperation, warm friendly relations were formed between them, the memories on which are published for the first time.

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 16.11.2018թ.
Թիվ 5 (81), 2018թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում